Ցավոք, այս և հարակից հարցերը մշտապես շաղկապվել են ուրարտական պետության անկման հիմնախնդիրներին՝ հայտնվելով յուրօրինակ գիտական փակ շրջանի մեջ: Մասամբ հենց հետազոտական այս մեթոդի պատճառով է, որ հայագիտությունը Պարույրի ինքնության և ժամանակի խնդիրներին մինչ օրս վերջնական պատասխան չի տվել: Ավելի լուրջ են աղբյուրագիտական հենքի

պակասից ծնվող դժվարությունները: Սակայն եթե ժամանակի ընթացքում աղբյուրները քանակական առումով չնչին չափով են ավելանում, դրանց նկատմամբ գիտական մոտեցումներն ավելի դինամիկ են փոփոխվում: Սույն հոդվածում մենք կանդրադառնանք վերոնշյալ հիմնախնդրի ուսումնասիրության աղբյուրագիտական բազային՝ ներկայացնելով նաև XVIII-XIX դդ. պատմագիտության ոլորտում դրա հետազոտական մոտեցումներն ու արդյունքները:

## 1.Աղբյուրագիտական հենքը

Հայկական թագավորության առաջացման վերաբերյալ աղբյուրագիտական դաշտը բաղկացած է Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և միջնադարյան հայ պատմիչներ Սեբեոսի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ուխտանեսի և Սամուել Անեցու հիշատակություններից ու Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկի տվյալներից: Սակայն այդ աղբյուրներից միայն առաջինների մոտ է խոսվում թագավորության առաջացման մասին, իսկ երկրորդում՝ գոյության[1]:

Հիմնախնդրի լուսաբանման առումով ուսումնասիրողների կողմից կարևորվել են հատկապես հայ մատենագիրների վկայությունները: Ընդ որում կարծրացած է այն պատկերացումը, որ Մովսես Խորենացուց հետո ապրած և իրենց «Պատմությունները» շարադրած մյուս հայ պատմիչները՝ Սեբեոսը, Թովմա Արծրունին, Հովհաննես Դրասխանակերտցին և այլք, իրենց պատմության նախաբանը կամ առաջին գլուխը, որտեղ շարադրվում է հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև նրանց ապրած ժամանակաշրջանը, օգտվել են Խորենացուց կամ ուղղակի կրկնօրինա-

[1] **Ցականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Երևան, 2018, էջ 184-198:

կել են նրան: Նյութի խորազնին ուսումնասիրության և պատմիչների հաղորդումների համադրման արդյունքում վերոհիշյալ կարծիքը չի հաստատվում[2]:

*1.1.* ***Մովսես Խորենացի***:

Խոսելով թագավորության առաջացման մասին՝ Պատմահայրը հիացմունքով նշում է. *«Եւ այժմ ահա զուարճացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասնելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան»*[3]:

Պատմահայրը Պարույրին անդրադառնում է երկու անգամ՝ նախ իր Հայոց արքաների *«ցուցակում»*, որտեղ Հայկ Նահապետից հետո նա 38-րդն է, ապա՝ բուն տեքստում:

Այսպես, Պատմահայր Մովսես Խորենացին արձանագրում է, որ Պարույրը՝ «**որդի Սկայորդւոյ**», հայկական ուժերի գլուխն անցած, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ասորեստանի դեմ պայքարում և հանդես բերած իր պատրաստակամության դիմաց շուտով Մարաստանի թագավոր Կիաքսարից (մ.թ.ա. 625-585 թթ.) ստանում է «թագավորության պատիվ և ձև». *«Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն ... զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն ցուեալ գպանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ:*

---

[2] **Ցականյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 185: **Նույնի՝** Армения от Хайка до Парнаваза: миф и реальность, Метаморфозы истории, 2018, № 12, стр. 127-147. **Նույնի՝** Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, ՎԷմ, 2017, № 4, էջ 230-239: **Նույնի՝** Թովմա Արծրունու նորբաբելոնյան արքայացանկը և նրա աղբյուրը, Էջմիածին, 2010, Երևան, էջ 61-62:

[3] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Ա, ԻԱ/ԻԲ:

*... Յինքն եւ զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք եւ ծեւ նմա խոսրանալով»*[4]:

Պատմահոր այս հիշատակությունը ուսումնասիրողների կողմից տարբեր գնահատականների է արժանացել: Սակայն մեկ բան փաստ է, որ, ըստ Խորենացու հիշատակության, Պարույրը հայկական թագավորության հիմնադիրն է: Որպես իր խոսքի հաստատում Պատմահայրը նշում է. *«Եւ զի արդարև զայնու ժամանակավ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա*[5] *մարգարե ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ ...: Եւ այս հաւասպի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակավ»*[6]:

Ինչպես տեսնում ենք, Պատմահայրը՝ որպես քրիստոնյա եպիսկոպոս, հենվելով աստվածաշնչյան հաղորդումների վրա, նույնպես ուներ լուրջ հիմքեր, որ տվյալ ժամանակաշրջանում իրոք թագավորություն գոյություն ուներ: Եվ բավական էր ժողովրդական բանահյուսությանը կցել Երեմիայի մարգարեությունը, որի արդյունքում ստացվեր Խորենացու գեղեցիկ ու անզուգական հիշատակությունը:

Պատմահայրը նույնիսկ անհրաժեշտ է համարել ցուցակի տեսքով ներկայացնել հայ թագավորների ցանկը: Հայ թագավորների *«ցուցակը»* գլխավորում է *«Պարոյր, որդի Սկայորդւոյ»*, որին Խորենացին անվանում է *«ի վարբակայ Մարէ պսակեալ»*, սրան հաջորդում են *Հրաչեայ, Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փառ(ւ)ոս, Միւս Հայկակ, Երուանդ Սակաւակեաց և Տիգրան* թագավորները: Այս թագավորներից Խորենացին խոսում է միայն երկուսի մասին՝ Պարույր Սկայորդու՝ որպես առաջին թագավորի և Տիգրանի մասին: Մնացածները հիշատակվում են միայն *«ցուցակում»*:

---

[4] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Ա, ԻԱ/ԻԲ:

[5] **Երեմիա**, 27-29, 51:

[6] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Ա, ԻԲ/ԻԳ:

*1.2.* ***Սեբեոս***:

Ժամանակագրորեն հաջորդ պատմիչը Սեբեոսն է, որի մոտ, սակայն, ոչ միայն խոսք չկա Պարույր Սկայորդու մասին, այլև Հայոց թագավորության առաջացման վերաբերյալ[7]: Սեբեոսյան պատումն էլ իր հերթին չի համընկնում Պատմահոր հիշատակությունների հետ[8]:

*1.3.* ***Մովսես Կաղանկատվացի***:

Մովսես Կաղանկատվացին VII դարի պատմիչ է: Նա իր «Աղվանաց աշխարհի պատմությունը» երկում անփոփոխ ներկայացնում է Մովսես Խորենացու ցանկը[9]:

*1.4.* ***Թովմա Արծրունի***:

Հիմնախնդրի առումով հաջորդ հայ պատմիչը IX-X դարերում ապրած Թովմա Արծրունին է: Պատմիչն արձանագրում է. «*Վարբակայ Մարի բարձեալ զիշխանութիւնն Ասորեստանեայց՝ զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ եւ թագապատիւ իշխանութեամբ մեծարեալ՝ պայ զօր բազում յօգնականութիւն, եւ դարձեալ հաստատէ զթագաւորութիւն Հայոց*»[10]:

---

[7] **Սեբէոս**, Պատմութիւն, աշխատասիրությամբ՝ Գ.Վ. Աբգարյանի, Երեվան, 1979:

[8] Մանրամասն տե՛ս **Ցականյան Ռ.**, Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, էջ 230-239:

[9] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2010, Ե, էջ 37:

[10] **Թովմա Արծրունի և Անանուն**, Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, գիրք Ա, Անթիլիաս, 2010, էջ 79: **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունը՝ Մ.Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, Ա, Դ, էջ 42:

Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու հիշատակությունների միջև տարբերությունները նույնպես ակնհայտ են: Թովմա Արծրունու մոտ հիշատակված չէ Պարույրի հոր անունը: Նա հանդես է գալիս տոհմանվամբ՝ *Հայկազն*: Բացի այդ, հետաքրքրականն այն է, որ, ըստ Խորենացու, Պարույրը դառնում է Հայոց առաջին թագավորը, այսինքն՝ հայկական թագավորության հիմնադիրը, մինչդեռ Թովմա Արծրունին Պարույրին չի ճանաչում որպես հայ առաջին թագավոր: Նրա հիշատակությունից («... **եւ դարձեալ հաստատէ զթագաւորութիւն Հայոց**») ակնհայտ է դառնում, թե ինչ է նկատի ունեցել պատմիչը: Այսինքն՝ ըստ Թովմա Արծրունու, Պարույրից դեռ առաջ գոյություն է ունեցել հայկական թագավորություն, որը ինչ-որ ժամանակ ու ինչ-որ պատճառով դադարել է գոյություն ունենալ: Հետագայում «Վարբակ»-Կիաքսարը Պարույրին մեծարել է թագով և կրկին վերականգնել Հայոց թագավորությունը: Այսինքն՝ պետություն որպես այդպիսին չի առաջացել, ինչպես հիշատակում է Պատմահայրը, այլև վերաճանաչվել է: Իսկ սրանք արդեն տարբեր բնույթի գործընթացներ են[11]:

### *1.5. **Հովհաննես Դրասխանակերտցի***:

Պարույրի վերաբերյալ շատ հետաքրքիր են Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակությունները: Թեև դրանց հիմքում ընկած են Մովսես Խորենացու հաղորդումները, այդուհանդերձ դրանք բավականին համահունչ են Թովմա Արծրունու պատումին: Դրասխանակերտցու մոտ ևս խոսքը ոչ թե Հայոց թագավորության հիմնադրման, այլ վեականգնման մասին է. «*Յեր ամենեցուն սոցա Պարոյր անուն՝ յազգէ Հայկայ. ասպանօր զանազգիսն ՚ի բաց լքեալ*

---

[11] **Ցականյան Ռ.**, Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում ..., էջ 193, 194:

*հերքեալ՝ եւ զնահապետութիւն ազգի իւրոյ վերսփին նորոգեալ պայազատէր: Սա ճոխաբար պսակի թագնկալութեամբ ընդ առաջին ՚ի Հայս. զի Վարբակէս գաւառով Մեդացի ՚ի քաջաց արանց բարեկամս իւր կազմեալ առատութեամբ բազկաւ, ընդ որս եւ զքաջն եւ զաջողակն մեր Պարոյր յինքն՝ ձեւ եւ շուք թագաւորութեան նմա դնէր եւ նոքօք հանդերձ յինքն գրաւեալ ՚ի Սարդանապաղայ զթագաւորութիւնն՝ փիրէ Ասորեստանի և Նինուէի»*[12]:

*1.6.* ***Ուխտանես:***

Ուխտանես եպիսկոպոսը X դարի պատմիչ է: Ուխտանեսը, Պարույրին անդրադառնալով, պարտադիր նշում է, որ հիշատակությունը հղված է ըստ Մովսես Խորենացու: Նա Պարույրին համարում է. «*... որ պսակեցաւ մեզ առաջին թագաւոր ի Վարբակայ*»[13]: Պատմիչի ամբողջական հիշատակությունը հետևյալն է՝ «*Թագաւորէ մեզ առաջին թագաւոր Պարոյր պսակեալ ի Վարբակայ ի Մարաց առաջին թագաւորէն՝ բազկակից իւր առնելով զմերն Պարոյր: Քանզի Վարբակէս գաւառաւ Մեդացի էր՝ ասէ մեզ սպուգաբանելով պատմագիրն Մովսէս, եւ խորամանկութեամբն իւրով փիրէ Ասորեստանի եւ Նինուէի. եւ զքաջն մեր նախարար յինքն յարեցուցեալ զՊարոյր, թագաւորեցուցանէ զնա ...*»[14]:

---

[12] **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, գիրք Ա, Անթիլիաս, 2010, էջ 367: **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցիոյ** Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունը՝ Գ. Բ. Թոռունյանի, Երևան, 1996, էջ 22:

[13] **Ուխտանէս Եպիսկոպոս**, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2010, ԺԹ, էջ 464; **Ուխտանէս Եպիսկոպոս** Հայոց պատմութիւն, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վարագ Առաքելեանի, խմբագիր՝ Ալ. Յակոբեան, Եր., 2006, ԺԹ, էջ 43:

[14] **Ուխտանէս Եպիսկոպոս**, Մատենագիրք Հայոց, ԻԳ, էջ 466: **Նույնի՝** Հայոց պատմութիւն, էջ 46:

### *1.7.* **Սամուել Անեցի:**

Սամուել Անեցին XI դարի պատմիչ է և ի թիվս այլ գործերի՝ կազմել է նաև «Ժամանակագրություն» աշխատությունը, որտեղ «*Իսկ Վարբակէս զԲելեսիւս, Բաբիլովնի արքայ կացուցեալ, որպէս զմերն Պարոյր պսակեալ, վասն աւգնականութեան գրեալ եւ ի նմանէ եւս, ինքն ի Մարս փոխեաց զիշխանութիւնն Ասորեստանեաց*»[15]:

Ապա և շարունակում է. «*Այս Պարոյր որդի Սկայորդւոյ Հայկազնի, աւգնական լեալ Վարբակայ Մարի, բառնան զթագաւորութիւնն ի Սարդանապաղայ: Եւ թագ եդեալ սմա Վարբակայ, լեալ առաջին պսակաւոր ի Հայկազնեաց*»[16]:

Ինչպես երևում է, Սամուել Անեցու հիշատակությունը նույնպես համահունչ է Մովսես Խորենացու հիշատակությանը:

Պարույր թագավորին այս կամ այն չափով անդրադարձել են նաև այլ պատմիչներ, այդ թվում՝ Վարդան Արևելցին և այլք, սակայն նրանց հիշատակությունները նույնպես չեն տարբերվում միմյանցից, և բոլորն էլ որպես հիմք ելնում են Պատմահոր հիշատակություններից:

### *1.8.* **Խաչատուր Ջուղայեցի:**

XVIII դարի հեղինակ Խաչատուր Ջուղայեցուն իրավամբ կարելի է որպես «վերջին» պատմիչ համարել: Խաչատուր Ջուղայեցին ստեղծագործել է Մ. Չամչյանցին գրեթե

---

[15] **Սամուէլի Անեցի եւ շարունակողներ,** Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ՝ Կարեն Մաթեւոսյանի, խմբագիր՝ Վ. Տեր-Ղեւոնդյան, Երևան, 2014, էջ 96: **Սամուէլի քահանայի Անեցիոյ** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 43, 46:

[16] **Սամուէլի Անեցի եւ շարունակողներ,** Ժամանակագրութիւն, էջ 110:

զուգահեռ կամ քիչ ավելի ուշ: Պետք է արձանագրել, որ թեմայի առումով Խ. Ջուղայեցու մեկնաբանությունը չի հեռանում Մ. Խորենացու վերոհիշյալ հիշատակությունից. «*Բայց յետոյ Վարբակէս զօրավարն մեդացւոց, այսինքն քրդաց՝ սպան զՍարդանապալ արքայն ասորեստանեայց, օգնականութեամբն Պարոյրայ Հայոց արքային ... Եւ այս Վարբակէս՝ թագաւորեցոյց ի Բաբելօն ի վերայ քաղդեացւոց զԲէլասիս ընկերակից իւր, և ի վերայ հայոց՝ զՊարոյր զօրավիգ իւր յորդւոց և ի տոհմէ Հայկայ*»[17]:

Ինչպես տեսանք, միայն Սեբեոսը, որի մոտ ընդհանրապես խոսք չկա Պարույր Հայկազնի մասին, և Թովմա Արծրունու ու Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակություններն էին, որ տարբերվում էին Պատմահոր հիշատակություններից: Այս վերջին երկու պատմիչների մոտ *թագավորություն որպես այդպիսին չի ստեղծվում, այլ վերականգնվում է, իսկ Պարույրն էլ հանդես է գալիս որպես թագավորությունը վերականգնող առաջին թագավոր*:

## 2.Պատմագրություն

1784-1786 թթ., Մխիթարյան միաբանության ականավոր դեմքերից մեկը՝ վարդապետ Միքայել Չամչյանցը (1736-1823 թթ.), որն իրավամբ համարվում է հայ նոր պատմագրության հիմնադիրը, Վենետիկում հրատարակեց «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784» եռահատոր աշխատանքը: Եվ քանի որ XIX դարի հայ պատմագիտական միտքն իր ժամանակագրության հիմքը սկսում է Մ. Չամչյանցի աշխատությամբ, ան-

---

[17] **Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ** Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ Բարգէն Վարդապետի Աղաւելեանց, Վաղարշապատ, 1905, էջ 17, 18:

հրաժեշտ ենք համարում նախ անդրադառնալ նրա վերլուծությանը:

Մ. Չամչյանցն իր աշխատությունը կազմում է պատմահամեմատական և սուր քննադատական դիրքերից՝ հայ աղբյուրները համեմատելով և համադրելով անտիկ և այլ աղբյուրների հետ: Նա կազմել է ժամանակագրություն և պարբերացրել հայոց պատմությունը: Պետք է արձանագրել, սակայն, որ Մ. Չամչյանցը միշտ չէ, որ հավատարիմ է լինում իր աղբյուրին:

Որպես ասվածի վառ օրինակ՝ Պատմահայր Մովսես Խորենացու և նրան հաջորդող մի շարք պատմիչների մոտ[18] Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի (մ.թ.ա. 605-562 թթ.) ժամանակակից Հրաչյա արքան[19] Մ. Չամչյանցի մոտ վեր է ածվել Հայկակի: Վերջինիս առումով Մ. Չամչյանցը նշում է. « *... բայց այս բան երևի փոփոխեալ ՚ի գրագրաց ըստ տեղւոյն և ըստ անուան զի ՚ի հաշուել զժամանակ Հրաչէի և Նաբուգոդոնոսորայ՝ Հրաչեայ համարի լինել իբր 70 ամօք յառաջ քան զնա ... Իսկ եթէ չգուցէ յայսմ վրիպակ գրագրաց, ասելի է՝ թէ Խորենացին ո՛չ ըստ իւր կարծեաց դնէ այդպէս, այլ՝ ըստ այլոց. քանզի ո՛չ ասէ՝ թէ այսպէս եղև, այլ՝ թէ այսպէս ասեն. և զի ժամանակ եղելոցն ո՛չ անկանի յաւուրս Հրաչէի, այլ՝ Հայկակայ, հարկ լինի ասել՝ թէ յաւուրս Հայկակայ եղև գալն Շամբատայ*»[20]:

---

[18] Թերևս կրկին բացառություն է կազմում Սեբեոսը: Այս խնդրի առումով առաջիկայում պատրաստվում ենք հանդես գալ առանձին աշխատանքով:

[19] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, I, ԻԲ:

[20] **Չամչյանց Մ.**, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հատոր 1, Վենետիկ, 1784 (= Երևան, 1985), էջ 101, իսկ հեղինակի հիմնավորումը տե՛ս էջ 181: Եվ սա այն Հայկակն է, որի թագավորության հիմնադիր լինելն իբր բացահայտել է (առանց հղելու Մ. Չամչյանցի վերոհիշյալ տողերը) Ա. Մուշեղյանը՝ Տիգրանի հավաքական կերպարը՝ ազգային համախմբման խորհրդանիշ (ըստ հայ և օտար հնագույն աղ-

Անդրադառնալով Պարույրին՝ Մ. Չամչյանցը նշում է. «*Պարոյր յաջորդեալ հօր իւրոյ Սկայորդւոյ յերկրորդ ամի շինուե Հռովմայ*»[21]: Այսինքն, ըստ Չամչյանցի Պարույրը Սկայորդուն պետք է, որ հաջորդած լինի մ.թ.ա. 752/751 թթ.-ին, սակայն հեղինակի մոտ հանդիպում ենք՝ մ.թ.ա. 747/746 թթ.-ին: Քանի որ, ըստ Մ. Չամչյանցի ժամանակագրության, Հռոմը հիմնադրվել է մ.թ.ա. 749/748 թթ.[22], իսկ Պարույրը Մարաց թագավոր Վարբակեսից «թագավորության շուք և պատիվ» ստացել է մ.թ.ա. 743 թվականին՝ «*743 ամօք յառաջ քան զծնունդ Քրիստոսի*»[23] և «*պերճանալով արքայական ճոխությամբ*», բազում բարեկարգումներ է կատարում և խաղաղությամբ 43 /ԽԳ/ տարի կառավարելուց հետո մահանում Հռոմի հիմնադրման 50-րդ տարում[24]:

Այսպիսով, եթե առաջնորդվենք Միքայել Չամչյանցի ժամանակագրությամբ, կստացվի, որ Պարույր Հայկազնը որպես թագավոր կառավարել է մ.թ.ա. 743-700 թթ., իսկ իշխանության գլուխ է եղել մ.թ.ա. 748 թ.-ից: Եվ քանի որ այսօր հայտնի է Նինվեի անկման ստույգ թվականը՝ մ.թ.ա. 612 թ., և եթե Չամչյանցի մ.թ.ա. 743 թ.-ից հանենք հարյուր տարի, ապա տեսականորեն կստանանք մ.թ.ա. 643 թ., իսկ կառավարման թվականները՝ մ.թ.ա. 643-600 թթ.: Սակայն այս մ.թ.ա. 643 թ.-ից էլ պետք է հանել 31 տարի, քանի որ, ինչպես տեսանք, աղբյուրները որպես Պարույրի թագադրման թվական նշում են մ.թ.ա. 612 թվականը, ապա

---

բյուրների), Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, 25 նոյեմբերի 2010, ՎՊՄԻ գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2011, էջ 20-56, նույն հեղինակի այլ աշխատանքներ, և այլք:

[21] **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 96:

[22] **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հատոր 3, Վենետիկ, 1786 (= Երևան, 1984), էջ 31:

[23] **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հատոր 1, էջ 97, հատոր 3, էջ 32:

[24] **Չամչյանց Մ.**, նշվ. աշխ., հատոր 1, էջ 101, հատոր 3, էջ 32:

ստացվում է, որ Պարույրը իշխել է մ.թ.ա. 643-612 թթ.՝ որպես նահապետ-իշխան, իսկ մ.թ.ա. 612-600 թթ.՝ որպես թագավոր:

Սակայն այս ժամանակագրական հաշվարկները, որ գալիս են Մ. Չամչյանից, դեռ ոչինչ չեն նշանակում: Նախ պետք է ապացուցել Պարույրի պատմական անձ լինելու հանգամանքը, որը, սակայն, ներկայիս աղբյուրագիտական սուղ պայմաններում գրեթե անհնար է:

Միքայել Չամչյանցի ժամանակագրությունը հետագայում խմբագրման է ենթարկվել նաև Ղևոնդ Ալիշանի կողմից[25]: Վերջինս նույնպես Պարույրին առաջին թագավոր էր համարում. «... *մինչեւ ի սկիզբն առաջին թագաւորութեան ազգիս ի Պարուրայ Հայկազնոյ*»[26]: Անտիկ և հայ միջնադարյան աղբյուրների և Մ. Չամչյանցի ժամանակագրության համադրության արդյունքում Ղ. Ալիշանը նույնպես փորձ է կատարում որոշակիացնելու Պարույրի գործունեության ժամանակաշրջանը[27]: Ղ. Ալիշանը Պարույր Սկայորդուն՝ որպես Հայոց առաջին թագավորի, անդրադառնում է նաև իր «Հայապատում» աշխատանքի մեջ[28]:

Միքայել Չամչյանցից հետո և մասնավորապես սկսած XIX դարի երկրորդ կեսից՝ ոչ միայն նշանավորվեց հայոց պատմության ուսումնասիրման ամբողջական և քննադատական մի փուլով, այլև շատ ու շատ խնդիրների ժխտողականության դիրքերից ու վերաշարադրմամբ:

Այսպես, Հովսեփ Գաթրճյանն իր «Տիեզերական պատմության» մեջ, անդրադառնալով խնդրին, բացի Պարույրի

---

[25] **Ալիշան Ղ.**, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 199-233:

[26] **Նույն տեղում**, էջ 199, 223:

[27] **Նույն տեղում**, էջ 200-219:

[28] **Ալիշան Ղ.**, Հայապատում: Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1901, էջ 42-44:

գործունեության կոնկրետ շրջանակների թվագրումից՝ մ.թ.ա. 610-606 թթ. ընկած ժամանակահատվածով, գրեթե կրկնում է պատմահոր հիշատակությունը. «*Յետ կալոյ Մարաց յեպս առ Դիովկավ յամի 714 յԱսորեստանեաց՝ սպէպ պատերազմ էր նոցա ընդ սոցա յեպուսպ (նախ քան զ610) միաբանեցաւ եւ Պարոյր ընդ արքային Մարաց (Կիաքսարայ Ա.) ընդդէմ Ասորեստանեացն՝ ընկալեալ ի նմանէ խոստումն թագաւորելոյ Հայոց աշխարհին*»[29]:

Գրքի վերջում զետեղված «*Տախտակ ժամանակակցական*»-ում Հ. Գաթրճյանը Պարույր Հայկազնի կառավարումը թվագրում է մ.թ.ա. 635-600 թթ.-ով[30], իսկ Ասորեստանի անկումը նա թվագրում է մ.թ.ա. 606 թվականով[31]: Այդուհանդերձ, Հ. Գաթրճյանը նշում է. «*...այսպէս եւեթ հնար է միաբանել զբանս Խորենացւոյն ընդ սպոյգ ժամանակագրութեան*»[32]:

Մովսես Խորենացու և նրա հաջորդների հիշատակություններին նախապատվություն էր տալիս նաև Կարապետ Եզյանը[33]:

Բավականին հետաքրքիր է նաև Անտոն Գարագաշյանի մոտեցումը: Նա, ինչպես նրա շատ ու շատ ժամանակակիցներ, փորձելով ստեղծել Հայոց քննական պատմությունը, հայ միջնադարյան պատմիչների ու անտիկ հեղինակների հիշատակությունների համադրման արդյունքում փաստացի ոչ միայն քննադատում ու մերժում էր Խորենացու հիշատակությունները՝ դրանք «կեղծ» անվանելով, այլև կաս-

---

[29] **Գաթրճեանց Յ.**, Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, Հատոր Ա, Հին պատմութիւն, Վիէննա, 1849, էջ 104:

[30] **Նույն տեղում**, էջ 610:

[31] **Նույն տեղում**, էջ 85, 116, 122, 318:

[32] **Նույն տեղում**, էջ 104, ծնթ. 1:

[33] **Эзов Г.**, Внутренний быт древней Армении, Санкт-Петербург, 1859.

կածի տակ էր վերցնում նաև նրա ապրած ժամանակաշրջանը: Այդուհանդերձ, նա համարում էր, որ բոլոր հայկազունիները հայեր էին: Անդրադառնալով Հովհաննես Դրասխանակերտցուն, ով Պարույրի նախորդներին բնիկ հայ չէր համարում, նշում է.

«*Կոչել Խորենացւոյն զՊարոյր և զյաջորդս նորա «բնիկ, արեանառու և հարազատ» ոչ թէ կը ցուցանէ, թէ քան զնոսա առաջինք օտարազգի էին, քանզի Պարուրի նախորդն Սկայորդի ... հայր էր Պարուրի, այլ Խորենացին հաւանականապէս զՊարուրեանս, իբրև Հայկայ սերունդ՝ կը կոչէ բնիկ և հարազատ, համեմատութեամբ յաջորդ հարըստութեան Արշակունեաց զորս օտարազգի կը համարէր*»[34]:

Ինչևէ, անդրադառնալով խնդրին, Ա. Գարագաշյանը նշում էր. «*Ինչպես ուրիշ հայ իշխանաց յիշելոց ի Խորենացւոյն նոյնպէս Պարուրի գալով՝ չունինք ամենևին ապացոյց, թէ այսու անուամբ եղաւ իշխան կամ թագաւոր Հայոց*»[35]:

Ինչպես արդեն նշվեց, XIX դարի երկրորդ կեսը նշանավորվեց Հայոց պատմության ամբողջական և քննադատական վերաշարադրմամբ: Նոր պայմաններում մի շարք հեղինակներ, ինչպիսիք էին Ք. Պատկանյանը[36], Գ. Խալաթյանցը[37], Մ. Էմինը[38] և այլք, հանդես եկան Մ. Խորենացու

---

[34] **Գարագաշեան Ա.Մ.**, Քննական պատմութիւն Հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, Մասն Ա., Նախնական ժամանակ, Թիֆլիս, 1895, էջ 184, 185:

[35] **Նույն տեղում**, էջ 183 (Պարույրի մասին մանրամասն տե՛ս էջ 180-187):

[36] **Патканов К.**, Ванские надписи и значение их для истории Передней Азии, Санкт-Петербург, 1881.

[37] **Халатьянц Г.**, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1896, стр 106-125.

[38] **Эмин Н.**, Древний эпосъ Армянскій, Москва, 1881, стр. 20-30. **Его же,** Династический список Хайкидов в истории Армении Моисея Хоренского и хронологическая их таблица у О. Михаила Чамчяна, Москва, 1884, стр. 3 и сл. Տե՛ս նաև՝ Исследования и статьи Н.О. Эмина по армянской мифологии,

հիշատակությունների սուր քննադատությամբ:

Ք. Պատկանյանը նշում էր, որ Պարույր Հայկազնի խորենացիական պատումը չունի ոչ մի պատմական հիմք, և որ Խորենացին այն հորինել է, որպեսզի ցույց տա ժամանակաշրջանի դարակազմիկ իրադարձություններին հայերի մասնակցությունը[39]:

Ն. Էմինը, ելնելով միջնադարյան մյուս պատմիչների, մասնավորապես Հովհաննես Դրասխանակերտցու և Սամուել Անեցու հիշատակություններից, գտնում էր, որ Պարույրը ոչ թե որպես առաջին թագավոր է, այլ հանդես է գալիս որպես Հայկազունի արքայատոհմի վերականգնող[40]:

Ինչ վերաբերում է Գ. Խալաթյանցին, ապա վերջինս ջանք չի խնայում՝ Պատմահորը մերկացնելու և կեղծիքների մեջ մեղադրելու համար[41]:

Ստեփանոս Պալասանյանն իր աշխատության մեջ փորձ է անում համադրելու հայ, անտիկ և սեպագիր աղբյուրների հիշատակությունները, որի արդյունքում հանգում է այն եզրակացության, որ Պարույրը գահ է բարձրացել մ.թ.ա. 606 թվականին[42]: Ինչպես երևում է հեղինակի հետագա շարադրանքից, թագավոր հռչակվելուց հետո Պարույրը երկար չի կառավարել, քանի որ արդեն մ.թ.ա.

---

археологии, истории и литературе (за 1858-1884гг.). Москва. 1898.

[39] Մանրամասն տե՛ս **Патканов К.** "Ванские надписи и значение их для истории Передней Азии". Санкт-Петербург. 1881.

[40] **Эмин Н.** "Древний эпосъ Армянскій", стр. 20-30. **Его же.** Династический список Хайкидов в истории Армении Моисея Хоренского и хронологическая их таблица у О. Михаила Чамчяна. Стр. 3 и сл.: Տե՛ս նաև՝ Исследования и статьи Н.О. Эмина по армянской мифологии, археологии, истории и литературе (за 1858-1884гг.). Москва. 1898.

[41] **Халатьянц Г.** "Армянский эпос в истории Армении Моисея Хоренского". Стр. 106-125.

[42] **Պալասանեան Ս.**, Պատմութիւն Հայոց (Սկզբից մինչեւ մեր օրերը), Թիֆլիս, 1902, էջ 565:

600 թվականին կառավարում է նրա որդի Հրաչյան[43]: Հետաքրքիր է Հրաչյայի առումով հեղինակի նկատառումը: Նա նշում է, որ ոմանք Ուրարտուի Ուրսային (Ռուսա) համարում են Հրաչեայ կամ Հրչէ[44]: Հետաքրքիր է, սակայն, որ բոլոր Հայկազուններին Ս. Պալասանյանը հայ էր համարում:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է վստահաբար նշել, որ XIX դարի հայ պատմագրությունը դարձավ այն կարևորագույն հիմքը, որի հիմքերի վրա հետագայում՝ XX դարում, պիտի զարգանար հայագիտությունը:

Աշխատանքը ցանկանում ենք եզրափակել Եղիա Քասունու հետևյալ մեկնաբանությամբ. «*Այսուամենայնիւ, ոմանք նոյնիսկ անոնցմէ որ անժխտելի կը գտնեն բեւեռագիր յիշատակարանաց վկայութիւնները, տակաւին չեն ուզեր բոլորովին հրաժարիլ այդ հնաւանդ բարոյավէպերու կամ աւանդավէպերու արտաքին ձեւէն և զանոնք իրենց ամէն մանրամասնութիւններով իրական պատմութիւն սեպելու կը ջանան: Այսպիսիներ պատեհ տեղ մըն ալ կը գտնեն արձանագրութեանց ընձեռած տեղեկութիւններն աւանդականին մէջ ներմուծելու (թէեւ քիչ մը քաշկռտելով ու այլափոխելով թէ՛ աւանդութեան և թէ՛ իրական դէպքերու ցուցմունքները,) այսինքն՝ այն ընդարձակ բացութեան մէջ զոր թողած է Խորենացին*»[45]:

---

[43] **Նույն տեղում**, էջ 43, 44:

[44] **Նույն տեղում**, էջ 38:

[45] **Քասունի Ե.Ս.**, Նախնական Հայաստան (Հայաստանի քննական պատմութիւնը Նորքարյան շրջանէն 600 Ն.Ք.), Պեյրութ, 1950, էջ 700:

TSAKANYAN RUSLAN

# PARUYR HAYKAZN IN ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XIX CENTURY

***Keywords:*** Paruyr Haykazn, Armenian king, Movses Khorenatsi, Sebeos, Movses Kaghankatvatsi, Tovma Artsruni, Hovhannes Draskhanakertsi, Ukhtanes, Samuel Anetsi, Mikayel Chamchyants, Armenian historiography of the XIX century.

The article discusses all available source material on Paruyr Haykazn and prominent figures of the XIX century Armenian historiography, including H. Ghatrchyan's, A. Garagashyan's, K. Patkanyan's, N. Emin's, G. Khalatatyants', S. Palasanyan's views. Particular attention was paid to Mikayel Chamchyants' viewpoints and chronology.

Summing up the above, it can be surely stated that the Armenian historiography of the XIX century became the most important basis on which the Armenian studies developed in the XX century.

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

# ՄԱՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇՈՒՐՋ

***Բանալի բառեր՝*** Մարաստան, Հայաստան, Պարսկաստան, գելեր, մարդեր, անարիակներ, դերբիկներ, Պլուտարքոս, Պլինիոս Ավագ, Քսենոփոն, Ստրաբոն:

Մարաստանի պատմության ուսումնասիրությունը[1] կարևոր նշանակություն ունի նաև հին Հայաստանի պատմության համար, քանի որ երկու երկրների անցյալը պատմական տարբեր ժամանակաշրջաններում սերտորեն կապված էր միմյանց: Ստորև կքննենք գելերի, մարդերի, անարիակների, դերբիկների մասին հայկական և օտարալեզու սկըզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները:

***Գելեր:*** Այս ցեղն աղբյուրներում հիմնականում նույնացվել է կադուսիների, երբեմն էլ՝ լեզգիների նախնիներ լեգերի հետ: Այսպես, Ստրաբոնը գելերի և լեգերի սկյութական ցեղերին տեղադրում է ամազոնուհիների և աղվանների միջև[2]: Համաձայն այս հաղորդման՝ գելերը և լեգերը գտնվել են արևելյան Այսրկովկասում՝ Կուր գետից հյուսիս՝ Աղվանքի տարածքում: Ամազոնուհիների և աղվանների միջև գելերին և լեգերին՝ Պոմպեոսի արշավանքի կապակցությամբ, տեղադրում է նաև Պլուտարքոսը[3]: Բայց Ստրաբոնի մյուս

---

[1] Տե՛ս, օրինակ, **Խորիկյան Հ.**, Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2016, № XXX, էջ 57-93: **Նույնի՝** Մարաստանի էթնիկական կազմի շուրջ՝ ըստ Ստրաբոնի, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2012, էջ 337-341:

[2] **Страбон**. География в 17 книгах. Перевод, статья и комментарии Г. Стратановского. Ленинград, 1964, стр. 477.

[3] **Плутарх**. "Избранные жизнеописания". Т. II, Москва, 1987. Помпей. XXXV, стр. 312.

տեղեկություններով գելերը տեղադրվում են կադուսիներից առաջ, որոնցից հյուսիս արդեն աղվաններն էին[4]: Վերջին տեղադրությունները գելերին տեղորոշում են կադուսիների հարևանությամբ:

Պլինիոս Ավագը գելերին նույնացնում է կադուսիների հետ[5], ինչն ընդունելի է: Պտղոմեոսը գելերին հիշատակում է կադուսիների և դրիբյուկների միջև[6], որը թույլ է տալիս գելերին տեղադրել կադուսիներից արևելք: Գելերին ատրոպատենների և մարդերի միջև *գերեր* ձևով հիշատակում է Ռուփոս Փեստոսը[7]:

---

[4] **Страбон,** стр. 481, 483.

[5] **Pliny**, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, 48, p. 372: Կադուսիների մասին մանրամասն տե՛ս **Խորիկյան Հ.**, Կադուսիների ցեղը հին աղբյուրներում, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2011, № 3, էջ 213-228:

[6] **Humbach H., Ziegler S.,** Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, pp. 42-43: Պտղոմեոսի «Աշխարհագրության» հին հրատարակության մեջ գելերի փոխարեն գրված է նաև լեգեր (տե՛ս **Claudii Ptolemaei Geographia**, edidit C.F.A. Noebbe, t. II, Lipsiae, 1845, VI, 2, 5, p. 86), որը պետք է ուղղել գելեր: Կասպից ծովի հարավարևմտյան ափերին գելերի հետ լեգերի հիշատակությունն անընդունելի է, քանի որ Աղվանքի տարածքում գելերի և լեգերի (հայկական և վրացական աղբյուրների լեկղեկերը՝ լեզգիները) պատմականությունը հաստատվում է սկզբնաղբյուրների հիշատակություններով (տե՛ս **Հակոբյան Ա.**, Գարգարացիները ըստ անտիկ և հայկական սկզբնաղբյուրների, ՊԲՀ, 1982, № 4, էջ 119): Աղվանքում գելերի և լեգերի համատեղ հիշատակությունը պատճառ է դարձել, որ հին հեղինակները Կասպից ծովի հարավարևմտյան ափերի մոտ տեղադրվող գելերի հետ հիշատակեին լեգերին, որը դրափոխությամբ նույնպես հեշտորեն կարող էր առաջանալ գելից:

[7] **Латышев В.**, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе (այսուհետև՝ ИДПСК), Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 1949, № 4, стр. 242.

Մովսես Խորենացին հիշատակում է Պատիժահար գավառը, որը Գեղումների լեռն է[8], Ստրաբոնի Պարաքոաթրեսը: Գելերի տեղորոշումն այս տարածքում միանգամայն ընդունելի է: Քվադրատուսը գելերին համարում է մարական ցեղ[9]: Գելերի մասին հիշատակություններ կան Սեբեոսի մոտ, որը գելերի երկիրն անվանում է «յամուր յերկիրն Գեղմայ»[10]: Գեղերը և Գեղանը հիշատակվում են հայոց «Աշխարհացոյց»-ում[11]: Անանուն Ռավեննացին գելերին հիշատակում է Մեծ Մարաստանում[12]՝ չկապելով Ատրպատականի տարածքի հետ:

Գելերի անունը պահպանել է Իրանի ներկայիս Գիլյան նահանգը[13]: Յակուտ ալ-Համավին հաղորդում է, որ Մուկանն ու Ջիլանը, այսինքն՝ Գիլանը՝ գելերի էթնիկոնը, Հա-

---

[8] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա.Բ. Սարգսեանի, Երևան, 1990, էջ 182:

[9] **Müller C.**, Fragmenta Historicorum Graecorum, Vol. III, Parisiis, 1849, p. 659, fr. 1.

[10] **Պատմութիւն Սեբէոսի**, աշխատասիրությամբ՝ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 71, 95, 96, 98, 105, 172: Գեղաց գունդը հիշատակում է Եղիշեն (տե՛ս **Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրությամբ՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 232):

[11] **«Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց»**, հրատ.՝ Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 12, 40-41; **Патканов К.П.**, Армянская География VII века, СПб, 1877, стр. 59. Հավելված՝ **«Աշխարհացոյց է դարու»**, էջ 22; **Աբրահամյան Ա.Գ.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 352; **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 115; **Հակոբյան Ա.**, «Աշխարհացոյց» է դարի Անանունի. գիտաքննական բնագիր, Հանդէս ամսօրեայ, թիվ 1-12, 2013, էջ 165, 167:

[12] **Ravennatis Anonymi Cosmographia**, ed. M. Pinder et Parthey, Berolini, 1860, II, 9, p. 62.

[13] Տե՛ս, օրինակ, **Herzfeld E.**, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 196.

բեթի թոռներն են և Թաբարիստանի բնակիչները[14]: 553 թվականին Գիլանը Ամոլի հետ կազմում է նեստորական եպիսկոպոսություն[15]:

Այսպիսով, կադուսիներին ազգակից գելերը հավանաբար մտել են միևնույն համադաշնության մեջ, և նրանց իրանական ծագումը նույնպես անվիճելի է[16]:

***Մարդեր:*** Մարդերի մասին տեղեկություններ կան բազմաթիվ հին հեղինակների մոտ: Մարդերի անվանումը, ի թիվս այլ քոչվորների՝ տուրա, դահեր, դերբիկներ, առաջին անգամ հիշատակում է Վիդևատատը (մ.թ.ա. VII-VI դդ. շեմին): Նրանք՝ որպես «դևերին պաշտողներ», համարվում էին Ավեստայի հասարակության ուղղահավատ զրադաշտականների թշնամիներ[17]: Մարդերին՝ որպես պարսկական վաչկատուն ցեղի, հիշատակում է Հերոդոտոսը[18]: Հույն պատմիչը հիշատակում է նաև մարդ ցեղից Հյուրոյադեսին, որը մասնակցում է Սարդեսի գրավմանը[19]:

---

[14] **Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին**, կազմեց՝ Հ.Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 111, 112:

[15] **Guidi I.**, Ostsyrische Bischofe und Bischofssitze im V, VI und VII Jahrhundert, Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft, Bd. 43, Leipzig, 1889, S. 407.

[16] **Дьяконов И.**, История Мидии, Москва-Ленинград, 1956, стр. 92, 381-382; **Грантовский Э.**, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, стр. 374.

[17] **Дьяконов М.**, Очерк истории древнего Ирана, Москва, 1961, стр. 62. **Դանիելյան Է.**, Մարդերի ցեղը հին Հայաստանում (մ. թ. ա. V-մ. թ. I դդ.), ՊԲՀ, 1976, № 1, էջ 203:

[18] **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, I, 125: Հերոդոտոսի այս տեղեկությունը կրկնում է Եվստաթիոսը (տե՛ս **ИДПСК**, ВДИ, 1948, 1, стр. 246):

[19] **Հերոդոտոս**, I, 84: Անտոնիոսի բանակի հետդարձի ճանապարհը Փրաասպայից ցույց է տալիս ծագումով մի մարդ (տե՛ս **Պլուտարքոս**, Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Ս. Գրքաշարյան, Երևան, 2001, էջ 299),

Համաձայն Կտեսիասի՝ Կյուրոս Մեծը ծագում էր մարդերի քոչվոր ցեղից[20], ինչն անշուշտ չի համապատասխանում իրականությանը և Արտաքսերքսես Բ-ի կողմից ուղղված էր Կյուրոսի վարկաբեկմանը՝ կապված Կյուրոս Կրտսերի հետ, որի անունն ատելի էր Արտաքսերքսես Բ-ի համար[21]: Հավանական է, որ Կյուրոսի վարկաբեկումը կապված էր մարական ավանդույթի հետ[22]:

Համաձայն Քսենոփոնի՝ Կենտրիտես գետի (ներկայիս Բոհտան-սուն) հակառակ ափին հույներին սպասում էին սպառազինված հեծյալներ և հետևակ զորքեր, որոնք «Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան», և փորձում են արգելել հելլեններին մտնել Հայաստան[23]: Քսենոփոնի այս տեղեկության մեջ անհրաժեշտ է պարզել, թե «վարձկանությունը» վերաբերում է բոլորին՝ արմեններին, մարդերին ու խալդայներին, թե վերջին երկու ցեղերին կամ էլ միայն խալդայներին: Մարդերի էպոնիմը պահպանվել է պատմական Հայաստանի աշխարհագրական անուններում[24]: Օրինակ, ըստ Ն. Ադոնցի, հնարավոր է, որ մարդաղյան մարդերը ծագում են այն մարդերից, որոնք խալդայների հետ միասին շարժվել են դեպի հյուսիս և գրավել այն վայրերը, որոնք կոչվեցին Մարդաղի և Խաղտիք, իսկ մարդերը Մարդաստան եկան հա-

---

որի՝ հետդարձի ճանապարհին քաջածանոթ լինելը վկայում է Ատրպատականում գտնվող մարդերի կամ ամարդների ցեղից լինելը, որը գտնվում էր Փրաասպայից արևելք:

[20] **Müller C.**, FHG, Vol. III, pp. 399-400, fr. 66.

[21] **Kent R.G.**, The oldest Old Persian inscriptions, Journal of the American Oriental Society, Vol. 66, 1946, p. 211.

[22] **Schubert R.**, Herodots. Darstellung der Cyrussage, Breslau, 1890, S. 58.

[23] **Քսենոփոն**, Անաբասիս, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 89:

[24] **Վարդանյան Վ.**, Մարդերը Վասպուրականում, ՊԲՀ, 1971, № 3, էջ 51: **Դանիելյան Է.**, Մարդերի ցեղը հին Հայաստանում, էջ 203-208:

վանաբար, ավելի ուշ Իրանի կողմից[25]: Նախ՝ նշենք, որ խալդայները նույնանում են սկյութներին և չէին կարող շարժվել հարավից հյուսիս, քանի որ այդ ժամանակներում նրանք արդեն հաստատվել էին իրենց անունով կոչվող Խալիտու-Խաղտիք երկրում[26]: Անշուշտ, դժվար է Քսենոփոնի՝ միայն մեկ անգամ մարդերի հիշատակումից ելնելով՝ ասել, թե մարդերը տվյալ ժամանակաշրջանում գտնվում էին Մարդաղիում, Մարդաստանում և այլուր: Բայց և այնպես, կարելի է ենթադրել, որ տվյալ տեղեկության մեջ Արտուխասի հիշատակումը մարդերին կապում է ավելի շուտ Արևելյան Հայաստանի հետ: Համենայն դեպս, կարևոր է ընդգծել մեջբերված տեղեկությանը հաջորդող նախադասությունը. «Ասում էին, թե խալդայներն ազատ են և խիզախ. նրանք զինված էին հյուսկեն երկայն վահաններով և նիզակներով»[27]: Ինչպես տեսնում ենք, մարդերի ազատ լինելու մասին չի նշվում, իսկ խալդայների ազատ լինելը հաստատվում է Քսենոփոնի այլ տեղեկություններով ևս: Սա նշանակում է, որ մարդերը, ինչպես փասիանները, տաոխները, հեսպերիտները, մտել են Հայաստանի մեջ՝ որպես Մարդաղիի, բայց ավելի հավանական է՝ միայն Մարդաստանի կամ Մարդուցայքի բնակիչներ: Չի կարելի բացառել նաև, որ Հայաստանում գտնվող մարդերը սկզբում եղել են վարձկաններ և հետո աստիճանաբար հաստատվել են Հայաստանում:

Հայաստանի և Պարսկաստանի մարդերի մասին հի-

---

[25] **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 464, ծանոթ. 1:

[26] **Խորիկյան Հ.**, Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, Բանբեր Երևանի համալսարանի, 2006, № 2, էջ 117-120:

[27] **Քսենոփոն**, Անաբասիս, էջ 89:

շատակում է նաև Ստրաբոնը[28]: Մարդերը կամ ամարդները, համաձայն Ստրաբոնի, գտնվել են անարիակների, վրկանների, կադուսիների, վիտիների, տապյուրների, պարսիկների, ուքսերի, էլյումացիների հարևանությամբ[29]: Հիշատակված ցեղերի մի մասը մարդերի կամ ամարդների (նախասկզբի ա-ն ժխտական մասնիկ չէ) հետ գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին:

Գավգամելայի ճակատամարտում (մ.թ.ա. 331 թ.) նետաձիգ մարդերին պարսկական բանակի կենտրոնում հիշատակում է Արիանոսը[30]: Ալեքսանդր Մակեդոնացին նվաճում է մարդերին, որոնց երկրում լեռները չափազանց բարձր էին և զառիվայր, և մարդերին ու ռազմատենչ տապյուրներին միավորում մեկ սատրապության մեջ[31]: Ռուփոսի տեղեկություններից պարզվում է, որ մարդերը ոչ միայն մասնակցել են Գավգամելայի ճակատամարտին, այլև նրանց մի հատվածը բնակվում էր Պարսքում, իսկ մյուս մասը՝ Վրկանի հարևանությամբ[32]: Նետաձիգ մարդերին Տիգրան Մեծի բանակում հիշատակում է նաև Պլուտարքոսը, ընդ որում մարդերին և իբերներին պատմիչը համա-

---

[28] **Страбон**, стр. 494, 676.

[29] **Անդ.**, էջ 480, 481, 485, 494:

[30] **Արիանոս**, Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 101:

[31] **Անդ.**, էջ 119, 152, 269: **Ռուփոս,** Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987, էջ 418:

[32] **Ռուփոս**, էջ 350, 390, 417: Ռուփոսը մարդերին համարում է պարսկական ցեղ: Աքեմենյան տերության մեջ մարդերը՝ որպես կիսանկախ ցեղ, եղել են վարձկաններ (տե՛ս **Дандамаев М.А., Луконин В.Г.**, Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, стр. 235): Մարդերին Գավգամելայի ճակատամարտում և Կասպից ծովի հարավային ափերի մոտ հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին (տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 95, 107):

րում է օտարականներ[33]: Այս տեղեկությունից երևում է, որ տվյալ մարդերը չեն կարող տեղադրվել Հայաստանում[34] և, ըստ էության, գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին և Տիգրան Մեծի բանակի կազմում էին որպես հայոց տերության մեջ մտնող հպատակ ժողովուրդ: Մարդերը հիշատակվում են Քարաքսում՝ Կասպիական դռների մոտ[35]:

Պլինիոս Ավագը նույնպես վրկանների հարևանությամբ հիշատակում է մարդերին՝ ամարբներ ձևով[36]: Ամարդոս կամ Մարդոս գետը, որը ուսումնասիրողների կողմից նույնացվել է Սեֆիդ-ռուդ կամ Ղըզըլ-Ուզեն գետին, հիշատակում են Պտղոմեոսը[37], Ամիանոսը[38], Ռուփոս Փեստոսը, Պրիսկիանոսը[39]: Պտղոմեոսը մարդերին տեղադրում է Կասպից ծովի ափամերձ շրջանից դեպի ցամաքի խորքը[40],

---

[33] **Պլուտարքոս**, Կենսագրություններ, էջ 74:

[34] Տակիտոսի հիշատակած մարդերը (տե՛ս **Корнелий Тацит**, Анналы, т. I, Ленинград, 1969, стр. 263) նույնանում են Մարդաղիի կամ Մարդաստանի բնակիչներին:

[35] **Դանիելյան Է.**, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», ՊԲՀ, 1971, № 4, էջ 174:

[36] **Pliny**, Natural History, Vol II, VI, 36, p. 364. Մարդերը ենթարկվել են պարթևներին (անդ., VI, 134, էջ 438):

[37] **Humbach H.**, Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 36-37.

[38] **Ammianus Marcellinus**, with an English translation by J.C. Rolfe, Vol. II, Cambridge-Massachusetts-London, 1972, Loeb Classical Library, XXIII, 6, 40, p. 372.

[39] **Muller C.**, Geographi Graeci Minores, Vol. II, Parisiis, 1861, pp. 185, 196. Ամարդոս գետը երբեմն շփոթվել է Մարգուշ՝ ներկայիս Մարդուք կամ էլ Օքսոս գետերի հետ (տե՛ս Страбон, стр. 487):

[40] **Humbach H.**, Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 42-43. Հմմտ. **Piller K.C.**, The Cadusii in Archaeology? Remarks on the Achaemenid Period (Iron Age IV) in Gilan and Talesh, Iran and Caucasus, Leiden, Vol. 17, 2013, p. 117.

իսկ Պոմպոնիոս Մելասը՝ պեստիկ-պեսիկների հարևանությամբ, որոնցից հետո նեղուցի մոտ դերբիկներն էին[41]:

Մարդերի երկիրը համապատասխանում է հայոց «Աշխարհացոյց»-ի Ամլին՝ Տաբարիստանի մայրաքաղաքին[42]:

Որոշ ուսումնասիրողներ, նկատի ունենալով մարդերի՝ ավազակությամբ զբաղվելը, ցեղանունը բացատրել են իրանական «marəδa»՝ «մարդասպան» բառով[43]: Մարդերի իրանական ծագումը[44] նույնպես կասկածի ենթակա չի թվում:

***Անարիակներ***: Անարիակները, ըստ ուսումնասիրողների, մի քանի ոչ իրանական ցեղերի հավաքական անվանումն է: Եվ իրոք, ելնելով այն իրողությունից, որ անարիակներ բառացի նշանակում է «ոչ արիացիներ» այս տեսակետն ընդունելի է: Սակայն չպետք է մոռանալ, որ այս կամ այն արիական ցեղերը ազգակից, սակայն թշնամի ցեղերին նույնպես անվանում էին «ոչ արիացիներ»[45]: Անարիակների անունը մասնագիտական գրականության մեջ

---

[41] **ИДПСК**, ВДИ, 1949, 1, стр. 284-285: Պեստիկ-պեսիկները Ստրաբոնի ապասիականներն են (տե՛ս **Страбон**, стр. 485), Պտղոմեոսի պասիկները (տե՛ս **Humbach H., Ziegler S.**, Ptolemy Geography, book 6, pp. 168-169):

[42] Տե՛ս **Աստեղագիրք Հայոց**, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2157, 2174, 2190: Տե՛ս **Marquart J.**, Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, S. 135; **Хуршудян Э.**, «Города Ирана», Иранамэ, 2010, № 3, стр. 151.

[43] **Geiger W.**, Ostīrānische Kultur im Altertum, Erlangen, 1882, S. 66. Մարդերը համարվել են քրդերին ազգակից ցեղեր կամ էլ ուղղակի քրդական ցեղ: Այս մասին կարծիքները տե՛ս **Վարդանյան Վ.**, Մարդերը Վասպուրականում, էջ 50:

[44] **Грантовский Э.**, նշվ. աշխ., էջ 374: **Меликов Р.**, Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI–IV вв. до н.э.), Баку, 2003, стр. 160. Վերջինս մարդերին և ամարդներին դիտում է իրանական ծագմամբ ազգակից ցեղեր, սակայն այսպիսի տարբերակումը ճիշտ չէ: Համմտ. Սագարտա-Ասագարտա, պարներ-ապարներ, մադայ-ամադայ և այլն:

[45] **Грантовский Э.**, նշվ. աշխ., էջ 373: **Меликов Р.**, նշվ. աշխ., էջ 166, 167:

ուղղել են արանիակներ՝ կապելով «աղվանական ցեղերի նախահայր Առանի հետ»[46] կամ էլ կապել են Հերոդոտոսի էնարիների հետ, որոնք սկյութական քրմերի հատուկ դաս էին[47]: Ինչևէ, այս անվանումն արդեն ցույց է տալիս, որ անարիակների հարևանությամբ բնակվում էին իրանական ցեղեր: Անարիակների մասին սկզբնաղբյուրների տեղեկությունները հետևյալն են: Պոլիբիոսը անարիակներին հիշատակում է Մարաստանի հյուսիսային հատվածում[48]: Անարիակներին մի քանի անգամ հիշատակում է Ստրաբոնը: Աշխարհագետը մի դեպքում անարիակներին հիշատակում է կադուսիների և մարդերի միջև[49], մյուս դեպքում՝ գելերից, կադուսիներից, ամարդներից, ուիտիներից հետո[50]: Պլինիոս Ավագը անարիակներին տեղադրում է տապյուրների և վրկանների միջև[51]: Պլինիոսի այս տեղեկությունը համապատասխանում է Ստրաբոնի երկրորդ տեղեկությանը՝ անարիակներին տեղորոշելով մարդերից արևելք: Անարիակներին մարդերից արևմուտք հիշատակում է Պտղոմեոսը[52], որը համապատասխանում է Ստրաբոնի առաջին տեղեկությա-

---

[46] **Тревер К.**, Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н.э.-VII в. н.э). Москва-Ленинград, 1959, стр. 143.

[47] **Еремян С.Т.**, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, № 4, стр. 52. Էնարիների անունը բացատրվել է որպես «ոչ տղամարդկային» (տե՛ս **Доватур А., Каллистов Д., Шишова И.** Народы нашей страны в "Истории" Геродота. Москва, 1982, стр. 305): Կարծիք է հայտնվել, որ անարիակ չի նշանակում «ոչ արիացիներ» և համապատասխանում է հայերենի *անրյակ «անրջական, անուրջի վերաբերյալ» բառին (տե՛ս **Սարկվարտ Չ.**, Պարսկահայք նահանգը, ՊԲՀ, 1961, № 2, էջ 215: **Herzfeld E.**, նշվ. աշխ., էջ 196):

[48] **ИДПСК**, ВДИ, 1947, 3, стр. 301.

[49] **Страбон**, стр. 480, 485.

[50] **Անդ**, էջ 481:

[51] **Pliny**, Natural History, Vol. II, VI, 46, p. 370.

[52] **Claudii Ptolemaei Geographia**, t. II, VI, 2, 5, p. 86.

նը: Մեր կարծիքով անարիակների երկու տարբեր տեղորոշումներն էլ ընդունելի են, ընդ որում անարիակների՝ մարդերից արևելք տեղադրվող խումբը մասամբ կարող է նույնանալ Աքեմենյան Պարսկաստանի XI սատրապության մեջ հիշատակվող պավսիկներին, պանտիմաթներին և դարեյտներին[53] և, հնարավոր է, նաև այլ ցեղերի. օրինակ, ուիտիներին, որոնք թերևս Պտղոմեոսի վադասիներն[54] են, ստավրերին[55]: Կադուսիների և մարդերի միջև հիշատակվող անարիակներն էլ աշխարհագրական առումով կարող են նույնանալ դրիբյուկ-դելմիկներին և գելերին, հետևաբար՝ այս դեպքում անարիակների հավաքական անվան տակ ներկայանում են իրանական ցեղերը, որոնք հավանաբար համապատասխանում են «Աշխարհացոյց»-ում հիշատակված Անար(ի)ական Մարքին[56]:

***Դերբիկներ-դրիբյուկներ-դելմիկներ:*** Պորփյուրոսը դերբիկներին հիշատակում է մասսագետների հարևանությամբ[57]: Դատելով Ստրաբոնի տեղեկությունից՝ դերբիկները գտնվել են վրկաններից արևելք կամ հյուսիս, քանի որ արևմտյան ուղղությամբ վրկաններից հետո գալիս են ամարդները, իսկ մեկ այլ տեղեկության մեջ ամասիացի աշխարհագետը տապյուրներին, որոնց երկիրը նախկինում պատկանել է Մարաստանին, հիշատակում է վրկանների և

---

[53] **Հերոդոտոս**, III, 92:

[54] **Humbach H., Ziegler S.**, Ptolemy Geography, book 6, pp. 44-45.

[55] **Pliny**, Natural History, Vol. II, VI, 46, p. 370.

[56] **«Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց»**, էջ 12:

[57] **ИДПСК**, ВДИ, 1948, 2, стр. 311. Դերբիկներին իբր նվաճում է Նինոսը (տե՛ս **Դիոդորոս Սիկիլիացի**, էջ 17): Դերբիկներին հիշատակում է Ռուփոսը (տե՛ս **Ռուփոս**, էջ 282):

դերբիկների միջև[58]: Տապյուրների երկիրը, իրոք, գտնվել է Կասպից ծովի հարավային ափին և համապատասխանում է Տապրստանին[59], իսկ դերբիկները գտնվել են ոչ միայն վրկաններից արևելք և հյուսիս, այլև արևմուտք: Ստրաբոնի կողմից տապյուրների տեղադրությունը դերբիկների և վրկանների միջև հաստատվում է նաև Պտղոմեոսի տեղեկությամբ: Դերբիկները Պտղոմեոսի մոտ հիշատակվում են Մարաստանի նկարագրության մեջ՝ գելերի և ամարիակների միջև: Դրիբյուկները դրյուբակտներ և դերբիկներ ձևերով հիշատակվում են Մարգիանայի և Սոգդիանայի նկարագրության մեջ[60], ինչը խոսում է այն մասին, որ դերբիկները եղել են վաչկատուն ցեղ, ինչպես տապյուրները, որոնք հիշատակվում են նաև Մարգիանայի կազմում[61]: Դրիբյուկներ-դրեբիկներին հիշատակում է Պլինիոս Ավագը[62]:

---

[58] **Страбон**, стр. 486, 491. Դերբիկներին կաղուսիների և մարդերի (Mardianum) միջև հիշատակում է նաև Անանուն Ռավեննացին (տե՛ս **Ravennatis Anonymi Cosmographia**, II, 8, p. 60):

[59] Տե՛ս **Մատենագիրք Հայոց**, Բ հատոր, էջ 2157, 2174, 2190; **«Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի»**, Վենետիկ, 1862, էջ 95: Տապուրաստանի՝ Պատիշխվարգարի հին մայրաքաղաքն էր Սարին, իսկ Սասանյանների ժամանակ՝ Ամոլը (տե՛ս **Колесников А.**, Иран в начале VII века, Палестинский сборник, Ленинград, 1970, стр. 101), որը «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տապրստանից առանձին: Տապուրներին Վրկանի հարևանությամբ՝ լեռներում, հիշատակում է Արիանոսը (տե՛ս **Արիանոս**, էջ 117), իսկ Տապյուրների լեռները, այսինքն՝ Էլբուրսը, Վրկանից ծովից ոչ հեռու հիշատակում է Պոլիբիոսը (տե՛ս **The General History of Polybius**, Vol. II, by Mr.J. Hampton, London, 1809, p. 218): Թուսի մայրաքաղաք Տաբարանը կապում են տապյուրների կամ տոպերների էթնանվան հետ (տե՛ս **Хуршудян Э.**, «Города Ирана», стр. 133):

[60] **Humbach H., Ziegler S.**, Ptolemy Geography, book 6, pp. 42-43, 148-149, 168-169; **Tarn W.W.**, Patrocles and the Oxo-Caspian Trade Route, Journal of Hellenic Studies, Vol. 21, 1901, p. 17.

[61] **Humbach H., Ziegler S.**, Ptolemy Geography, book 6, pp. 148-149.

[62] **Pliny**, Natural History, Vol. II, VI, 48, p. 372.

Դերբիկները Կտեսիասի մոտ Միջին Ասիայի արևմտյան մասի սկյութական ցեղերի անվանումն է և հավանաբար, փոխարինում է մասսագետներին[63]: Ի. Վ. Պյանկովի կողմից դերբիկների նույնացումը Հերոդոտոսի օրթոկորյուբանտիներին ու տեղադրումը Կասպից և Արալյան ծովերի միջև[64], չնայած Մարաստանի հետ տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել, կասկածելի է, քանի որ նույնացումն այնքան էլ հիմնավորված չէ: Ըստ էության, Կասպից ծովի հարավային ափին գելերից հետո հիշատակվող դրիբյուկները համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի Դլմունք-Դելումքին[65՝] հետագայի դեյլեմիտների երկրին[66՝]

---

[63] **Пьянков И.В.**, Средняя Азия в известиях античного историка Ктесия (текст, перевод, примечания). Душанбе, 1975, стр. 6; **Խորիկյան Հ.**, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010, էջ 32:

[64] **Пьянков И.В.** «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э., ВДИ, 1965, № 2, стр. 43.

[65] **Մատենագիրք Հայոց**, Բ հատոր, էջ 2157, 2174, 2190; **«Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք»**, Վենետիկ, 1843, էջ 592:

[66] **Պատմութիւն Սեբէոսի**, էջ 360, 361, ծնթ. 653: Դելմիկները բազմիցս հիշատակվում են հայկական աղբյուրներում. տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատասիրությամբ՝ Վ.Մ. Վարդանյանի, Երևան, 1985, էջ 468: **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 337: **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական**, հրատ.՝ Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 188: **«Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի»**, էջ 95: **Պատմութիւն Սեբէոսի**, էջ 172, 173: **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 11: **Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ**, Թիֆլիս, 1912, էջ 103: Հայկական աղբյուրներում դելմիկների քննությունը տե՛ս **Շալջյան Ս.**, Դելմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան, Տեղեկագիր, թիվ 5-6, 1941, էջ 107-115: **Յուզբաշյան Կ.**, Դելմիկները Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեջ, Բանբեր Մատենադարանի, 1960, թիվ 5, էջ 307-311:

Գիլանի լեռնային մասին[67]: «Աշխարհացոյց»-ում գրված է. «...եւ մտովք գետոյն որ կոչի Սառառովր, յորում Դերպիկէս գաւառ, զոր կարծեմ Դիլումս...»[68]: Դեյլեմը հնում արևելքում տարածվել է ավելի հեռու՝ ընդգրկելով ներկայիս Մազանդարանի մի մասը[69]:

Ահա այսպես են մեզ ներկայանում գելերի, մարդերի, անարիակների, դելմիկների տեղադրությունները և պատմաաշխարհագրական այլ բնույթի տեղեկությունների քննությունը:

KHORIKYAN HOVHANNES

## ON THE ETHNIC STRUCTURE OF MEDIA

***Keywords:*** Media, Armenia, Persia, Gelae, Mardi, Anariacae, Derbices, Plutarch, Pliny the Elder, Xenophon, Strabo.

---

**Արզարյան Գ.**, «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 199, 200:

[67] **Колесников А.**, Иран в начале VII века, стр. 101. Թ. Նյոլդեքեն կադուսիներին նույնացնում է ներկայիս Գիլյանի Դելամացի կոչվող լեռնական ցեղերին, որոնք երբեք չնվաճվեցին Սասանյանների կողմից (տե՛ս **Nöldeke Th.**, Aufsätze zur Persischen Geschichte, Leipzig, 1887, S. 95): Տե՛ս նաև **Bosworth C.E.**, Dailamīs in Central Iran: The Kākūyids of Jibāl, Iran, Journal of the British Institute of Persian Studies, Vol. 8, Issue 1, 1970, p. 73.

[68] **«Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց»**, էջ 12:

[69] **Колесников А.** Иран в начале VII века, стр. 101. Վ. Մինորսկին ենթադրում է, որ Deilam-ը այդ տեղանվան արաբականացված ձևն է, իրականում հնչում էր հավանաբար Delam կամ անգամ Delim (տե՛ս **Minorsky V.**, La domination de Dailamites, London, Iranica, Twenty Articles, 1964, pp. 12-30): Ռեյը, Դեմավենդը, Դելման-Դեյլամը և Պադիշվարգար-Տապրըստանը հիշատակվում են «Կարնամակում» (տե՛ս **"Книга деяний Ардашира сына Папака"**, транскрипция текста, пер. со среднеперс., введ., коммент. и глоссарий О.М. Чунаковой, Москва, 1987, стр. 72, 92).

The study of the history of Media is very significant for Armenia too, as the past of both countries is closely related to each other in different historical periods. In the following article the information about the Gelae, the Mardi, the Anariacae, the Derbices, kept in the primary source, is being discussed. Research shows that the given tribes belonged to the Iranian World without any exceptions.

Some important and wrinkled issues on the historical geography of the 10th Satrapy were examined in the article, the elucidation of which has an important meaning for studying the history of the Achaemenid Empire and Ancient Iran.

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

# ՆԵՐՍԵՀ ՍԱՍԱՆՅԱՆԸ ԵՎ ԳԱՀԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ 274-293 ԹԹ.

***Բանալի բառեր՝*** Ներսեհ Սասանյան, Պարսկաստան, Մեծ Հայք, Տիզբոն, Շապուհ, Որմիզդ, Քաաբա-ի Զարդուշտ, Վարահրան, Հռոմ:

273-274 թթ. առեղծվածային պայմաններում վախճանվեցին, իսկ ավելի հավանական է՝ սպանվեցին, նախ՝ Հայաստանի մեծ արքա և գահաժառանգ Որմիզդակը, ապա և արքայից արքա Որմիզդ I-ը (272-274 թթ.)[1]: Համընդհանուր ճանաչում գտած թագաժառանգի բացակայությունն առաջացրեց գահակալական ճգնաժամ, որի պայմաններում զրադաշտական կղերը և իրանական բարձր ազնվականությունը Իրանի գահաժառանգության հարցին միջամտելու պատեհ առիթ ստացան:

Որմիզդ I-ի վախճանից հետո ասպարեզում մնացին Շապուհ I-ի որդիներից ավագը՝ Վարահրանը, և կրտսերը՝ Ներսեհը, որոնք միանգամայն տարբեր դեր ու կշիռ ունեին Սասանյան վարչաքաղաքական համակարգում:

Ներսեհը Շապուհ I-ի կրտսեր որդին էր՝[2] ծնված թագուհիների թագուհի Ադուր-Անահիտից: Հռոմի դեմ Շապուհ I-ի երկրորդ պատերազմի ընթացքում (245-249 թթ.) Եր-

---

[1] **Մելիքյան Ա.**, Սալմաստի ժայռաքանդակը. պատմական Հայաստանի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան, 2016, էջ 172-174:

[2] **Weber U.,** Wahrām II, König der Könige von Ērān und Anērān, Iranica Antiqua, 2009, № 44, S. 568.

սեհը նշանակվել էր Սակաստանի կառավարչի պաշտոնում՝[3] փոխարինելով տեղական հնդպարթևական արքայատան ներկայացուցիչներին: Մոտավորապես 260 թ. ստեղծված Քաաբա-ի Զարդուշտի եռալեզու արձանագրությունը (ŠKZ)[4] փաստում է Սասանյան արքայատան մեջ Ներսեհի բավականին պատվավոր դիրքը: Գահաժառանգ և Հայաստանի մեծ արքա Որմիզդ-Արտաշիրի ու Մեշանի արքա Շապուհի պես նա հոր կողմից արժանացել է անվանական ատրուշան *(‘twr Hwsrwb)* ունենալու պատվին. *«Խոսրով-Ներսեհ անվամբ կրակը, մեր (Շապուհ I-ի - Ա.Մ.) որդու՝ արիի, Մազդային երկրպագող Ներսեհի՝ Հինդի, Սակաստանի և Թուրանի և մինչև ծովափի արքայի հոգու համար, որպեսզի հավերժանա նրա անունը»*[5]:

Սասանյան տերության պետական համակարգում Ներսեհի զբաղեցրած բավականին բարձր և հեղինակավոր դիրքի մասին է վկայում նաև նրա տիտղոսի պարունակած *«արի, Մազդային երկրպագող»* էպիտետը, որը մտնում էր Իրանի արքայից արքայի պաշտոնական տիտղոսի մեջ: Այդ բացառիկ պատիվը ուղիղ համեմատական էր տերության ռազմաքաղաքական կյանքում նրա իրականացրած գործառույթին[6]: 260-ական թթ. Ներսեհի ղեկավարած լայնածիր շահրը ներառում էր ոչ միայն Սակաստանը, այլև տերության

---

[3] **Луконин В.** Завоевания Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии. ВДИ, 1969, № 1-2, стр. 37.

[4] Շապուհ I-ի Քաաբա-ի Զարդուշտի արձանագրության հրապարակումները տե՛ս **Sprengling M.**, Third Century, Iran, Sapor and Kartir, Chicago, 1953; **Maricg M.**, Res Gestae divi Saporis, Syria, XXXV, 1956; **Huyse Ph.**, Die dreisprachige Inschrift Šābuhrs I. an der Ka'ba-i Zardušt (ŠKZ), 2 vols., Corpus Inscriptionum Iranicarum III, London, 1999, Text I-II.

[5] **ŠKZ**, MPers. § 23, 24; Phl. § 19; Gk. § 42.

[6] **Weber U.,** նշվ. աշխ., էջ 160-168:

արևելքում նվաճված երկրամասերը: Ներքուստ դեռևս անհանգիստ այդ վարչամիավորն ապահովում էր Սասանյան տերության արևելյան սահմանների անվտանգությունը: Հատկապես Հռոմի դեմ պատերազմի պայմաններում արևելյան այս շահրի անդորրն ու հուսալի պաշտպանությունը Շապուհին ազատում էին ավելորդ խնդիրներից: Մյուս կողմից՝ հիշյալ ժամանակաշրջանում Սասանյան տերության արևելյան սահմանների ընդարձակման փաստը ինքնին խոսում է Ներսեհի ռազմագիտական ունակությունների մասին: Ներսեհն ամուսնացած էր Շապուհ I-ի դստեր՝ իր քրոջ՝ Շապուհդուխտակի[7] հետ, որը, դառնալով նրա կինը, ավանդական կարգով ստացել էր *«սակերի թագուհի»* տիտղոսը[8]:

Վարահրանի դերն ու կշիռը անհամեմատ փոքր էին: Դատելով Դուրա-Եվրոպոսի «Պալմիրյան աստվածների տաճարի» որմնանկարներից մեկի մանրամասներից՝[9] 250-ական թթ. նա մասնակցել էր Հռոմի դեմ Շապուհ I-ի վարած երկրորդ պատերազմին: Սակայն դրա ավարտին նրա դերը շարունակում էր աննշան լինել: ŠKZ-ի այն պարբերություններում, որտեղ խոսվում է Վալերիանոս կայսեր դեմ տարած փառահեղ հաղթանակի առթիվ Շապուհ I-ի կատարած ընծայաբերումների մասին, Վարահրանի անունը չի նշվում անվանական ատրուշան ունենալու պատվին արժանացած Սասանյան արքայազների շարքում[10]: ŠKZ-ում Վարահրանը եզակի հիշատակված է արքայատան անդամների հոգու

---

[7] **Луконин В.** Культура Сасанидского Ирана, Москва, 1969, стр. 198.

[8] **ŠKZ**, Phl. ʿ 20-21. šhypwhrdwhtkyh Skn MLKTH.

[9] **Луконин В.,** նշվ. աշխ., էջ 58:

[10] Տե՛ս **ŠKZ**, MPers. ʿ 18-19.

փրկության համար զոհաբերություններ սահմանելու առիթով՝ «*Գիլյանի արքա*»[11] անպաճույճ տիտղոսով: Այստեղ նա եղբայրների շարքում առաջինն է: Սակայն դա պայմանավորված է բացառապես նրա երեցությամբ[12]: Մինչդեռ արձանագրության այս հատվածում ևս եղբայրների նկատմամբ նրա պատվո և գործնական ստորակարգությունն ակնհայտ է: Հոգու փրկության համար զոհաբերության արժանացածների ցուցակում գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրից բացի տեսնում ենք նաև նրա որդուն՝ Որմիզդակին[13], Մեշանի վաղամեռիկ արքա Շապուհից բացի նրա այրուն՝ Դինակ թագուհուն[14], որդիներին՝ Որմիզդին, Որմիզդակին, Օդաբախտին, Վարահրանին, Շապուհին, Պերոզին ու դստերը՝ Շապուհդուխտակին[15], Հինդի, Սակաստանի և Թուրանի արքա Ներսեհից բացի նաև նրա կնոջը՝ Շապուհդուխտակ թագուհուն[16] ու դուստրերին՝ «Սակերի տիրուհի» Ներսեհդուխտին[17] և Որմիզդդուխտակին[18]: Մինչդեռ Գիլյանի արքա Վարահրանի ընտանիքի մի որևէ այլ անդամ հիշատակված չէ[19]:

---

[11] **ŠKZ**, MPers. 25: wr'hr'n Gyl'n MLK'; Phl. 20. Wryhr'm Gyln MLK'.

[12] **Weber U.**, Narseh, EIr, online edition, 2016, available at http://www.iranicaonline.org/articles/narseh-sasanian-king (accessed on 23 May 2016).

[13] **ŠKZ**, MPers § 21.

[14] **ŠKZ**, MPers § 20.

[15] **ŠKZ**, MPers § 21.

[16] **ŠKZ**, MPers § 20- 21.

[17] **ŠKZ**, Mpers § 21.

[18] **ŠKZ**, Mpers § 21.

[19] Վ. Գ. Լուկոնինի կարծիքով Վարահրանի որդու՝ Վարահրանի անվան բացակայությունը ŠKZ-ի համապատասխան պարբերության մեջ պայմանավորված է նրանով, որ արձանագրության ստեղծման ժամանակ նա դեռևս ծնված չէր (**Луконин В.** Варахран II и Нарсе, ВДИ, 1964, No 1, стр. 51): Սակայն Վարահրանը Շապուհ I-ի ավագ որդին էր, և հետևաբար՝ նա

Սրանից բխող եզրակացությունը միանշանակ է. Շապուհ I-ի արքունիքում նրա ավագ որդին պատվո հարաբերության մեջ և պետական կառավարման համակարգում ստորադասված է եղել իր եղբայրներին: Այդ իրողությունն արտացոլված է նաև Շապուհ I-ի Նախշ-ի Ռաջափի ժայռաքանդակի վրա, որտեղ Գիլյանի արքա Վարահրանը ներկայացված է Շապուհի մյուս որդիներից՝ Որմիզդ-Արտաշիրից, Շապուհից և Ներսեհից հետո և հասակով անհամեմատ ցածր[20]: Սասանյան արքունիքում Վարահրանի երկրորդական դրությունից Ռ. Ֆրայը եզրակացնում է, որ նա կամ ծնվել է ավելի ստորակարգ թագուհուց, կամ էլ եղել է հարճորդի[21]:

Հայտնի չէ, թե Սասանյան վարչաքաղաքական համակարգում Որմիզդ I-ի օրոք Վարահրանի դրության մեջ փոփոխություն կատարվե՞լ է, թե՞ ոչ: Վ. Լուկոնինն[22] ու Ս. Դաշկովը[23] ենթադրում են, որ Վարահրանը նախքան արքայից արքայի գահը ստանձնելը կառավարել է Կրմանում: Աղբյուրագիտական հենքի բացակայության պատճառով դժվար է համաձայնել կամ առարկել այդ կարծիքին: Սակայն, եթե անգամ այն համարենք ընդունելի, ենթադրվող փոփոխությունը հազիվ թե Սասանյան պետական համակարգում Վարահրանին նշանակալից առաջխաղացում ապահոված լինի,

---

ավելի վաղ, քան իր եղբայրները, պետք է որ ժառանգներ ունենար՝ թեկուզ և իգական սեռի:

[20] **Луконин В.** Культура Сасанидского Ирана, Москва, 1969, стр. 61, рис. 9.

[21] **Frye R.N.**, The Political History of Iran Under Sasanides, in: Cambridge History of Iran, Vol. 3 (1), Cambridge, 1983, p. 127.

[22] **Луконин В**. Иран в III веке. Москва, 1979, стр. 59.

[23] **Дашков С.** Цари царей-Сасаниды: Иран III-VII вв. в легендах, исторических хрониках и современных исследованиях. Москва, 2008, стр. 75.

քանի որ Կրմանը վաղուց հպատակեցված երկրամաս էր[24] և, ինչպես Գիլյանը, զուրկ էր ռազմավարական նշանակությունից:

Բնականոն հարց է ծագում, թե որն է եղել պատճառը, որ գահի թափուրության պայմաններում իրանական ավագանին կատարել է վատագույն ընտրությունը՝ նախապատվությունը տալով հնարավոր հավակնորդներից նվազ հեղինակավորին և տերության կառավարմանն անպատրաստ անձնավորությանը: Այդ հարցի բացատրությունը կարելի է գտնել III դ. 70-ական թթ. Սասանյան տերության ներքաղաքական կյանքում տարբեր խմբավորումների միջև ընթացող տակավին լուռ, բայց լարված պայքարի համատեքստում: Կենտրոնամետ խմբավորումը, որը կանգնած էր արքայական ինքնակալության ամրապնդման և տերության մեջ կրոնական հանդուրժողականության դիրքերում, Որմիզդ I-ի վախճանից հետո մոլորված էր: Զրկվելով հուսալի հովանավորությունից՝ նա ըստ էության ասպարեզը զիջել էր զրադաշտական հոգևորականությանն ու շատ հարցերում նրա հետ կապված իրանական բարձր ազնվականությանը: Սրանցից առաջինը ձգտում էր մեծացնել պետության քաղաքական կյանքում իր դերակատարումը և զրադաշտականությունը դարձնել տերության պաշտոնական կրոն, իսկ երկրորդը, դժգոհ Սասանյան առաջին արքաների կենտրոնաձիգ քաղաքականությունից, ձգտում էր տերության կազմում պահպանել իր հարաբերական ինքնավարությունը:

---

[24] **Книга деяний Ардашира, сына Папака**. Транскрипция текста, перевод со среднеперсидского, введение, коментарий и глоссарий О.М. Чунаковой. Москва, 1987, стр. 72. **The History of al-Tabari,** Vol. V, The Sasanids, the Byzantines, the Lakhmids, and Yemen, translated and annotated by C. E. Bosworth, New York, 1999, pp. 9-10.

Չնայած իրենց նպատակների տարբերությանը՝ երկու խմբավորումներն էլ հասկանում էին, որ դրանց կարելի է հասնել թույլ և կառավարելի միապետի իշխանության դեպքում: Ուստի սրանք, որ իրենց նպատակի ճանապարհից նախապես հեռացրել էին նախ՝ գահաժառանգ Որմիզդակին, ապա և արքայից արքա Որմիզդ I-ին, Շապուհ I-ի ողջ մնացած միակ լիիրավ որդու՝ Ներսեհի գահակալությունն էլ համարում էին չափազանց լեգիտիմ, որպեսզի նրա հետ իրենց իրավունքների ընդլայնման շուրջ առք ու վաճառքի հույսեր կապեին: Բացի այդ, վերոնշյալ երկու խմբավորումները պետք է որ զգուշանային Ներսեհի կողմից ընտանեկան վրեժխնդրության հեռանկարից:

Մ. Հաթերն ու Մ. Բրոսիուսը Ներսեհի շրջանցման գործում կարևորում են հատկապես կրոնական գործոնը: Մ. Հաթերի կարծիքով Ներսեհը Շապուհ I-ի ու Որմիզդ I-ի օրինակով[25] հանդուրժամետ էր Իրանում տարածված դավանանքների նկատմամբ[26], մինչդեռ Վարահրանը զրադաշտականության մոլի հետևորդ էր, որի պատճառով էլ հոր և եղբոր կողմից հեռացվել էր քաղաքական առաջնաբեմից[27]: Այժմ՝ գահի թափուրության և համընդհանուր ճանաչում ստացած գահաժառանգի բացակայության պայմաններում Վարահրանը զրադաշտական կղերի և անձամբ մոգպետ

---

[25] Շապուհ I-ի և Որմիզդ I-ի կրոնական հանդուրժողականության մասին տե՛ս **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, Numen, 1993, Vol. 40, No. 1, pp. 6, 11; **Виденгрен Г.** Мани и манихейство. Санкт-Петербург, 2001, стр. 53-63; **Смагина Е.** Манихейство по ранним источникам. Москва, 2011, стр. 43-49.

[26] **Brosius M.**, The Persians, New York, 2006, pp. 147-148.

[27] **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, p. 11; **Brosius M.**, նշվ. աշխ., էջ 146,147:

Կարտիրի աչքում պետք է որ նախապատվելի, եթե չասենք իդեալական թեկնածու լիներ: Սակայն կար ավելի կարևոր հանգամանք. օրինական իրավունքներից զուրկ և նախորդ արքաների կողմից իշխանությունը ժառանգելուն անպատրաստ թողնված Վարահրանը պետք է որ զգար իրեն իշխանության ղեկին հասցրած խմբավորումների հանապազօրյա աջակցության կարիքը և հետևաբար՝ այդ աջակցության դիմաց պատրաստ պետք է լիներ ցանկացած զիջման[28]: Հաջորդած տարիներին Իրանի ներքաղաքական կյանքի շարժընթացը պարզորոշ է դարձնում, թե որոնք են եղել գահի այս թեկնածուին հարուցված հիմնական պահանջները՝ Որմիզդակի և Որմիզդ I-ի սպանության մասնակիցների համաներում, Մանիի և մանիքեականության նկատմամբ հաշվեհարդար, զրադաշտականության պաշտոնականացում, իրանական բարձր ազնվականության իրավունքների ընդլայնում: Այսպիսով, 274 թ. պալատական անդրկուլիսյան համաձայնության[29] արդյունքում Սասանյան տերության գահը հանձնվեց Վարահրանին (Վարահրան I, 274-277 թթ.):

---

[28] **Մելիքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 171:

[29] Մեզ անհավանական է թվում Ի. Սիվենի և Կ. Մաքսիմյուկի վարկածն առ այն, որ Գիլյանի արքա Վարահրանը «ղեկավարում էր դաշտային բանակը և իր եղբոր (Որմիզդ I-ի - Ա.Մ.) մահվանից հետո ի զորու էր իր պայմանները թելադրելու մյուս եղբայրներին» (**Syvänne I. and Maksymiuk K.,** The Military History of the Third Century Iran, Siedlce, 2018, p. 110): Միևնույն ժամանակ Սասանյան տերության ներքին կյանքի մասին առկա պատկերացումներն առիթ չեն տալիս համաձայնելու նաև Վ. Բայբուրդյանի կարծիքին, ըստ որի՝ Վարահրանը իշխանության է հասել գահակալական պայքարում Սակաստանի արքա Ներսեհի դեմ տարած հաղթանակի արդյունքում (**Բայբուրդյան Վ.,** Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 123):

Արտաքուստ կատարված ընտրությունը թվում էր օրինական: Սասանյանները իշխանության էին եկել որպես տոհմ, և իշխանությունը պետք է պատկաներ տոհմում ավագին: Սակայն իրականում կատարված ընտրությունը արմատական շեղում էր նշանակում Սասանյան առաջին արքաների գծած քաղաքական ուղենիշից, ըստ որի՝ գահաժառանգությունն իրականացվում էր ոչ թե ավագության կարգով, այլ համաձայն պետական համակարգում դեռևս նախորդ արքայի կողմից նախասահմանված պատվո և գործնական աստիճանակարգության[30]: 270-ական թթ. գոյություն չուներ գահաժառանգության կայուն կարգ, ուստի այս կամ այն սկզբունքին նախապատվություն տալը մյուս կողմի տեսանկյունից պետք է գնահատվեր իբրև ուզուրպացիա[31]: Բայց, ինչպես երևում է, զրադաշտական կղերի և իրանական տոհմիկ ազնվականության ազդեցությունը կաշկանդել է Ներսեհին՝ ստիպելով նրան լռությամբ համակերպվել ստեղծված իրողությանը: Միայն հետագայում՝ արքայից արքա դառնալուց հետո, Ներսեհը Վարահրան I-ի Բիշապուհի ինվեստիտուրային ժայռաքանդակի վրա ջնջել է տվել այդ արքայի դեմքն ու անունը և փորագրել է տվել իր դեմքն ու տիտղոսը՝ ասես վրեժխնդիր լինելով եղբորից այն բանի համար, որ նա Որմիզդ I-ի մահվանից հետո, ոտնահարելով իր իրավունքները, ապօրինաբար տիրացել էր Իրանի գահին[32]:

Վարահրան I-ի եռամյա կառավարումը ընթացավ նրան իշխանության բերած իրանական ազնվականության և զրադաշտական կղերի գրած կրոնաքաղաքական սցենա-

---

[30] **Մելիքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 102-112:

[31] **Луконин В.** Варахран II и Нарсе, стр. 50.

[32] **Луконин В.** նշվ. աշխ., էջ 51:

րով: Նրանց պահանջների բավարարման դիմաց Իրանի նոր արքան, ըստ երևույթին, հնարավորություն է ստացել իր նախորդների օրինակով Հայաստանի «մեծ արքա» նշանակելու որդուն՝ Վարահրանին (հետագայում արքայից արքա Վարահրան II, 277-293 թթ.): Այդ նշանակման վերաբերյալ աղբյուրագիտական կամ մի որևէ այլ տիպի վկայություն չունենք: Սակայն այն բխում էր մի կողմից նոր արքայի գահակալությունից անմիջապես հետո թագաժառանգին հրապարակելու, մյուս կողմից՝ գահաժառանգին պարսկական զորքի զորագլուխ և Հայաստանի «մեծ արքա» նշանակելու Սասանյանների նախընթաց փորձից[33]: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ինչպես Շապուհ I-ի օրոք, Իրանի ապագա վեհապետի հարցը վճռվել է Վարահրան I-ի գահակալության սկզբին: Սա երկրորդ հարվածն էր Ներսեհին, որը թեև գահաժառանգության հարցում մի անգամ արդեն շրջանցվել էր, բայց պետք է որ Վարահրան I-ի վախճանից հետո Սասանյան գահը «ավագության կարգով» ստանալու հույսեր փափագեր: Սակայն Ներսեհը այս նոր վիրավորանքը նույնպես տարավ լռությամբ[34]: Վարահրան I-ի կառավարման վերջերին Ներսեհի քաղաքական կշիռը Սասանյան տերության վարչաքաղաքական համակարգում հերթական անգամ նսեմացվեց, երբ նա նշանակվեց Հայաստանի կառավարիչ:

Պատմագիտության մեջ Ներսեհի այս նոր նշանակման ժամանակի և իրավաքաղաքական պատճառների հարցերին պատշաճ ուշադրություն չի դարձվել, իսկ առանձին դեպքերում էլ դրանք մեկնաբանվել են միանգամայն սխալ

---

[33] **Մելիքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 102-133:

[34] **Frye R.N.,** նշվ. աշխ., էջ 128:

դիրքերից: Այսպես, Ս. Երեմյանը և Կ. Թումանովը, հավանաբար փորձելով ծածկել Որմիզդակի (ըստ Մ. Խորենացու՝ Շապուհի) մեկամյա կառավարումից[35] հետո Հայաստանում առաջացած կառավարչական բացը, այստեղ Ներսեհի գահակալության սկզբնատարին համարում են 273 թ.: Ընդ որում առաջինի կարծիքով Ներսեհը «Հայաստանի մեծ արքայի» գահը խլել էր Որմիզդակից՝ արքայից արքայի գահին տիրանալու հույսով[36], իսկ Կ. Թումանովը ենթադրում է, որ *«Որմիզդ-Արտաշիրը, դառնալով մեծ արքա (արքայից արքա - Ա.Մ.), իր եղբորը նստեցրել է Հայաստանի գահին, որն այդ ժամանակ թափուր էր»*[37]: Նրա կարծիքով Ներսեհը Հայաստանում սկսել է կառավարել 273 թվականից՝ Արևելքից Ավրելիանոս կայսեր հեռանալուց հետո[38]:

Հայաստանի կառավարչի պաշտոնում Ներսեհի նշանակումը Որմիզդ I-ին են վերագրում նաև Ի. Սիվենն ու Կ. Մաքսիմյուկը, որոնց համոզմամբ Շապուհ I-ի մահվանից հետո Սակաստանի արքա Ներսեհը ցանկացել է զենքի միջոցով վիճարկել գահի նկատմամբ գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրի իրավունքները, սակայն իրանական ազնվականության միջնորդությամբ տեղի է տվել և որպես հատուցում ստացել Հայաստանն ու այլ տարածքներ այն հաշվով, որ նա պետք է հաջորդի Որմիզդ I-ին[39]: Նրանց կարծիքով իրա-

---

[35] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Հարութիւնեան, Տփղիս, 1913, II, ՀԷ:

[36] **Երեմյան Ս.**, Հայաստանի քաղաքական վիճակը III դարի վերջին քառորդում, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 59:

[37] **Toumanoff C.**, The third century Armenian Arshacids. A Cronlogical commentary. Revue des etudes Arméniennes. 1969, N VI, p. 257.

[38] **Նույն տեղում:**

[39] **Syvänne I. and Maksymiuk K.**, նշվ. աշխ., էջ 109:

կանում Վարահրան I-ն է, որ Որմիզդի մահվանից հետո Իրանի գահից հրաժարվելու դիմաց Ներսեհին նշանակել է Հայաստանի արքա[40]:

Սակայն հարկ ենք համարում նկատել, որ վերոնշյալ բոլոր կարծիքներն էլ հավասարապես խոցելի են, քանի որ հնարավոր չէ գտնել դրանք թեկուզ անուղղակիորեն հաստատող որևէ վկայություն կամ փաստարկ[41]: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչպես կարող էր Ներսեհը արքայից արքա Որմիզդ I-ի կենդանության օրոք վիճարկել պաշտոնապես ճանաչված գահաժառանգ Որմիզդակի իրավունքները, կամ թե «Հինդի, Սակաստանի և Թուրանի» արքան գործնականում ինչպես կարող էր Որմիզդակից խլել իր կառավարած շահրից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող Հայաստանը: Կ. Թումանովի, Ի. Սիվենի ու Կ. Մաքսիմյուկի մեկնաբանություններում ակնհայտ է նաև Սասանյան տերության ռազմական և վարչաքաղաքական համակարգում Հայաստանի՝ իբրև պարսից զորագլխի և գահաժառանգի ոստանի դերի անտեսում. Հռոմի դեմ Իրանի փաստացի պատերազմական դրության պայմաններում Որմիզդ I-ի կողմից Ներսեհին Հայաստանի կառավարչի պաշտոնում նշանակելը հավասարազոր պետք է լիներ նրան պաշտոնապես գահաժառանգ հայտարարելուն: Այդ դեպքում Որմիզդ I-ի

---

[40] **Syvänne I. and Maksymiuk K.**, նշվ. աշխ., էջ 111: Տե՛ս նաև **Weber U.**, նշվ. աշխ., էջ 153-160; **Նույնի՝** Narseh, EIr, online edition, 2016.

[41] Ս. Երեմյանն իր թեզը հիմնավորելու նպատակով հղում է Վ. Լուկոնինի «Культура Сасанидского Ирана» մենագրության 197-րդ էջին: Սակայն նշված էջում ոչ միայն Ս. Երեմյանի կարծիքին համահունչ ոչ մի խոսք չկա, այլև ներկայացված է Սասանյան արքայատան տոհմածառը, որտեղ Հայաստանում Ներսեհի գահակալության սկզբնատարին նշված է 276 թ.: Հմմտ. **Луконин В.** Варахра II и Нарсе. Стр. 52.

մահվանից հետո գահակալական ճգնաժամ չէր գոյանա, և վեհապետական գահի տնօրինության գործում էլ իրանական ազնվականությունը և զրադաշտական հոգևորականությունը որևէ մասնակցություն չէին ունենա: Վերջապես, եթե Ներսեհը վեհապետական գահի նկատմամբ իր իրավունքները կամովին զիջած լիներ Վարահրանին, արքայից արքա դառնալուց հետո եղբոր ինվեստիտուրային քանդակը եղծելու առիթ չէր ունենա:

Վերը բերված դիտարկումները հիմք են տալիս կարծելու, որ Ներսեհի նշանակումը Հայաստանի կառավարչի պաշտոնում պայմանավորվել է բացառապես Սասանյան տերության վարչաքաղաքական համակարգում Հայաստանի ունեցած դերի փոփոխությամբ: Սակայն դրա ազդակը եկել էր ոչ թե Սասանյան արքայատան առանձին անդամների հարաբերություններից, այլ արտաքին քաղաքականության ոլորտից:

Տակավին 223 թ. սկսված[42] և փոփոխակի հաջողություններով տասնամյակներ տևած պարսկա-հռոմեական հակամարտությունը շարունակվեց մինչև Վարահրան I-ի գահակալության վերջերը: Դեռևս Պալմիրայի իշխան Սեպտիմիոս Օդենատոսի դեմ 259-267 թթ. ծանր պայքարից[43], ապա Պալմիրյան երկրորդ պատերազմին անհաջող միջամտությունից հետո[44] ակներև էր դարձել, որ Սասանյան տերությունը սպառել է մեծածավալ նվաճողական քաղաքակա-

---

[42] **Մելիքյան Ա.**, Հայաստանն ու Սասանյան հեղաշրջումն Իրանում, գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, 2003, էջ 174, 175:

[43] **Farrokh K.**, Shadows in the Desert: Ancient Persia at War, Oxford, 2007, pp. 189-190; **Syvänne I. and Maksymiuk K.**, նշվ. աշխ., էջ 101:

[44] **Watson A.**, Aurelian and theThird Century, New York, 1999, p. 49; **Syvänne I. and Maksymiuk K.**, նշվ. աշխ., էջ 103:

նության ներուժը: Ամենայն հավանականությամբ պարսիկների կրած պարտությունները Իրանի կառավարող շրջաններին, հատկապես բարձր ազնվականությանը, հանգեցրել են Հռոմի հետ կայուն հաշտություն կնքելու գաղափարին: Նույն հետևությանը պետք է որ գար նաև Հռոմեական Արևելքում զրադաշտականությունը տարածելու հեռանկարներից հուսախաբ զրադաշտական կղերը: Այս տեսանկյունից չի բացառվում, որ Հռոմի հետ կայուն հաշտության հասնելը եղել է իրանական աշխարհիկ և հոգևոր ավագանու կողմից Վարահրան I-ին առաջադրված պահանջներից մեկը: Պարսից արքան այդ խնդիրը հաջողությամբ լուծեց իր գահակալության վերջերին, երբ Հռոմում առաջացավ հերթական քաղաքական ճգնաժամը[45]: Վարահրան

[45] 276 թ. Կապադովկիայի Տիանա քաղաքում բանակային խռովության զոհ գնաց կայսր Մարկոս Կլավիոս Տակիտոսը: Նրա մահվանից հետո արևելյան զորքերը կայսր հռչակեցին Մարկոս Ավրելիոս Պրոբոսին: Նա Տակիտոսի օրոք, ըստ երևույթին, նշանակվել էր Արևելքի գերագույն հրամանատար (տե՛ս **Грант М.,** Римские императоры, Москва, 1998, стр. 221), չճանաչեց Տակիտոսի եղբոր՝ Ֆլորիանոսի իշխանությունը, ինչը անխուսափելի դարձրեց նոր քաղաքացիական պատերազմը: Նման պայմաններում նորահռչակ կայսրին անհրաժեշտ էր ամրապնդել իր դիրքերը և ստանալ ոչ միայն հռոմեական մյուս զորքերի, այլև սենատի ճանաչումը: Նմանապես անհրաժեշտ էր պատժել Ավրելիանոս կայսեր սպանողներին և հոգալ դանուբյան և հռենոսյան սահմանների անվտանգության մասին, քանի որ Ավրելիանոսի սպանությունից հետո դրանք ենթարկվել էին լոնգիոնների, ալեմանների ու ֆրանկների հարձակումներին: Այս բոլոր խնդիրների լուծման համար նորահռչակ կայսրը 276 թ. իր տրամադրության տակ ուներ միայն կայսրության հռոմեական արևելյան զորքը, որը de jure պատերազմական վիճակում էր պարսիկների դեմ: Բնականաբար կայսրը չէր կարող դիմել արկածախնդրության և իր զորքերը տեղափոխել Եվրոպա՝ առանց իր թիկունքը պարսկական հարձակման վտանգից ապահովելու: Ուստի նրա կենսագրի հաղորդումը, թե Պրոբոսը. «Հաշտություն կնքելով պարսիկների հետ վերադարձավ Թրակիա» (The

I-ին հաջողվեց օգտվել նորահռչակ կայսր Պրոբոսի դժվարին ռազմաքաղաքական կացությունից և նրա հետ կնքել հաշտություն, որով վավերացվեցին տակավին 244 թ. Միսիխիսում կնքված[46], բայց անկատար մնացած պայմանագրի պայմանները: Ըստ այդմ՝ պարսիկները Հռոմին վերադարձրին Մեծ Հայքի Ծոփք նահանգն ու Բարձր Հայքի մեծագույն մասը[47]: Փոխարենը նրանք Հռոմից ստացան Մեծ Հայքի մեծագույն մասի և Այսրկովկասի նկատմամբ իրենց տիրապետության ճանաչումը[48]: Հաշտությամբ իրավաբանորեն

---

Scriptores Historiae Augustae, Vol. III, Cambridge, London, 1996, Probus, XVIII, 1), պետք է վերագրել նրա գահակալության սկզբներին՝ 276 թ. երկրորդ կեսին:

[46] **Մելիքյան Ա.,** Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ, Վասն արդարության, 2006, № 1, էջ 48-54:

[47] **Մովսես Խորենացի**, II, ՀԷ. «Բայց Յունաց թագաւորեաց Պռոբոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս, սահմանադրութեամբ փոսս գործելով»:

[48] **Մելիքյան Ա.,** Մեծ Հայքի 276 թ. պարսկա-հռոմեական բաժանումը, Վասն արդարության, 2008, № 2-3, էջ 34, 35: Ի. Սիվենի ու Կ. Մաքսիմյուկի կարծիքով հաշտությունը կնքել է Վարահրան II-ը 279 թ. վերջերին՝ «Արևմուտքի տեղապահ» Հայաստանի մեծ արքա Ներսեհի միջոցով (տե՛ս **Syvänne I. and Maksymiuk K.**, նշվ. աշխ., էջ 114): Նույն կարծիքին է նաև Մ. Գրանտը (տե՛ս **Грант М.**, Римские императоры, стр. 222): Ա. Մարտիրոսյանը (տե՛ս **Մարտիրոսյան Ա.**, Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը III դարում, ՊԲՀ, 1979, № 1, էջ 47), Ռ.Ն. Ֆրայը (տե՛ս **Frye R.**, The History of Ancient Iran, München, 1985, p. 305. **Նույնի՝** The Political History of Iran Under the Sasanians, p. 128), Թ. Դարյային (տե՛ս **Daryaee T.**, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, 2009, p. 12), Բ. Դիգնասն ու Ե. Վինթերը (տե՛ս **Dignas B. and Winter E.**, Rome and Persia in Late Aniquity: Neigbours and Rivals, Cambridge, 2007) և այլք պայմանադիր կողմերին համարում են Վարահրան II-ին ու Դիոկղետիանոսին:

ձևակերպվեցին երկու տերությունների սահմանները[49], և պարսից տերության արևմտյան սահմաններում առժամանակ վերացավ պատերազմի վտանգը: Արդյունքում՝ Հայաստանը մոտ ապագայում կորցրեց Հռոմեական Արևելքի դեմ գործողությունների ռազմավարական հենակետի, հետևաբար նաև՝ գահաժառանգի («մեծ արքայի») «երկրորդական գահի» նախկինում ունեցած նշանակությունը: Արևմուտքում հաստատված խաղաղությունը թույլ էր տալիս պետության արտաքին քաղաքականության ծանրությունը տեղափոխել արևելք, որտեղ պարսից տերությունը շարունակական պայքարի մեջ էր թուրանական աշխարհի դեմ: Նոր պայմաններում բնական էր, որ ռազմական գործողությունների հենակետի և գահաժառանգի ոստանի դերը պետք է անցներ «Հինդի, Սակաստանի և Թուրանի ու մինչև ծով» շահրին:

Իրանի արևելքում ենթադրվող ռազմաքաղաքական ակտիվությունը, բնականաբար, անհնարին էր դարձնում Ներսեհի հետագա գահակալությունը այնտեղ: Ուստի Վարահրան I-ը թե՛ իր և թե՛ որդու ապագա գահակալությունն ապահովելու համար «Հինդի, Սակաստանի և Թուրանի ու մինչև ծով» շահրի կառավարումը հանձնեց որդուն՝ թագաժառանգ Վարահրանին: Իսկ մինչ այդ այնտեղ կառավարող Ներսեհը նշանակվեց Հայաստանի կառավարչի պաշտոնում:

Աղբյուրների արդի վիճակում թեև հնարավոր չէ հստակ որոշել այս իրադարձության ժամանակը, բայց կարելի է մոտավոր ճշգրտությամբ գծել նրա ստորին և վերին ժամանակային սահմանները: Քանի որ Մարկոս Ավրելիոս Պրոբոսը (276-282 թթ.) կայսր է հռչակվել 276 թ. հուլիս-

---

[49] **Մելիքյան Ա.**, նշվ. աշխ., էջ 34, 35:

օգոստոսին[50], խնդրո առարկա նշանակման ստորին սահմանն էլ *(terminus non ante quam)* պետք է համարել 276 թ. հուլիսի վերջերը կամ օգոստոսի սկզբները:

Հայաստանի կառավարչի պաշտոնում Ներսեհի նշանակման վերին ժամանակային սահմանը ճշտելուն օգնում է հատվածաբար պահպանված միջին պարսկերեն մի տեքստ[51], որը պատմում է Վարահրան I-ի՝ Բելաբադի պալատում Մանիի վերջին և ճակատագրական ընդունելության մանրամասները: Մեր խնդրի տեսանկյունից այն ուշագրավ է նրանով, որ Վարահրան I-ի մերձավորների թվում հիշատակում է նաև «սակերի թագուհուն». «*Եվ նա (Վարահրան I-ը - Ա.Մ.) ոտքի ելավ խնջույքի սեղանից և մի ձեռքը դնելով սակերի թագուհու, իսկ մյուսը՝ Կարտիրի՝ Արտավանի որդու ձեռքին, դիմեց իմ փիրոջը...*»[52]:

Վ. Լուկոնինը վերոնշյալ հաղորդման մեջ «սակերի թագուհու» հիշատակության կապակցությամբ իրավացիորեն նկատում է. «Դժվար է պատկերացնել, որ Վարահրան I-ի արքունիքում, նրա մերձավոր շրջապատում է գտնվել իր նկատմամբ թշնամաբար տրամադրված Ներսեհի կինը. չէ՞ որ Ներսեհը Վարահրան I-ին համարում էր գահը բռնազավթող: Հնարավոր է, որ «սակերի թագուհի» տիտղոսն այդ ժամանակ տրված էր մեկ այլ Շապուհդուխտակի՝ Վա-

---

[50] Властелины Рима: Биографии римских императоров от Адриана до Диоклетиана, перев. Кондратьев С.П., Москва, 2001, стр. 276, прим. 1410.

[51] Տեքստի հեղինակը Մանիի ընդունելության ականատեսը նրա թարգման Նուհզադագն (Nūḥzādag) է, ինչը վավերագիրը դարձնում է բացառիկ վստահելի (**Sundermann W.,** Mani, EIr, 20 July 2009).

[52] **Henning W.**, Mani's Last Journey, BSOAS, № 10, 1942, pp. 949-952; **Նույնի՝** Selected Papers I-II, Leiden, 1977, II, pp. 89-92; **Виденгрен Г.,** Мани и манихейство, стр. 66.

րահրանի գահաժառանգ որդու կնոջը»[53]: Անվանի ուսումնասիրողի դիտարկման տրամաբանությամբ կստացվի, որ Մանիի բելաբաղյան ընդունելության պահին «Հինդի, Սակաստանի և Թուրանի» արքան արդեն ոչ թե Ներսեհը, այլ Վարահրան I-ի գահաժառանգ որդին՝ Վարահրանն էր և, հետևաբար, այդ իրադարձության թվականն էլ պետք է համարել Ներսեհի՝ Հայաստանի կառավարչի պաշտոնում նշանակվելու վերին ժամանակային սահմանը *(terminus non post quam)*:

Մանիի վերջին ընդունելության թվականի վերաբերյալ կարծիքները խիստ տարբեր են[54]: Սակայն վերը հիշատակված միջին պարսկերեն և մանիքեական զանազան տեքստերի տվյալների համալիր քննության հիման վրա ուսումնասիրողները ներկայումս այն թվագրում են 277 թ. փետրվարի 1-ով[55]: Այսպիսով, 276 թ. հուլիս-օգոստոսից մինչև 277 թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Սասանյան արքայազն Ներսեհը կարող էր նշանակված լինել Հայաստանի կառավարչի պաշտոնում:

---

[53] **Луконин В.** Варахран II и Нарсе. Стр. 51, 52.

[54] Մանիի բելաբաղյան ընդունելության և մահվան թվականի շուրջ վարկածները տե՛ս **Asmussen J.**, Xuâstvânift. Studies in Manichaeism. Kopenhagen, 1965, p. 10; **Klima O.**, Manis Zeit und Leben. Prag, 1962, S. 381-382; **Klima O.**, Zwei Stellen (17, 24 ff und 18, 6 ff) des manichaischen Psalters. PKL (Probleme der koptischen Literatur. Hrsg. vom Institut fur Byzantinistik der Martin-Luther-Universitat Halle-Wittenberg. Bearb., v. P. Nagel (Wissenschaftliche Beitrage der Martin-Luther-Universitat Halle-Wittenberg 1968/1). Halle (Saale), 1968, S. 121-123.

[55] **Taqizadeh S. H.,** The Early Sasanians. Some Chronological Points which Possibly Call for Revision. BSOAS, № 11, 1943-1946, p. 49 ff; **Tardieu M.,** Le Manicheisme. Paris, 1981, p. 40; **Skjærvø P.O.**, An Introduction to Manicheism, 2006, p. 27; **Sundermann W.**, Mani, EIr, 20 July 2009; **Хосроев А.Л.**, История Манихейство, Санкт-Петербург, 2007, стр. 107.

Ուսումնասիրողները ենթադրում են, որ Հայաստանի կառավարչի պաշտոնը շնորհվել է Ներսեհին՝ ինչ-որ չափով մեղմելու Իրանի գահի նկատմամբ նրա հավակնությունները[56]: Ըստ այդմ էլ եզրակացնում են, որ Ներսեհը Հայաստանի գահի հետ ստանձնել է նաև «Հայաստանի մեծ արքա» տիտղոսը[57]: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Ներսեհի նոր նշանակումը, ընդհակառակը, նսեմացնում էր Սասանյան պետական համակարգում նրա ունեցած դիրքը: Այդ են վկայում մասնավորապես Հայաստանում գահակալած ժամանակաշրջանում Ներսեհի հատած դրամների լեգենդները: Առաջին տիպի դրամների (հավանական թվագրումը՝ 290-ական թթ. սկիզբ) լեգենդը հռչակում է նրա տիտղոսը՝ «Մազդային երկրպագող, [աստվածներից] սերվող արքա Ներսեհ»[58]: Իսկ դրամների երկրորդ տիպի վրա, որոնք թվագրվում են 292-293 թթ., Ներսեհի կրած տիտղոսը, ըստ էության, ավելի համեստ է՝ «Մազդային երկրպագող Ներսեհ, արքա»[59]: Ինչպես տեսնում ենք, այս երկու տիտղոսները (դրանք, թերևս, կարելի է համարել Ներսեհի պաշտոնական տիտղոսի ընդարձակ ու համառոտ տարբերակները) ավելի շատ նման են այն տիտղոսին, որը Ներսեհը կրում էր Սակաստանի գահին, և ոչ մի ընդհանրություն չունեն Որմիզդ-Արտաշիրի կրած «Հայաստանի մեծ արքա»

---

[56] **Луконин В.**, Варахран II и Нарсе, с. 52.

[57] **Daryaee T.**, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, pp. 10-11. **Daryaee T.**, A Note on the 'Great King of Armenia' in: Bridging Times and Spaces: Papers in Ancient Near Eastern, Mediterranean and Armenian Studies Honouring Gregory E. Areshian on the occasion of his sixty-fifth birthday, Oxford, 2017, p. 85; **Syvänne I.** and **Maksymiuk K.,** The Military History of the Third Century Iran, p. 111.

[58] **Луконин В.** Варахран II и Нарсе. Стр. 57.

[59] **Նույն տեղում**:

*(wazurg šāh Arminān)* տիտղոսի հետ: Ներսեհն իրեն «մեծ արքա» չի կոչել անգամ այն ժամանակ, երբ բացահայտորեն հավակնում էր Իրանի գահին: Պայկուլեի արձանագրության մեջ ևս նա հայտնում է. «Երբ ես Հայաստանի արքան էի...»[60]:

Հայաստանում Ներսեհի կառավարման մասին շատ քիչ բան է հայտնի: Հայկական ավանդության մեջ նրա կերպարը տարրալուծված է «Արտաշիրի» հավաքական կերպարի մեջ: Սակայն, նկատի ունենալով արքայից արքայի նկատմամբ Ներսեհի լոյալությունը, կարելի է ենթադրել, որ Սասանյանների կողմից տարվող վարչական և կրոնական քաղաքականությունը Հայաստանում շարունակվել է ավելի լայն թափով, և այստեղ տարածված սինկրետիկ հելլենիստական պաշտամունքի նկատմամբ նրանց վերաբերմունքը դարձել է ավելի անհանդուրժողական: Ինչ վերաբերում է պաշտոնական Տիզբոնի նկատմամբ Հայաստանի արքայի վերաբերմունքին, ապա այն հնարավոր է քիչ թե շատ բացահայտել 293 թ. Ներսեհի ստեղծած Պայկուլեի արձանագրության, ինչպես նաև Հայաստանում նրա հատած դրամների ուսումնասիրության հիման վրա:

Ինչպես արդեն նշվել է, Իրանի գահին նստելուց հետո Ներսեհը Բիշապուհի ժայռաքանդակի վրա ջնջել է Վարահրան I-ի դեմքը՝ փոխարենը պատկերելով իրենը՝ ցանկանալով ցույց տալ, որ Որմիզդ-Արտաշիրից հետո ինքը պետք է ստանձներ Իրանի գահը: Այդ փաստի հիման վրա պատմագիտության մեջ լայն տարածում է ստացել այն կարծիքը, որ Իրանի գահակալության հարցում իրեն անտեսված

---

[60] **Humbach H.** and **Skjærvø P.O.**, The Sassanian Inscription of Paikuli [NPi], Part 3.1, Munich, 1983, § 3.

համարող Ներսեհը Հայաստանի կառավարչի պաշտոնում նշանակվելուց անմիջապես հետո հակադրվել է արքայից արքային: Հաճախ այդ դրույթին ելակետային նշանակություն է տրվել III դ. 70-90-ական թթ. ինչպես հայ-իրանական, այնպես էլ իրանա-հռոմեական հարաբերությունների լուսաբանման ժամանակ[61]: Սակայն փաստերը, ընդհակառակը, ցույց են տալիս, որ մինչև 290-ական թթ. սկզբները Հայաստանի արքա Ներսեհը օրինապահ է մնացել: Դա առաջին հերթին դրսևորվեց նրանով, որ 277 թ. Վարահրան I-ի մահից հետո Ներսեհը չվիճարկեց նրա որդու՝ Վարահրան II-ի գահակալության օրինականությունը, չնայած որ գահաժառանգության տոհմական սկզբունքի տեսանկյունից, որի միջոցով իշխանության էր հասել Վարահրան I-ը, Ներսեհն անժխտելի առավելություն ուներ ընդհանրապես, բոլոր Սասանյան արքայազների նկատմամբ: Ըստ երևույթին, Ներսեհի պասիվ վարքագծի պատճառն այն էր, որ մինչև III դ. 80-ական թթ. սկզբները պաշտոնական Տիզբոնի դեմ ընդդիմությունը ղեկավարում էր ոչ թե ինքը, այլ Մեշանի արքա Շապուհը՝ այդ շահրի նախկին կառավարիչ Շապուհի համանուն որդին, իսկ ավելի ուշ՝ նրա որդին՝ «Սակաստանի Տուրեստանի և Հինդի» կառավարիչ արքա Որմիզդը: Սրանք ևս Իրանի գահի նկատմամբ ունեին նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք ուներ Վարահրան II-ը[62]:

Վարահրան II-ի (277-293 թթ.) կառավարման օրոք ազնվականության և զրադաշտական քրմության ազդեցու-

---

[61] **Մարտիրոսյան Ա.**, Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը III դարում, ՊԲՀ, 1979, № 1, էջ 47: **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 211:

[62] **Луконин В.** Иран в III веке. Стр. 60.

թյունը հասավ իր գագաթնակետին, ինչի մասին վկայում է ինչպես Կարտիրը[63], այնպես էլ ուշ շրջանի արաբական ավանդությունը[64]: Դա թուլացրեց կենտրոնական իշխանության դիրքերը, և պետության կենտրոնացումը, որին Սասանյանները հասել էին մեծ դժվարությամբ, երկու անգամ կանգնեց լուրջ փորձության առջև:

282 թ. կամ դրանից քիչ առաջ խռովություն սկսեց Մեշանի կառավարիչ Շապուհը: Վարահրանին հաջողվեց ճնշել այն և պատժել Շապուհին օժանդակած կառավարիչներին[65]: Սակայն դա նրանից պահանջեց նշանակալից ուժեր կենտրոնացնել Ստորին Միջագետքում, ինչն էլ հնարավորություն տվեց Կարոսի հռոմեական լեգիոններին առանց որևէ դիմադրության հանդիպելու հասնել մինչև Տիզբոնի մատույցներ[66]: Իրանական տերությունը արտաքին քաղաքական ճգնաժամից փրկվեց միայն կայսեր աննպասելի մահվան ու հռոմեական բանակի նահանջի շնորհիվ:

Շապուհի ապստամբությունը ճնշելուց հետո Վարահրան II-ն սկսեց զգուշանալ Սասանյան մյուս արքայազներից և դիմեց միջոցների, որոնք պատմաբանների կողմից որոշ

---

[63] **Kerdir's Naqsh-e Rajab inscription**, 13. Տե՛ս **Sprengling M.**, Third Century Iran..., pp. 37-69; **MacKenzie D.N.**, Kerdir's Inscription (synoptic text in transliteration, transcription, translation and commentary), in G. Herrmann, D.N. Mackenzie and R. Howell, The Sasanian Reliefs at Naqsh-i Rustam, Naqsh-i Rustam 6, The Triumph of Shapur I (together with an account of the representations of Kerdir), Description and Commentary, Kerdir's Inscription (synoptic text in transliteration, transcription, translation and commentary), Iranische Denkmaler 13, enthaltend Reihe II, Iranische Felsreliefs I, Berlin, 1989, pp. 35-72. **Луконин В.**, Картир и Мани, ВДИ, 1966, № 3, стр. 75.

[64] **The History of al-Tabari,** Vol. V, p. 46.

[65] **Луконин В.** Иран в III веке. Стр. 60.

[66] Վ. Լուկոնինը հնարավոր է համարում Կարոսի համաձայնությունը Մեշանի արքայի հետ (**Луконин В**. Иран в III веке. Стр. 60):

դեպքերում անհարկի գերագնահատվել են: Այսպես, Ա. Մարտիրոսյանի կարծիքով Ներսեհի պայքարը Վարահրան I-ի, ապա և Վարահրան II-ի դեմ այնքան սուր բնույթ էր կրում, որ Ներսեհը փորձում էր առանձին դաշինք կնքել Հռոմի հետ՝ ընդդեմ Իրանի: Իսկ Վարահրան II-ը համաձայնության է եկել Դիոկղետիանոսի հետ և ճանաչել Տրդատ Արշակունու գահակալական իրավունքը Ներսեհին ենթակա Հայաստանի մեծ մասում: Դրանով նա քաղաքական ուժ է ստեղծել՝ Ներսեհին դիմագրավելու նպատակով[67]: Ա. Մարտիրոսյանը հղում է գլխավորապես լատինական ներբողներին (Panegyrici latini): Ընդ որում Հ. Աստուրյանին հետևելով՝ Ա. Մարտիրոսյանը ներբողների տվյալներն օգտագործում է ոչ թե ժամանակագրական, այլ կանխակալ տրամաբանական հաջորդականությամբ՝ անտեսելով, որ դրանք գրվել են տարբեր առիթներով և ժամանակներում[68]: Սակայն անգամ այդ դեպքում հնարավոր չէ ներբողների մեջ գտնել այնպիսի փաստ, որը թեկուզ անուղղակի վկայի պարսիկների կողմից Հայաստանի զիջման մասին[69]: Սասանյան արձանագրու-

---

[67] **Մարտիրոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 47: Հմմտ. **Frye R.**, The History of Ancient Iran, p. 305.

[68] **Латинские Панегирики.** Перев. с лат. И.Ю. Шабага, ВДИ, 1996, № 3, стр. 210-214.

[69] Երկրորդ պանեգիրիկան (**Mamertini panegyricus Maximiano Augusto, Panegyrici latini**, II) արտասանվել է 289 թ. ապրիլի 21-ին: Նրա հիմնական թեման դիարխիայի համակարգի արդարացումն ու գովաբանումն է: Հեղինակը խիստ ընդհանրական նշում է, թե պարսից արքան (Վարահրան II - ծ.հ.) «բարեկամության անունը ստանալու համար ամեն ինչի մեջ զիջեց» (**Panegyrici latini**, II. 10. 3): Սակայն դրանից բոլորովին էլ չի հետևում, որ պարսից արքան հռոմեացիներին տարածքային զիջումներ է կատարել: Զիջումները, եթե անգամ այդպիսիք եղել են, կարող էին կատարվել միջպետական հարաբերությունների նաև այլ ոլորտներում: Երրորդ պանեգիրիկան (**Mamertini panegyricus genethlicus Maximiano Augusto,**

թյուններն ու Վարահրան II-ի գահակալությանը բացասական գնահատական տվող ուշ շրջանի արաբական ավանդությունը ևս որևէ հիշատակություն չեն տալիս Վարահրան II-ի կողմից Հայաստանի պարսկական մասն ամբողջապես կամ մասնակիորեն հռոմեացիներին զիջելու վերաբերյալ և ընդհանրապես նրա նկատմամբ տարածքային զիջումների մեղադրանք չեն հարուցում: Ուստի միանգամայն իրավացի պետք է համարել Ռ. Մանասերյանին, ըստ որի՝ պարսիկների կողմից Հայաստանի զիջման մասին «...բոլոր այս կարծիքները չափազանցություններ են, քանզի բացակայում էին այն ծանրակշիռ պատճառները, որոնք Սասանյաններին կհարկադրեին 287թ. առանց պատերազմում պարտվելու

---

**Panegyrici latini**, III) արտասանվել է 291 թ. հուլիսի 21-ին: Նրա հիմնական թեման Դիոկղետիանոսի ու Մաքսիմիանոսի համերաշխ կառավարության գովաբանությունն է: «Ես իմ ճառում, - գրում է հեղինակը, - բաց եմ թողնում Սարմաթիայի ամայացումն ու սարակինոսների գերեվարությունը: Ես նմանապես լռությամբ կշրջանցեմ ինչպես այն, ինչ արվել է ձեր զորքերի պատճառած սարսափից, այնպես էլ այն, ինչ կատարվել է ձեր զորքերի կողմից և հատկապես. ֆրանկները իրենց արքայի հետ գալիս են խաղաղության խնդրանքով, և պարթևացին քծնում է ձեզ՝ մատուցելով հրաշալիքներ»: Ինչպես երևում է, խոսքը վերաբերում է սարմաթների, ֆրանկների և Ասորիք ներխուժած սարակինոսների դեմ Դիոկղետիանոսի՝ 290 թ. տարած հաղթանակներին: Ինչ վերաբերում է «պարթևացուն», ապա կասկածից վեր է, որ հեղինակը նկատի ունի պարսից արքա Վարահրան II-ին: Սակայն այստեղ ևս բացարձակապես ոչ մի խոսք չկա Հայաստանի զիջման մասին: Վերջապես, 298 թ. գարնանը արտասանված հինգերորդ ճառում (**Eumenii pro instaurandis scholis oratio, Panegyrici latini**, V, 3), հայտնվում է, որ պարսից արքան ճանաչել է, որ մինչև Տիգրիս տարածվող երկրները «Parthis quippe ultra Tigrin redacto» հռոմեական են: Եվ ակնհայտ է, որ այստեղ հեղինակն ակնարկում է 295-297 թթ. պարսկա-հռոմեական պատերազմի արդյունքում անդրտիգրիսյան գավառների անցումը Հռոմին և ի դեմս «պարսից արքայի»՝ նկատի ունի արքայից արքա Ներսեհին, այլ ոչ թե Վարահրան II-ին, որը վաղուց կենդանի չէր:

մասնակիորեն կամ ամբողջապես հեռանալ Հայաստանից: Մանավանդ որ աղբյուրները վկայում են Սասանյան տերության ներքին կայուն վիճակը մինչև 291 թվականը»[70]:

Վարահրան II-ի կառավարման ընթացքում տերության ներքին անդորրը խախտած մյուս իրադարձությունը 291 թ. Սակաստանի արքա Որմիզդի ապստամբությունն էր: Սովորաբար ուսումնասիրողները դրա շարժառիթը համարում են հոր վախճանի համար Որմիզդի վրեժխնդրության ձգտումը: Սակայն ավելի հավանական է, որ Որմիզդի ապստամբության իրական պատճառը եղել է 290 թ. իրանական տերության գահը մանկահասակ որդի Վարահրանին վերապահելու նպատակով նրան «երկրորդական տերության»՝ Սակաստանի գահին նստեցնելու Վարահրան II-ի մտադրությունը: Վարահրան II-ի ծրագիրը Որմիզդին զրկում էր թագաժառանգի պաշտոնական դիրքից ու Իրանի գահին օրինական ճանապարհով հասնելու հնարավորությունից: Այլ խոսքով՝ Որմիզդը չի հանդուրժել այն, ինչին լուռ համակերպվել էր Ներսեհը: Սակայն Որմիզդը ևս պարտություն կրեց ու սպանվեց, որից հետո «երկրորդական գահին»՝ որպես տերության գահաժառանգ, հաստատվեց արքայից արքայի որդի Վարահրանը:

Այսպիսով, միայն Վարահրան II-ի դեմ համընդհանուր ճանաչում գտած ընդդիմադիր գործիչների ասպարեզից հեռանալուց հետո է «Հայաստանի արքա» Ներսեհը Իրանում պետական հեղաշրջման նախապատրաստություններ սկսել:

Ընդունված է կարծել, որ Իրանի գահի նկատմամբ Ներսեհի բացահայտ հավակնությունն արտահայտվել է ոսկ-

---

[70] **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 132, ծան. 1:

յա դրամի թողարկումով, ինչը, ըստ ավանդական պատկերացումների, խախտում էր արքայից արքայի մենաշնորհը: Այս ընդհանուր դրույթին չհամաձայնել չի կարելի: Սակայն եթե նկատի ունենանք, որ Վարահրան II-ի օրոք բացի Ներսեհից ոսկյա դրամ թողարկել են նաև Մեշանի ու Սակաստանի արքաները, ապա թերևս ավելի ճիշտ լինի ոսկյա դրամների թողարկումը համարել ոչ թե Տիզբոնի գահի նկատմամբ բացահայտ հավակնության նշան, այլ Վարահրան II-ի օրոք տերության նշանակալից շահերի հեղինակավոր կառավարիչների՝ ի վնաս կենտրոնական իշխանության իրենց դիրքերն ամրապնդելու իրողության արտահայտություն:

Ինչպես նշել ենք, Հայաստանի կառավարչի պաշտոնում Ներսեհը թողարկել է երկու տիպի ոսկյա դրամներ: Առաջինների երեսին պատկերված են Ներսեհն ու նրա կինը, իսկ լեգենդը տալիս է Ներսեհի անունն ու տիտղոսը՝ *«Մազդային երկրպագող, [աստվածներից] սերվող արքա Ներսեհ»*: Դարձերեսին պատկերված է «Ներսեհի կրակը» (կրակի տաճարը): Ներսեհի պատկերը տեղապահի և ոչ թե արքայից արքայի թագով, ինչպես նաև դրամի քաշը, որը կրկնակի պակաս է արքայական դինարի քաշից, հիմք է տալիս դրանք վերագրելու III դ. 90-ական թթ. սկզբներին՝ Ներսեհի կողմից պետական հեղաշրջման նախապատրաստության շրջանին[71]: Դրամների երկրորդ տիպում Ներսեհը պահպանել է իր նախկին տիտղոսը, սակայն հրամայել է իրեն պատկերել վեհապետական պատվանշաններով: Դրանք արդեն վերաբերում են գահի համար Ներսեհի բացահայտ պայքարի շրջանին՝ 292-293 թթ.:

---

[71] **Луконин В.** Варахран II и Нарсе. Стр. 57.

293 թ. վախճանվեց Վարահրան II-ը և, ձևավորված ոչ պաշտոնական սկզբունքի համաձայն, գահը պետք է անցներ նրա որդուն՝ դեռևս 290 թ. թագաժառանգ և Սակաստանի արքա հռչակված տասնչորսամյա Վարահրանին: Սակայն իրանական ազնվականության մի թևը, որը շահագրգռված էր կենտրոնացված ուժեղ պետականության ստեղծմամբ, չընդունելով Վարահրան III-ի գահակալությունը, դիմեց տոհմական սկզբունքի տեսանկյունից Սասանյան գահի միակ օրինական հավակնորդ հանդիսացող «Հայաստանի արքա» Ներսեհին[72]: Եվ Ներսեհը Հայաստանից արշավեց Ասորեստան:

Պայկուլեի արձանագրությունը վկայում է, որ Իրանի գահի համար պայքարում Ներսեհին են հարել ոչ միայն իրանական բարձր ազնվականության զգալի մասը, այլև բանակը, որից զգալի ուժեր էին մնացել արևմտյան սահմաններում՝ Հռոմի դեմ վերջին պատերազմից ի վեր: Նրա կողմն էին նաև մոգպետ Կարտիրի գլխավորած զրադաշտական հոգևորականությունն[73] ու Հռոմեական կայսրության հետ սահմանակից նահանգների տիրակալները, որոնք հռոմեական հարձակումներից ապահովագրվելու նպատակով շահագրգռված էին ուժեղ կենտրոնացված պետության վերականգնման գործով: Օգնություն կարելի էր ակնկալել նաև Միջագետքի մանր կիսանկախ իշխանություններից ու պո-

---

[72] **Humbach H. and Skjærvø P.O.**, նշվ. աշխ., մաս 3.1, § 16. «Դեսպանը եկավ ինձ մոտ [ասելու], որ կարող է նորին մեծություն արքայից արքան Հայաստանից գնալ Իրանշահր և ընդունել աստվածներից իր նախնիների պատիվը, գահը, իրավունքը և իշխանությունը...»:

[73] **Humbach H. and Skjærvø P.O.**, նշվ. աշխ., մաս 3.1, § 32: **Луконин В.** Древний и раннесредневековый Иран: очерки истории культуры. Москва. 1987, стр. 160.

լիսներից, որոնք, գտնվելով երկու կրակի միջև, պատրաստ էին աջակցելու Ներսեհին՝ հուսալով շահել նրա համակրանքն ու իրենց ամենաահեղ թշնամուն դարձնել դաշնակից ու հովանավոր[74]:

Հայաստանից արշավանքի ելած Ներսեհի կողմնակիցների մեջ Պայկուլեի արձանագրությունն առանձնակի չի հիշատակում հայ ավագանուն: Ռ. Մանասերյանի իրավացի դիտարկմամբ այդ լռությունը և «Հայաստանի թագավորին» պարսիկների և պարթևների միանալու փաստը նշելը, թերևս, հայերի՝ Ներսեհի անմիջական հպատակների, իրենց «թագավորի» ձեռնարկմանը ինքնըստինքյան հասկացվող մասնակցության արտահայտություն է»[75]:

Գահակալական պայքարում հաղթող դուրս եկավ Ներսեհը: 293 թ. նա բազմեց Տիզբոնի գահին՝ ոչնչացնելով Վարահրան III-ին ու նրա կողմնակիցներին: Ներսեհը, Պայկուլեի արձանագրության մեջ նշելով գահակալության առթիվ իրեն շնորհավորելու եկածների երկար ցուցակը, ցանկացել է ցույց տալ իր իշխանության օրինականությունն ու համընդհանուր ճանաչումը: Նշված են քուշանների արքան, Թուրանի, Մեկրանի, մեսքիտների արքաները. «...և Իբերիայի արքան, և Սիկանի արքան, և արքա Տրդատը, և լախմիդյանների արքա Ամրը, և Աբգարյանների արքան...»[76]: Շնորհավորողների թվում հիշատակվում է նաև հռոմեական կայսեր դեսպանությունը:

---

[74] **Луконин В.**, նշվ. աշխ., էջ 160:

[75] **Մանասերյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 133:

[76] **Humbach H. and Skjærvø P.O.**, նշվ. աշխ., մաս 3.1, § 93:

Այսպիսով, այս վերջին հանգամանքը խոսում է այն մասին, որ Իրանում Ներսեհի իշխանությունը ստացել էր նաև միջազգային ճանաչում:

MELIKYAN ARTHUR

## NARSEH SASSANID AND THE STRUGGLE FOR THE REIGN IN PERSIA FROM 274 TO 293

***Keywords:*** Narseh Sassanid, Persia, Great Armenia, Ctesiphon, Shapur, Hormizd, Ka'ba-ye Zartosht, Varahran, Rome.

In 274 after the death of Hormizd I, the Zoroastrian priesthood and the Iranian high nobility handed the Sasanid throne to Varahrān, the elder brother of Hormizd I, although the other brother Narseh, during the rule of Shāpūr I and Hormizd I, had a higher position in the state scale of ranks and was more appropriate for the title of King of Kings. In the following years the Sasanian nobility continued ignoring the rights of Narseh to the throne. After signing the peace treaty with the emperor Probus, in 276/277 Varahran I nominated Narseh, the king of Hindi, Saccas and Turan, the king of Armenia, the country which had lost its strategical meaning. With it Narseh was losing the opportunity of reaching the title of King of Kings in the legal way. Only after the leaders of Iranian opposition were removed, from 282 to 290, Nerseh began an evident struggle for the throne. After the victory in the civil war in 293 the Armenian king Narseh sat on the Sasanian throne.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

# ՄԻԱԲՆԱԿ ՈՒ ԵՐԿԱԲՆԱԿ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***Բանալի բառեր***՝ Քրիստոս, Աստված, քաղկեդոնական, Եկեղեցի, Ավետարան, Ապողինար, Նեստոր, Սուրբ Երրորդություն, միաբնակ, երկաբնակ:

Քրիստոնեական հավատի հիմքում ընկած է փրկության գաղափարը, որը հասանելի է լոկ Քրիստոսի հետ միանալու միջոցով: Դրա նախապայմանն Աստծո Որդու մարդեղությունն էր, որը մարդկային բնությանը հաղորդեց անմահություն և անապականություն, ու հետևաբար՝ փրկությունը պիտի դիտվի որպես աստվածային շնորհ, քանի որ այն անհասանելի է լոկ մարդկային բարոյական ու հոգևոր ջանքերի շնորհիվ: Աստծո Որդին մարդացավ, որպեսզի մարդիկ հնարավորություն ստանան որդեգրվելու Աստծո կողմից, առանց ինչի փրկությունը պարզապես անհնարին է: Քրիստոսով փրկությունը, լինելով հավատի խորհուրդ, միաժամանակ դիտվում էր որպես մի բան, որը չպիտի գաղտնիք լիներ հավատացյալների համար: Ընդհակառակը, այն պիտի հայտնի դառնար բոլորի համար ուղղափառ վարդապետության միջոցով, ուստի կենսական կարևորություն է ստանում ուղիղ դավանանքը, որը պիտի պաշտպանվի զանազան հերետիկոսներից: Հենց այս հանգամանքով է պատճառաբանված այն հսկայական կարևորությունը, որ ձեռք է բերել քրիստոսաբանությունը Եկեղեցու համար: Քրիստոսաբանական վեճերն ամենևին էլ սքոլաստիկական բնույթ չունեին: Եթե քրիստոնեական վարդապետությունը հիմնված է Ավետարանում պարունակվող Քրիստոսի խոս-

քերի վրա, ապա նրանց հեղինակությունը լիովին կախված էր այն բանից, թե ով էր Հիսուսը՝ Աստծո միածին Որդի՞ն, թե՞ սովորական մի մարդ, որքան էլ առաքինի և իմաստուն նա լիներ:

Քրիստոսի անձի մեջ աստվածային և մարդկային բնությունների փոխհարաբերության հիմնախնդիրը սկսեց հետաքրքրել Եկեղեցուն դեռ IV դարում՝ արիոսականության դեմ պայքարի ամենաթեժ փուլում: Անշուշտ քրիստոսաբանությունը հետաքրքրում էր Եկեղեցու հայրերին նաև դրանից առաջ, մասնավորապես գնոստիկների դեմ պայքարի ժամանակ, որոնք ժխտում էին Քրիստոսի մարմնի իրական լինելը, ինչի պատճառով Սրբ. Իրենեոս Լուգդունացին ստիպված էր ապացուցել, որ Աստծո Որդին իսկական մարդկային մարմին ուներ: Սակայն 2-րդ դարում դրանից այն կողմ գործը չգնաց, ու պարզ չէր, թե ինչպիսին էր Փրկչի մարդկային մարմնի ու Նրա աստվածային բնության փոխհարաբերությունը:

Եկեղեցու քրիստոսաբանության հետագա զարգացման համար հզոր խթան հանդիսացավ Ապողինար Լաոդիկեցու հերձվածի ի հայտ գալը: Նա նիկիական ուղղափառության համոզված կողմնակից էր, Որոգինեսի և հեթանոսական նորպլատոնականության հակառակորդ:

Ապողինարը, լինելով Սրբ. Աթանաս Ալեքսանդրացու հետևորդ, համոզված էր, որ Հորը համագո Բանի կատարյալ մարդկային բնության հետ միավորումն անխուսափելիորեն տանում է դեպի 2 Աստծո Որդիների գոյության մասին պատկերացում, որոնցից առաջինը Որդի է ըստ բնության, իսկ երկրորդն՝ ըստ որդեգրման: Կատարյալ Աստվածն ու կատարյալ մարդը երբեք չեն կարող կազմել մի էակ, իսկ դա իմաստազրկում է քրիստոնեության հիմքը կազմող Աստծո մարդեղության գաղափարը:

Ապողինարը, հելլենական մտածելակերպի տիպիկ կրող լինելով, չէր կարող բավարարվել Սրբ. Աթանասի կարծիքով, որ Հորը համագո Բանի աստվածային բնության կատարյալ մարդկային բնության հետ միավորվելիս Քրիստոսի անձի միեղինությունը չի խախտվում: Այս դրույթի մեջ առկա տրամաբանական հակասությունը Սրբ. Աթանասին չէր մտահոգում, քանի որ դա հավատի խորհուրդ է: Ի տարբերություն նրա՝ Ապողինարը համոզված էր, որ քրիստոնեական դավանանքները չպիտի հակասեն տրամաբանության օրենքներին, ու մշակել է մի քրիստոսաբանական հայեցակարգ, որում առաջին հայացքից համաձայնեցված էին ինչպես տրամաբանության օրենքները, այնպես էլ քրիստոնեական փրկչաբանության սկզբունքները: Ապողինարը, լինելով Նիկիական հանգանակի կողմնակից, ճանաչում էր Քրիստոսի աստվածային բնությունը, սակայն նա չէր ընդունում Նրա մարդկային բնության կատարելությունը, քանի որ նրա կարծիքով երկու կատարյալ բնությունների՝ մի անձնավորության մեջ միավորումն անհնարին է: Նրա կարծիքով Բանն ի Քրիստոս միավորվել է ոչ թե լիարժեք, այլ թերի ու պակասավոր մարդկային բնության հետ:

Քրիստոս ուներ ֆիզիկական մարմին և այն շնչավորող հոգի, սակայն Նա չուներ ինքնագիտակցող բանական սկզբունք, որ հունարեն կոչվում է nous-միտք, որի տեղը զբաղեցրել է աստվածային Բանը: Առաջին հայացքից Ապողինարի հայեցակարգն ուներ մի շարք էական առավելություններ: Այն հնարավորություն էր ընձեռում 1 - խուսափելու այն տեսակետից, որ գոյություն ունեն 2 Աստծո Որդիներ՝ մեկն Աստված, իսկ մյուսը մարդ, 2 - չհամարելու, որ Հիսուսը սովորական մարդ էր, որի վրա Հորդանան գետում մկրտվելու ժամանակ իջավ Սրբ Հոգին, 3 - խուսափելու Բանի՝ մարմին դառնալու բառացի ընկալումից: Ապողինարը

համոզված էր, որ նրա հայեցակարգը չի հակասում Սրբ Գրքին, քանզի վերջինիս մեջ ասված է «Բան մարմին եղև», իսկ nous-ը անտիկ փիլիսոփայական ավանդության համատեքստում մարմին հասկացության մեջ չի մտնում: Անշուշտ, դա սխալ տեսակետ է, քանի որ sarx եզրույթը, որ օգտագործված է Հովհաննեսի ավետարանի նախաբանում, պարզապես եբրայերեն basar եզրույթի հունարեն թարգմանությունն էր, որը, ի տարբերություն իր հունարեն համարժեքի, նշանակում է ոչ թե մարդու զուտ ֆիզիկական բնություն, այլ մարդկային անձնավորություն՝ որպես հոգու և մարմնի անբաժանելի միություն:

Ապողինարի քրիստոսաբանության էությունն այն էր, որ Բանի մարմնացումն ամենևին էլ նրա մարդեղության հոմանիշը չէ, ու Քրիստոսի մարդկային բնությունը էապես տարբերվում է սովորական մարդկային բնությունից: Ինչպես իրավացիորեն նշում է հ. Գ. Ֆլորովսկին. «Եթե բանն ընդուներ մարդկային միտքը, որն ազատության և ինքնորոշման սկզբունքն է, ապա իսկական միավորում չէր ստացվի, կստացվեին երկու կենտրոններ և երկու սկզբունքներ: Եվ անհասանելի կմնար քավիչ մարմնացման նպատակը՝ կմեռներ ոչ թե Աստված որպես մարդ, այլ մի ոմն մարդ: Բացի դրանից, մարդկային միտքը նրա ազատության և ինքնաշարժության պահպանման դեպքում չէր կարողանա հաղթել հոգում մեղքի թթխմորը: Դա հնարավոր է միայն աստվածային մտքի համար: Այդ պատճառով Ապողինարը բացասում էր մարմնացած Բանի մեջ մարդկային էակի լիությունը կամ եռամիասնությունը, որ «միտքը» միավորության մեջ ընդունված չէր, ու նրա տեղն է զբաղեցրել ինքը՝ Բանը, որ միավորվել է շնչավոր մարմնի հետ: Տեղի է ունեցել մարմնացում, բայց ոչ մարդեղություն»[1]:

---

[1] **Флоровский Г.В.** Восточные отцы IV века. Париж, 1931, стр. 13.

Ապողինարի հայեցակարգը լիովին համապատասխանում էր անտիկ փիլիսոփայական մտածողության սկզբունքներին, սակայն հակասում էր Հայտնությանը և եկեղեցական ավանդությանը, որոնց համաձայն՝ Քրիստոս նման էր մարդկանց ամեն ինչով, բացի մեղքից, և դրա հետևանքով նրա ուսմունքը մերժվել է Եկեղեցու կողմից, իսկ ինքը՝ Ապողինարը, նզովվեց 2-րդ Տիեզերական ժողովի ժամանակ: Եկեղեցին չէր կարող ընդունել այդ ուսմունքը, քանի որ ապողինարականության մեջ թաքնված էր երևութականության՝ դոկետիզմի վտանգը, իսկ դա իր հերթին թերի էր դարձնում Քրիստոսի փրկագործությունը: Որպեսզի այն լինի կատարյալ, Բանը պիտի ընդունած լիներ մարդկային բնությունն ամբողջությամբ, ու նրա մարդկությունը անթերի պիտի լիներ և՛ հոգեպես, և՛ մարմնապես, ու միակ բանը, որով նա տարբերվում է մնացած մարդկանցից, մեղքի բացակայությունն է: Քրիստոսի կյանքում կային բազմաթիվ իրադարձություններ, որոնցից պարզ երևում էր, որ նա ուներ մարդկային միտք: Բավական է հիշել Գեթսեմանիի այգում Նրա անցկացրած գիշերը, երբ Նա տրտմում էր և աղոթում: Եթե փորձենք մի նախադասությամբ արտահայտել ապողինարականության՝ Եկեղեցու կողմից մերժվելու պատճառը, ապա կարող ենք ասել, որ Ապողինարի համար Քրիստոս իսկական մարդ չէր, ինչը բացահայտ հակասում է Ավետարանին, որում Աստծո Որդին պատկերված է որպես կատարյալ մարդ:

Սակայն ապողինարականության դատապարտումը չէր նշանակում, որ նրա կողմից բարձրացված աստվածաբանական հիմնախնդիրը կարևոր չէր Եկեղեցու համար: Ընդհակառակը, այն մի քանի դարերի ընթացքում գտնվում էր քրիստոնյա աստվածաբանների ուշադրության կենտրոնում: Ապողինար Լաոդիկեցու քրիստոսաբանական հայե-

ցակարգը խստագույն քննադատության էր ենթարկվել անտիոքյան դպրոցի ներկայացուցիչների կողմից, թեև նա հենց այս դպրոցին էր պատկանում: Եթե նա վստահ էր, որ մարմնացած Բանի բնությունը միեղեն է, ապա անտիոքացիները դրանից եզրակացնում էին, որ Քրիստոս ուներ երկու՝ աստվածային և մարդկային բնություններ: Այս հայեցակարգը մշակել էին Դիոդորոս Տարսոնացին և Թեոդորոս Մոպսուեստացին: Նրանք երկուսն էլ նիկիական ուղղափառության անվերապահ կողմնակիցներ էին ու չէին կասկածում, որ Բանի բնությունն անեղ է, սակայն միաժամանակ համոզված էին, որ Քրիստոս Բանի աստվածային ինքնագիտակցության հետ մեկտեղ ուներ նաև մարդկային ինքնագիտակցություն, ինչն ամբողջապես անընդունելի էր դարձնում նրանց համար Ապողինարի ուսմունքը: Նրանց կարծիքով Բանն ի Քրիստոս միավորվել է լիարժեք մարդկային անձնավորության հետ, սակայն այս միավորումը գոյաբանական չէր: Բան-Աստված բնակվում էր մարդ Հիսուսի մեջ որպես իր տաճարում, և երկու բնությունները լիովին պահպանում էին իրենց որակական առանձնահատկությունները՝ չխառնվելով ու չմիաձուլվելով: Անտիոքացիների կարծիքով Քրիստոսի մեջ որևէ առանձնավորական միեղինության մասին խոսք լինել չի կարող, Բանի և Հիսուսի միեղինությունը զուտ բարոյական բնույթ ուներ, և լոկ նրա մարդկային կյանքի ընթացքում այնքան բարձր մակարդակի է հասել, որ հնարավոր դարձավ Քրիստոսի անձը դիտարկել որպես մի ամբողջություն, որ արժանի է կրոնական պաշտամունքի: Բանն անտիոքացիների համար ոչ թե մարդացավ, այլ միայն մարմնացավ, իսկ դա նույն բանը չէ: Անտիոքյան քրիստոսաբանության շրջանակներում խոսք լինել չի կարող Քրիստոսի մարդկային բնության աստվածացման մասին, ինչը սկզբունքային նշանակություն ունի ուղղափառության

մեջ, քանի որ եթե չկա աստվածային ու մարդկային բնությունների էական փոխներթափանցում, ապա նրանցից յուրաքանչյուրը որևէ փոփոխություն չի կրում: Նրանց փրկչաբանությունը չէր ենթադրում մարդկային բնության արմատական փոխակերպություն մեղքից առաջացած ապականության վերացման միջոցով, այլ միայն պահանջում էր մարդկային անձնավորության բարոյական կատարելագործում ճիշտ այնպես, ինչպես դա արել է Հիսուս նրա մեջ բնակվող Բանի ազդեցության ներքո: Ինչպես իրավացիորեն գրում է Գ.Ֆլորովսկին անտիոքյան քրիստոսաբանության հետևորդ Նեստորի մասին. «Փրկությունը Նեստորի համար սպառվում էր մարդկության Աստծո հետ բարոյական, կամային, այլ ոչ թե գոյաբանական միավորումով»[2]:

Բոլորովին այլ բնույթ ուներ քրիստոսաբանությունը ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչների մոտ: Եթե անտիոքացիների ուշադրության կենտրոնում էր գտնվում Քրիստոսի կերպարը, ինչպես որ այն պատկերված է սինոպտիկ ավետարաններում, այսինքն՝ ընդգծված մարդկային հատկություններով, ապա ալեքսանդրացիները և առաջին հերթին Սրբ Կյուրեղ Ալեքսանդրացին իրենց քրիստոսաբանությունը հիմնում էին գլխավորապես Հովհաննու ավետարանի վրա, որի կենտրոնում գտնվում է մարմին դարձած Բանը: Դա պատահականություն չէր, քանի որ Սրբ Կյուրեղը խորապես համոզված էր, որ միայն Աստված կարող է լինել փրկության գործընթացի սուբյեկտը: Ոչ մի մարդ, նույնիսկ Հիսուս Նազովրեցու նման կատարյալ սուրբ ի զորու չէր կործանելու մեղքի և մահվան իշխանությունը: Բանն իրոք մարմին եղավ և մարդկային բնությունը դարձրեց նաև իրենը: Սրբ Կյուրեղի քրիստոսաբանությունն ուներ, նախ և առաջ, փրկչաբանական նշանակություն: Սրբ

---

[2] **Флоровский Г.В.** Византийские отцы V-VIIIвв. Минск, 2006, стр. 16.

Կյուրեղի համար սկզբունքային նշանակություն ուներ մարմնացյալ Բանի միեղինությունը, այսինքն՝ հենց Բանն է ծնվել Սրբ Կույսից, ու հենց Նա է մահացել խաչի վրա: Բան-Աստված ոչ միայն բնակվում էր մարդ Հիսուսի մեջ, ինչպես դա կարծում էին անտիոքացիները, այլ դարձավ մարդ: Հենց այստեղից է բխում Սրբ Կյուրեղի այն համոզմունքը, որ Քրիստոսի մեջ Աստծո և մարդու միջև գոյություն ունի ոչ միայն բարոյական, այլև գոյաբանական միություն, ինչի հետևանքով խաչի վրա մարդկության մեղքերի քավության համար մահացավ ոչ թե մի սուրբ մարդ, որի մեջ բնակվում էր Բանը, այլ հենց ինքը՝ Բան-Աստված: Այդ պատճառով և Սրբ Կույսը հորջորջվում է Աստվածածին, քանի որ նա ոչ թե մարդու, այլ մարդացած Բանի մայրն էր:

Ալեքսանդրյան տեսակետից Բանն ընդունել է ամբողջ մարդկային բնությունը, սակայն դրանից նրա աստվածային բնությունը որևէ փոփոխություն չի կրել: Ի տարբերություն անտիոքացիների, ալեքսանդրացիները Քրիստոսի մարդկային բնությունը երբեք չէին նմանեցնում տաճարի, որում բնակվում էր Բանը, և նրանց համար մարմնացումից հետո Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների միջև գոյություն ունի գոյաբանական միեղինություն: Հենց այստեղից է բխում Սրբ Կյուրեղ Ալեքսանդրացու «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» հայտնի քրիստոսաբանական բանաձևը, որի շուրջ Քաղկեդոնի ժողովից հետո բուռն աստվածաբանական վեճեր էին ծավալվել: Ժամանակակից ռուսական աստվածաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ այս բանաձևը Սրբ Կյուրեղի կողմից թյուրիմացաբար է մտցվել աստվածաբանական գրականության մեջ, քանի որ նա իբր թե չգիտեր, որ այն պատկանում է հերետիկոս ապողինարականներին: Ահա թե ինչ է դրա մասին գրում հայտնի ռուս աստվածաբան Լուրյեն. «Սրբ

Կյուրեղը համարում էր, որ փոխ է առել այս դրույթը Սրբ Աթանաս Ալեքսանդրացուց: Իրականում նա գտել է այն ապողինարականների ինչ-որ կեղծ բնագրերի մեջ, որ նրանք հրապարակել էին Սրբ Աթանասի անվան տակ 4-րդ դարի երկրորդ կեսին, իսկ դրա ճշմարիտ աղբյուրը նույնացվում է որպես Ապողինարի Առ Հովիանոս երկը:

Ապողինարականները կազմել են նման կեղծ արձանագրությունների մի մեծ մատենաշար, որոնք հրապարակել են 3-րդ դարի ու 4-րդ դարի սկզբի մեծ հայրերի անունների տակ, այս երկերից շատերը նոր կյանք կստանան նոր մեկնությամբ հանդերձ միաբնակ ավանդություններում:

Ապողինարի համար “μία φύσις” բանաձևի իմաստն այն էր, որ, ըստ նրա պատկերացումների, Բանի կողմից ընդունված էր միայն մարմինը կենդանական հոգով հանդերձ, սակայն առանց ոգու, իմա՝ բանական հոգու: Իհարկե, Սրբ Կյուրեղը նկատի չուներ որևէ նման բան, սակայն լոկ մի նման բանաձևով անտիոքացիներին լուրջ առիթներ էր տալիս նրան ապողինարականության մեջ կասկածելու համար»[3]: Եթե նույնիսկ Սրբ Կյուրեղը այս բանաձևը փոխ է առել ոչ թե ս.Աթանասից, այլ ապողինարականներից, ապա դա բնավ չի նվազեցնում նրա աստվածաբանական արժեքը: Այդ արժեքն այն է, որ Սրբ Կյուրեղը վճռականապես խզում է կապը անտիոքյան դպրոցի համար բնորոշ քրիստոնեական դավանաբանության ռացիոնալացման միտումի հետ, որի վառ դրսևորումն էր նեստորականությունը, և հաստատում է քրիստոսաբանական դավանանքի վերբանական ընկալումը, որին կարելի է հասու լինել միայն հավատի միջոցով: Նախ և առաջ Սրբ Կյուրեղն այս բանաձևի միջոցով շեշտը դնում էր ոչ միայն Քրիստոսի մեջ Աստծո և մարդու

---

[3] **Лурье В.М.** История византийской философии. Санкт-Петербург, 2006, стр. 111.

բարոյական միության, այլև նրանց բնական, կարելի է ասել՝ ֆիզիկական միության վրա, ինչի շնորհիվ հնարավոր դարձան մարդկության փրկությունն ու աստվածացումը: Ու կարևորն այստեղ այն է, որ աստվածային ու մարդկային բնությունները չխառնվեցին միմյանց հետ, այլ պահպանել են իրենց տարբերակիչ առանձնահատկությունները: Դրա մասին շատ արտահայտիչ է գրում հենց ինքը՝ ս.Կյուրեղը նեստորականներին ուղղված իր նզովքների մեջ. «Ոչ Բան-Աստված փոխակերպություն կրեց, դառնալով մարմին, ոչ էլ մարդը, դադրելով լինել այն, ինչ էր, փոխակերպվեց աստվածային բնության: Այսպիսով, մենք երկրպագում ենք Տեր Քրիստոսին, ճանաչելով նրա մեջ բնությունների տարբերությունները»[4]:

Ըստ Սրբ Կյուրեղի՝ Քրիստոսի մարդկային բնության կրած տառապանքը կրում էր նաև Բանը, իսկ Սրբ Կույսն Աստվածածին էր: Հենց այս վերջին դրույթը աստվածաբանական վեճի պատճառ դարձավ, որի հետևանքով գումարվեց 3-րդ Տիեզերական ժողովը Եփեսոսում, որում դատապարտվեց անտիոքյան դպրոցի քրիստոսաբանությունը: Այս վեճի անմիջական առիթը դարձավ Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Նեստորի գործունեությունը, ով իր քարոզներում հրաժարվում էր Սրբ Կույսին Աստվածածին հորջորջել՝ համարելով, որ նրան կարելի է միայն Քրիստոսածին անվանել:

Նեստորն օժտված անձնավորություն էր, փայլում էր պերճախոսությամբ և առաքինությամբ, ու շատերի կողմից համարվում էր երկրորդ Ոսկեբերան: Նա անողոք հալածում էր հերձվածողներին, սակայն ինքը շուտով դարձավ հերձվածող, ու նզովվեց: Բանն այն է, որ Սրբ Կույսի՝ որպես

---

[4] Антология восточно-христианской богословской мысли. Москва-Санкт-Петербург. 2009, т. 1, стр. 576.

Աստվածածնի պաշտամունքն արդեն արմատացած էր Եկեղեցու մեջ և արժանացել է Եկեղեցու մի շարք Հայրերի հավանությանը, որոնց թվում էին Սրբ Աթանաս Ալեքսանդրացին ու Սրբ Բարսեղ Կեսարացին: Այս եզրույթը կարևոր աստվածաբանական նշանակություն ուներ, քանի որ ցույց էր տալիս Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների անքակտելի կապը ու Բանի ճշմարիտ մարդեղությունը: Սրբ Կույսը պիտի Աստվածածին անվանվի, քանի որ Քրիստոս որպես Անձ Բան-Աստված էր, Սրբ Երրորդության երկրորդ Դեմքը: Սակայն այս տեսակետն անընդունելի էր անտիոքյան դպրոցի համար, որի կողմնակիցն էր Նեստորը: Նա, հետևելով Թեոդորոս Մոպսուեստացուն, համարում էր, որ Սրբ Կույսին կարելի է միայն Քրիստոսածին անվանել, քանզի Որդին ծնված է Հորից հավիտենականության մեջ, ու նրա ժամանակի մեջ ծնվելու մասին խոսք լինել չի կարող: Ուստի Թեոդորոսը համարում էր, որ Մարիամը ծնել է ոչ թե Աստծուն, այլ այն տաճարը, որում բնակվեց Աստված:

Նեստորը, առաջարկելով Սրբ Կույսին Քրիստոսածին անվանել, հիմնավորում էր դա այն իրավիճակով, որ ստեղծվել է Կոստանդնուպոլսում, որտեղ հավատացյալների մի մասը Նրան անվանում էր Աստվածածին, իսկ մյուսը՝ մարդածին: Քրիստոսածին անվանումը նրան թվում էր ընդունելի փոխզիջում, քանի որ Քրիստոս ուներ և՛ աստվածային, և՛ մարդկային բնություն: Այս տեսակետն առաջին հայացքից ճիշտ է թվում, բայց այդ տպավորությունը ցրվում է, եթե հաշվի է առնվում, թե ինչպես է Նեստորը հասկացել աստվածության ու մարդկության փոխհարաբերությունը Քրիստոսի անձի մեջ: Հետևելով Թեոդորոս Մոպսուեստացուն՝ նա համարում էր, որ Բանն ուներ Հայր, սակայն չուներ Մայր, իսկ Մարիամը ծնել է մի մարդու, ով դարձել է տա-

ճար, որում բնակվեց Բանը: Հիսուսն Աստված չէր, բայց նրա մեջ էր բնակվում աստվածային Բանը, ինչի շնորհիվ Նա նույնպես Աստված է համարվում:

Նեստորին ընդդիմացավ Սրբ Կյուրեղ Ալեքսանդրացին, ում նախաձեռնությամբ 431 թ. Եփեսոսում գումարվեց Տիեզերական ժողով: Նեստորը նզովվեց, ու դրանով մեկընդմիշտ մերժվեց նրա քրիստոսաբանությունը, որի համաձայն Աստծո Որդու մեջ կար երկու անձ՝ աստվածային ու մարդկային, որոնք միմյանց հետ լոկ արտաքին հարաբերության մեջ էին գտնվում: Հաղթեց Սրբ Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանությունը, ըստ որի՝ աստվածայինն ու մարդկայինն ի Քրիստոս միեղեն են և անբաժանելի: Նրա խոսքերով. «Ով Էմմանուէլին չի դավանում ճշմարիտ Աստված, ու հետևաբար Սրբ կույսին՝ Աստվածածին, քանզի նա մարմնով ծնեց Բանը, ծնված Հայր-Աստծուց ու մարմին դարձած՝ նզովյալ լինի»[5]: Սրբ Կյուրեղի մահվանից հետո 444 թ. Ալեքսանդրիայի պատրիարքի աթոռն անցավ Դիոսկորոսին, որը տրամաբանական ավարտին հասցրեց իր նախորդի քաղաքականությունը, ով ձգտում էր հաստատել Ալեքսանդրիայի աթոռի գերակայությունը Կոստանդնուպոլսի աթոռի նկատմամբ և իր ազդեցությանը ենթարկել պետական իշխանությունը ի դեմս կայսերական արքունիքի:

449 թ. Եփեսոսում գումարվեց ևս մի եկեղեցական ժողով, որը ղեկավարում էր Դիոսկորոսը: Ժողովի գումարման առիթը դրանից մի տարի առաջ կայացած մեկ այլ ժողովն էր, որ գումարվել էր Կոստանդնուպոլսի պատրիարք Փլաբիանոսի կողմից: Այդ ժողովը դատապարտել էր եգիպտացի վարդապետ Եվտիքեսի ուսմունքը, որը, վկայակոչելով Սրբ Կյուրեղի վարդապետությունը, խոսում էր Քրիստոսի մի բնության մասին, ինչը նրա կարծիքով նշանակում

[5] **Նույն տեղում**, էջ 562:

էր, որ մարմնացումից հետո Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունները խառնվել են իրար հետ, ինչի հետևանքով մարդկությունը կլանվել է աստվածության կողմից: Դիոսկորոսի կողմնակիցները վերականգնեցին Եվտիքեսի իրավունքները և ընդունեցին նրա քրիստոսաբանական տեսությունը: Դա ընդունելի չէր ինչպես Հռոմի պապ Լևոն Ա-ի, այնպես էլ Մարկիանոս կայսրի համար, և 2 տարի անց Քաղկեդոնում գումարվեց նոր տիեզերական ժողով, որն ընդունեց մի նոր քրիստոսաբանական դավանանք: Քաղկեդոնի ժողովի պատմական նշանակությունը հնարավոր չէ հասկանալ առանց 5-րդ դարի կեսերին Բյուզանդիայում ստեղծված քաղաքական իրավիճակի ճիշտ ըմբռնման:

450 թ. մահանում է Թեոդոսիոս Բ կայսրը, և գահ է բարձրանում Մարկիանոսը իր կնոջ՝ կայսրուհի Պուլքերիայի հետ միասին, որոնց կրոնական նախասիրություններն իր նախորդի նախասիրությունների կատարյալ հակապատկերն էին: Եթե Թեոդոսիոսը բացահայտ հակում ուներ դեպի միաբնակությունը, ինչն արտահայտվեց Եվտիքեսի նկատմամբ նրա ցուցաբերած հովանավորությամբ, ապա Մարկիանոսը սկզբից ի վեր զբաղեցրեց միաբնակների նկատմամբ մերժողական դիրքորոշում: Դա կապված էր ոչ միայն նրա կրոնական նախասիրությունների հետ, այլև պայմանավորված էր քաղաքական անհրաժեշտությամբ: Կայսրը շատ էր մտահոգված եկեղեցական տարածայնություններով, քանի որ դա, հաշվի առնելով եկեղեցու ազդեցությունը կայսրության մեջ, կարող էր բացասաբար անդրադառնալ պետության կայունության և ամբողջականության վրա: Ուստի նա ցանկանում էր ընդհանուր հայտարարի բերել տարբեր եկեղեցական ուղղությունները և այս գործում ապավինում էր Հռոմի պապի աջակցությանը, որը

խիստ թշնամաբար էր տրամադրված միաբնակության հանդեպ: Դրա արդյունքը եղավ այն, որ ժողովի որոշումները մեծապես իրենց վրա են կրել պապականության դավանաբանական պատկերացումների և քաղաքական շահերի դրոշմը, ինչը նորություն էր եկեղեցու պատմության մեջ: Ամբողջ ժողովն անցավ Հռոմի Լևոն Ա պապի գերակայության ներքո: Ուստի ամենևին էլ զարմանալի չէ, որ Քաղկեդոնի ժողովի որոշումներն իրենց վրա էին կրում Հռոմի դավանաբանական և քաղաքական ազդեցության հզոր դրոշմը, առավել ևս, որ Լևոն Ա պապին աննքող սատարում էր գերագույն պետական իշխանությունը հանձին Մարկիանոս կայսրի:

Ժողովն ընդունեց հայտնի դավանական սահմանումը, որը դարձավ երկաբնակ քրիստոսաբանության հիմքը: Դրա կարևորության պատճառով մեջբերենք այն ամբողջությամբ. «Արդ, հետևելով սուրբ հայրերին, բոլորս միաձայն ուսուցանում ենք դավանել միևնույն Որդուն, Տեր մեր Հիսուս Քրիստոսին, ճշմարիտ Աստծուն, ճշմարիտ մարդուն, միևնույն, բանական հոգուց և մարմնից, համագո Հորը ըստ Աստվածության, և համագո մեզ ըստ մարդկության, ամեն ինչով մեզ նման, բացի մեղքից, ծնված ամեն ինչից առաջ Հորից, իսկ վերջին օրերին մեր և մեր փրկության համար ծնված Կույս Աստվածածին Մարիամից ըստ մարդկության, միևնույն Քրիստոսն, Աստծո Որդուն, միածնին, երկու բնությունների մեջ, անշփոթ, անփոփոխ, անբաժանելի, անզատելի ճանաչվող, այնպես որ միավորումից բնավ չի խախտվում երկու բնությունների տարբերությունը, բայց առավել ևս պահպանվում է յուրաքանչյուր բնության հատկությունը, և միավորվում է ի մի Դեմք, մի Առանձնավորություն, ոչ թե երկու դեմքերի հատվող կամ բաժանվող, այլ միևնույն Որդուն,

միածնին, Բան Աստծուն, Տեր Հիսուս Քրիստոսին»[6]:

Այս սահմանումի մեջ ուշագրավ է, նախ և առաջ, նրա փոխզիջողական բնույթը: Մի կողմից, ի հակակշիռ նեստորականների, հաստատվում է Քրիստոսի անձի միությունը, իսկ մյուս կողմից, ի հակակշիռ Եվտիքեսի, որի կարծիքով մարդկությունը ի Քրիստոս կլանված էր Նրա Աստվածության կողմից, հաստատվում են Քրիստոսի մարդկային բնության լիարժեքությունն ու կատարելությունը: Առաջին հայացքից այս դավանական սահմանումը ընդունելի պիտի լիներ հակամարտող եկեղեցական կուսակցությունների համար, սակայն իրականում դա տեղի չունեցավ: Փաստորեն ամբողջ քրիստոնյա Արևելքը, Հայաստանը ներառյալ, մերժեց այն: Բյուզանդական ավանդությանը պատկանող եկեղեցու պատմության մասնագետները հակված են այս մերժումը բացատրել կամ քաղաքական գործոններով, կամ սովորական թերըմբռնմամբ: Ահա թե ինչ է գրում այդ մասին Ա.Վ. Կարտաշևը. «Հայ աստվածաբանները, հեռանալով հույներից, դադարել են հասկանալ հունարեն լեզուն, և տարբերակել «ֆիսիս», «ուսիա», «իպոստասիս» եզրույթների նրբությունները: Հայերենի պարզունակության պատճառով այս եզրույթները թարգմանվում էին հայերեն մի բառով՝ ինութիւն: Այսպիսով, Քաղկեդոնի **երկու բնությունները** հասկացվել են որպես **երկու դեմքեր**: Միաժամանակ Քաղկեդոնի հակառակորդ միաբնակների ամբողջ քարոզչությունը հասկանալի էր հայերի համար և նրանց մեջ համակրանք էր առաջացնում: Իսկ բյուզանդական կայսրերի անհետևողական քարոզչությունը, նրանց՝ Քաղկեդոնն ուրացող եկեղեցական ամբոխավարությունը Հենոտիկոններով և դրանք ստորագրող հիերարխներով հանդերձ միայն համոզում էին հայերին, որ նրանք իրավացի են, ձեռնպահ մնա-

---

[6] **Лосский В.Н.** Боговидение. Москва, 2006, стр. 528.

լով Քաղկեդոնն ընդունելուց, քանզի և բյուզանդական եկեղեցին ճշմարտությունը որոնում է Քաղկեդոնից ձերբազատվելու ճանապարհների վրա: Այն ժամանակ 491 թ. հայկական ժողովը Վաղարշապատ մայրաքաղաքում ընդունեց Զենոնի Հենոտիկոնը և հավասարապես դատապարտեց և՛ Նեստորին, և՛ Եվտիքեսին, մերժելով նաև Քաղկեդոնի ժողովը, որն իբր թե սահմանեց երկու դեմք»[7]: Սա, իհարկե, կատարյալ անհեթեթություն է:

5-րդ դարի երկրորդ կեսին հունարենը Հայաստանում չիմանալու մասին խոսք լինել չի կարող, քանի որ հենց այս ժամանակաշրջանում Հայաստանում ծաղկում էր հունաբան դպրոցը, որի ներկայացուցիչները կատարելապես տիրապետում էին Հոմերոսի լեզվին: Էլ ավելի անհեթեթ է Ա.Վ. Կարտաշևի կարծիքը հայոց լեզվի պարզունակության մասին, քանի որ դասական գրաբարը կատարյալ քերականական կառուցվածք ու շատ հարուստ բառապաշար ունեցող լեզու էր, ինչը հնարավորություն էր ընձեռում ճշգրտորեն թարգմանելու ցանկացած հունարեն բնագիր: Հետևաբար՝ հայերի կողմից Քաղկեդոնը մերժելու պատճառը բոլորովին այլ էր: Հայոց եկեղեցին մերժել է այն ոչ թե Սասանյան Իրանի գերիշխանության հետ կապված քաղաքական կոնյունկտուրայի պատճառով, ու առավել ևս ոչ հունական աստվածաբանական տերմինաբանությունը չհասկանալու հետևանքով, այլ որովհետև քաղկեդոնական քրիստոսաբանությունը ակնհայտորեն թերի էր զուտ աստվածաբանական տեսակետից:

Դրանում համոզվելու համար բավական է վերլուծել Լևոն Ա պապի հայտնի Տոմարը, որը հիմք դարձավ քաղկե-

---

[7] **Карташев А.В.** Вселенские соборы. https://azbyka.ru/otechnik/Anton_Kartashev/vselenskie-sobory/5_16 (19.12.2018)

դոնական քրիստոսաբանության համար: «Այսպիսով, երկու բնությունների հատկությունների պահպանման ու նրանց ի մի Անձ միավորման ժամանակ վեհությունն ընդունեց նվաստացում, զորությունը՝ տկարություն, հավերժությունը՝ մահկանացություն: Մեր բնության պարտքը վճարելու համար անկիրք բնությունը միացել է կրքոտ բնության հետ, որպեսզի միևնույն «Միջնորդ՝ Աստուծոյ և մարդկանց միջև. մարդը Հիսուս Քրիստոս կարող էր մեռնել մի բնությամբ ու չէր կարող մեռնել մյուսով, ինչպես որ դա և պահանջում էր մեր բժշկության հատկությունը: Ուստի ճշմարիտ Աստված ծնվեց ճշմարիտ մարդու իսկական ու կատարյալ բնության մեջ»[8]: Այս դրվագում ուշագրավ է, առաջին հերթին, Քրիստոսի անձի մասին Լևոն Ա պապի խիստ յուրօրինակ պատկերացումը: Այն նրա համար երկու բնությունների միավորման գործընթացի արգասիք է, իսկ քանի որ յուրաքանչյուր գործընթաց կատարվում է ժամանակի մեջ, ապա դրանով բացառվում է Որդի-Աստծո Առանձնավորության՝ որպես Սրբ Երրորդության Դեմքերից մեկի մշտնջենավոր էությունը: Հակասության մեջ մտնելով երրորդաբանական դավանանքի հետ, որի համաձայն Բանի անձը հավիտենական է, նա դիտարկում է այն որպես մարդեղության հետևանք, որպես երկու բնությունների միավորման արգասիք, առանձնավորությունն ածանցյալ դարձնելով բնությունից, ինչն անհամատեղելի է աստվածաշնչական անձնապաշտության հետ: Լևոն Ա պապը չէր նկատում, որ նրա հայեցակարգը հակասում է Սրբ Գրքին, որտեղ ասված է. «Եվ Բանը մարմին եղավ»: (Հովի. Ա14) այսինքն՝ մարմնացավ Բան-Աստծո Առանձնավորությունը, մինչդեռ Լևոն Ա պապի մոտ մարմ-

[8] Деяния вселенских соборов. Казань, 1908, т. 3, стр. 219; **Лев Великий**. Послание Флавиану, http://krotov.info/acts/05/2/leo_vel_flavianu.htm (19.12.2018)

նացել է ոչ թե Սրբ Երրորդության Առանձնավորություններից մեկը, այլ աստվածային բնությունը, որ ընդհանուր է բոլոր երեք Անձերի համար:

Քաղկեդոնական քրիստոսաբանությունը, որի գաղափարական աղբյուրը Լևոն Ա պապի Տոմարն էր, իր ծագումով զուտ արևմտյան երևույթ էր, ուստի զարմանալի չէ, որ այն մերժվել է Քրիստոնյա Արևելքում: Նրա ոգին հավասարապես խորթ է և՛ նեստորականների, և՛ միաբնակների համար: Առաջին հայացքից կարող է թվալ, որ Լևոն Ա պապը իմաստուն կերպով առաջարկել է փոխզիջումային դավանական բանաձև, որը հավասարապես հեռու էր Ալեքսանդրյան և Անտիոքյան դպրոցների ծայրահեղություններից, սակայն այս առաջին տպավորությունը խաբուսիկ է: Իրականում Տոմարի կեղծ փոխզիջումային քրիստոսաբանությունը շատ մոտ էր նեստորականությանը:

Ինչպես արդարացիորեն նշում է հայտնի ամերիկացի հայրաբան Յա. Պելիկանը. «Երբ նախագոյության, կենոզիսի և համբարձման քրիստոսաբանությունը դիմում էր սուր վեճին երկու բնությունների փոխհարաբերությունների կապակցությամբ, նա որոշակի նմանություն էր ի հայտ բերում այս միության առանձնավորության աստվածաբանության հետ: Այն էլ ավելի մեծ նմանություն ուներ բնակվող Բանի աստվածաբանության հետ, դա մասամբ բացատրվում է նրանով, որ Լևոնը միջամտեց կոնֆլիկտին՝ նպատակ ունենալով դատապարտել այն, ինչ նա հասկանում էր որպես եվտիքյան ծայրահեղություն առանձնավորական միության մասին վարդապետության մեջ: Իրական վարդապետական կապը առանձնավորական միության, բնակվող Բանի և նախագոյության, կենոզիսի և համբարձման աստվածաբանությունների միջև, երևի, ավելի լավ կերևա, եթե մենք վերացարկվենք այս բանավեճից: Երրորդ և երկրորդ դիր-

քորոշումների իրար մոտ լինելն ակնհայտ է: Երկուսն էլ ձգտում էին պահպանել «երկու բնությունների և էությունների տարբերությունը» և անփոփոխ աստվածային բնությունը այն վայրիվերումներից, որ բնորոշ են մարդկային բնության համար: Ուստի յուրաքանչյուր «ձևը» իրեն բնորոշ գործողություններ է կատարում մյուսի հետ շփվելիս, այսինքն՝ Բանը կատարում է Իր համար բնորոշը, իսկ մարմինը կատարում է մարմնին բնորոշը»[9]: Այդ պատճառով հայերի կասկածները, որ քաղկեդոնական դավանանքը սքողված նեստորականություն է, բնավ անհիմն չէին: Քաղկեդոնականության և նեստորականության ամբողջ տարբերությունն այն է, որ Լևոն պապը և նրան հետևող քաղկեդոնականները ժխտում էին Քրիստոսի մեջ առանձին մարդկային առանձնավորության առկայությունը, ինչը չէին անում նեստորականները: Դրանով քաղկեդոնականները խուսափում էին Քրիստոսի անձի երկատումից, բայց դրա փոխարեն ընդունում էին, որ Քրիստոսն ուներ անանձ մարդկային բնություն, ինչը հակասում է ինչպես Սրբ Գրքին, այնպես էլ ողջամտությանը:

Իրավիճակի պարադոքսայնությունն այն է, որ քաղկեդոնականները, մեղադրելով միաբնակներին Քրիստոսի մարդկային բնության կատարելության ժխտման մեջ, իրականում նրանց վերագրում են իրենց սեփական մոլորությունները: Ահա թե ինչ է գրել այդ մասին նշանավոր ռուս աստվածաբան Գ. Ֆլորովսկին. «Քաղկեդոնի դավանանքի պարադոքսն այն է, որ միաժամանակ դավանվում է Քրիստոսի կատարելությունը «մարդկության մեջ», որ «համագո է մեզ ըստ մարդկության, ու նման է մեզ ամեն ինչում բացի մեղքից», և բացասվում է, որ Քրիստոս սովորական մարդ

---

[9] **Пеликан Я.** Возникновение кафолической традиции. [100-600] Москва, 2007, стр. 246.

էր: Նա ոչ թե «ընդունեց մարդուն», այլ «մարդացավ»: Նրա մասին ասելի է ամենայն մարդկայինը, նրան կարելի է մարդու տեղ ընդունել, բայց Նա ոչ թե մարդ է, այլ Աստված»[10]:

Դժվար է ավելի մեծ հստակությամբ ցույց տալ քաղկեդոնական քրիստոսաբանության թերիությունը, քան դա արել է նրա համոզված ջատագով Գ. Ֆլորովսկին: Ինչ է նշանակում, թե Քրիստոսին կարելի էր ընդունել մարդու տեղ, բայց նա ոչ թե մարդ էր, այլ Աստված, եթե ոչ Քրիստոսի մարդկային բնության երևութական լինելը, այսինքն՝ փաստացի դոկետիզմ, որում քաղկեդոնականները սիրում են մեղադրել միաբնակներին: Քաղկեդոնի դավանանքը, սահմանելով երկու բնությունների գոյությունն ի Քրիստոս, ըստ էության զրկել է Քրիստոսի մարդկությունն առանձնավորությունից ու հետևաբար՝ իրական լինելուց: Այս հիմնախնդրի առկայությունը գիտակցվում էր բյուզանդացի աստվածաբանների կողմից, և փորձ է արվել՝ լուծելու այն քաղկեդոնական երկաբնակ քրիստոսաբանության շրջանակներում: Դա արվել է 6-րդ դարի աստվածաբան Ղևոնդեոս Բյուզանդացու կողմից, որն առաջարկել է այսպես կոչված «առանձնավորեցման» տեսությունը, որի համաձայն՝ Քրիստոսի մարդկային բնությունը զուրկ է սեփական առանձնավորությունից, իսկ Նրա առանձնավորությունն է Բանը:

Այս գաղափարի հստակ բանաձևումը կարելի է գտնել հայտնի ռուս աստվածաբան Ն. Մալինովսկու մոտ: «Աստվածության և մարդկության և իրենց համապատասխանող հատկությունների և գործունեությունների իրական տարբերությամբ հանդերձ, ի Քրիստոս Հիսուս կա մի Դեմք Բան Աստծո, միեղեն «Ես», որ եզակիորեն գիտակցում է Իրեն բնությունների երկակիության մեջ, և ղեկավարում է բոլոր

[10] **Флоровский Г.В.** Византийские отцы V-VIII вв. Минск, 2006, стр. 30.

երևույթներն ու դրսևորումները մարդու կյանքում: Մարդկային բնությունը Բան Աստծո Առանձնավորությունից առանձին, ինքնուրույն առանձնավորություն չի ստացել, սակայն ստանալով Առանձնավորություն Աստվածային Առանձնավորության մեջ, ընդունվեց Բան Աստծո Առանձնավորության մեջ»[11]: Նրա սույն տեսակետն, անշուշտ, գալիս է Հովհան Դամասկացուց, որը պնդում էր, որ Քրիստոսի մարդկային բնությունը չի ունեցել իրեն համապատասխանող առանձնավորություն: Դրանից տրամաբանորեն բխում է քաղկեդոնականների այն համոզմունքը, որ Քրիստոսն ընդունեց ոչ թե կոնկրետ մարդկային, այլ համամարդկային, բնություն, ինչը, իբր թե, Նրան հնարավորություն ընձեռեց փրկելու համայն մարդկությունը: Քաղկեդոնականները չեն գիտակցում, որ համամարդկային բնությունը, որը նրանք վերագրում են Քրիստոսին, ինքնին վերացական հասկացություն է ու չունի օբյեկտիվ գոյություն: Ուստի եթե չի ընդունվում մարդկային առանձնավորության առկայությունն ի Քրիստոս, ապա դրանով փաստորեն հարցականի տակ է դրվում նրա իսկական մարդ լինելը, քանզի պատմության մեջ գոյություն ունեցած բոլոր մարդիկ ունեին դա ու հենց դրա շնորհիվ իրական, այլ ոչ թե առասպելական անձինք էին:

Եթե ընդունում ենք, որ Քրիստոս ուներ բանական մարդկային հոգի, ապա պիտի ընդունենք, որ նա ուներ նաև մարդկային առանձնավորություն, ինչի մասին միանշանակ գրում էին հայ աստվածաբանները: Խոսրովիկ Թարգմանչի խոսքերով. «Ոչ բնութիւն անգոյ եւ անդէմ զմարդկայինս ընկալեալ Բանն Աստուծոյ, այլ յաւէտ թէ ի հասարակական մարդկային բնութենէս առանձնակի միացոյց Իւր մարմին

---

[11] **Малиновский Н.** Православное догматическое богословие. Т. 3, Санкт-Петербург, 2006, стр. 110.

անձամբ բանականաւ եւ նովին մարմնով յաղթեաց մեղաց, դժոխոց եւ ապականութեան»[12]: Քաղկեդոնական դավանաբանական դիրքորոշման մեջ ներքին պարադոքս կա: Նրանք մեղադրում են միաբնակներին, որ վերջիններս իբր թե ժխտում են կատարյալ մարդկության առկայությունն ի Քրիստոս, մինչդեռ իրականում դա բնորոշ է հենց իրենց: Ահա թե ինչ է գրում առանձնավորեցման մասին քաղկեդոնականության խոշորագույն տեսաբան Հովհան Դամասկացին. «Քանզի Աստված Բանի մարմինը չստացավ կեցություն իր առանձնահատուկ առանձնավորության մեջ և չդարձավ մի այլ առանձնավորություն Աստված Բանի առանձնավորության համեմատությամբ, բայց, նրա մեջ առանձնավորություն ստանալով, դարձավ, ավելի լավ ասած, ընդունված Աստված Բանի առանձնավորության մեջ, այլ ոչ թե իր առանձնահատուկ առանձնավորության մեջ ինքնուրույն գոյություն ունեցող: Ուստի և այն գոյություն չունի առանց առանձնավորության և չի ներմուծում Երրորդության մեջ մի այլ առանձնավորություն»[13]:

Առաջին հայացքից այստեղ որևէ հիմք չկա՝ Դամասկացուն ապողինարիզմի մեջ մեղադրելու համար: Նա չի նույնացնում Քրիստոսի մարմինը զուտ ֆիզիկական բնության հետ: Խոսելով Սրբ Կույսից Քրիստոսի ծննդի մասին՝ նա գրում է. «Այն ժամանակ հովանեց նրան, կարծես թե աստվածային սերմ, Որդին Աստծո, Բարձրյալ Աստծո առանձնավորական Իմաստությունն ու զորությունը, և նրա անարատ և մաքրագույն արյունից կազմեց իր համար մեր կազմի սաղմը՝ մարմինը, որ շնչավորված է մտածող և բանական հոգով, ոչ թե սերմով բեղմնավորման միջոցով, այլ

---

[12] **Խոսրովիկ Թարգմանիչ**, Վաղարշապատ, 1899, էջ 25:

[13] **Иоанн Дамаскин**. Точное изложение православной веры. Москва, 2003, стр. 99.

ստեղծագործաբար, Սրբ Հոգու միջոցով»[14]: Այս սահմանումը կարելի էր ուղղափառ համարել, եթե չլիներ մի «բայց»՝ Ապողինարի հերձվածը ոչ թե Քրիստոսի մեջ բանական հոգու գոյության բացասման, այլ նրա մոտ «մտքի» (nous) առկայության ժխտման մեջ էր, իսկ դա ամենևին էլ նույն բանը չէ: Բանական հոգին դատողական մտածողության կարողություն է, մինչդեռ միտքը, ըստ Արիստոտելի ուսմունքի, ձևերի ձևն է ու զգայությունների զգայությունը, հավերժությունն է, որ մտածում է ինքն իրեն: Դրա ամենաէական առանձնահատկությունն այն է, որ նրա մեջ համընկնում են միտքը և նրա առարկան: Այլ կերպ ասած, Արիստոտելի համար միտքը զուտ ինքնագիտակցության սկզբունք է, դա այն է, ինչը նոր ժամանակի փիլիսոփայության մեջ կոչվում է «Ես»: Ապողինարը ժխտում էր ոչ թե Քրիստոսի մոտ բանական մարդկային մտածողության կարողության, այլ առանձին մարդկային «ես»-ի գոյությունը, կամ էլ, եթե օգտագործենք աստվածաբանական եզրույթը՝ առանձին մարդկային առանձնավորության գոյությունը: Բայց հենց դա է այսպես կոչված «առանձնավորեցման» տեսության էությունը, որը քաղկեդոնականներն ուղղափառ են համարում: Ուստի հենց նրանք, այլ ոչ թե միաբնակներն են մեղավոր Քրիստոսի մեջ կատարյալ մարդկության ժխտման մեջ: Հովհան Դամասկացու վերոբերյալ դատողության մեջ կա ևս մեկ հետաքրքիր փաստարկ: Նա համարում է, որ եթե մենք ընդունում ենք Քրիստոսի մեջ առանձին մարդկային առանձնավորության առկայությունը, ապա դրանով իբր թե ներմուծում ենք չորրորդ առանձնավորություն Սրբ Երրորդության մեջ: Այս փաստարկն, անշուշտ, անհեթեթ է: Սրբ Երրորդությունը կդառնար քառորդություն լոկ այն դեպքում, եթե Քրիստոսի համբարձումից հետո երկնքում

[14] **Նույն տեղում**, էջ 89:

հայտնվեր ևս մեկ անեղ առանձնավորություն: Սակայն Քրիստոսի մարդկային առանձնավորությունը եղական է և հաղորդակից է Աստծուն ոչ թե ըստ բնության, այլ ըստ շնորհի, այնպես որ Սրբ Երրորդության դավանանքի մասին այստեղ խոսք լինել չի կարող:

Բյուզանդական աստվածաբանության առանձնահատկություններից մեկն անտիկ փիլիսոփայության գաղափարական զինանոցի լայն օգտագործումն է: Մասնավորապես այս մոտեցումը շատ բնորոշ էր Հովհան Դամասկացու համար: Ահա, օրինակ, թե ինչ փաստարկներ է նա բերում հօգուտ Քրիստոսի մեջ երկու բնությունների առկայության. «Երկու բնություններն ի Քրիստոս միավորվել են միմյանց հետ առանց փոխակերպման ու փոփոխության, այնպես որ ոչ աստվածայինն է զրկվել իրեն բնորոշ բնությունից, ոչ մարդկայինը փոխվեց աստվածային բնության՝ չդառնալով նաև անգոյություն: Հավասարապես նաև երկուսից չկազմվեց մեկ բարդ բնություն, քանզի բարդ բնությունը, դառնալով ուրիշ, որպես տարբեր բնություններից կազմված, արդեն չի կարող համագո լինել ոչ մեկին այն տարերքներից, որոնցից նա կազմված է: Օրինակ, մարմինը, որ կազմված է չորս տարերքներից, չի կոչվում ո՛չ հրին համագո, ո՛չ հուր, ո՛չ օդ, ո՛չ ջուր, ո՛չ հող և համագո չէ այս տարերքներից և ոչ մեկին: Ուստի, եթե Քրիստոս բնությունների միավորումից հետո դարձավ մի բարդ բնություն, ինչպես կարծում են հերետիկոսները, ապա նա պարզ բնությունից դարձավ բարդ, և արդեն համագո չէ ո՛չ Հորը, Ում բնությունը պարզ է, ո՛չ էլ Մորը, քանզի Նա կազմված չէր Աստվածությունից ու մարդկությունից: Այս դեպքում և Քրիստոս չէր ունենա ո՛չ Աստվածություն, ո՛չ մարդկություն, և չէր կարող կոչվել ո՛չ Աստված, ո՛չ մարդ, այլ միայն Քրիստոս, համ էլ այս անունը՝ Քրիստոս, ըստ նրանց կարծիքի, կլիներ ոչ թե Դեմքի, այլ լոկ

բնության անուն»[15]: Առաջին հայացքից այս փաստարկումն անթերի է, սակայն եթե ավելի ուշադիր դիտարկենք այն, ապա պարզ կդառնա նրա թերիությունը: Հովհան Դամասկացին միաբնակներին վերագրում է Քրիստոսի բարդ բնության գաղափարը, սակայն ճշմարտությունն այն է, որ միաբնակները և մասնավորապես Սրբ Հովհան Օձնեցին առհասարակ Քրիստոսի բնությանը չէին վերագրում պարզություն կամ բարդություն, իրավացիորեն համարելով, որ հավատի խորհուրդների մասին խոսելիս հարկ է, հետևելով անճառելի աստվածաբանության սկզբունքներին, խուսափել Աստծուն որևէ դրական ատրիբուտներ վերագրելուց: Ինչպես ասում է Սրբ Հովհան Օձնեցին. «Ապա ուրեմն, ոչ է ըստ բնութեան նոյնութեան՝ մի բնութիւն, զի թէ և ասեմք՝ մի բնութիւն Բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ եւ ջախջախ մտածութեամբ, որպէս թէ միոյն ի միւսմէն բաց բարձեալ, և կամ լուծեալք ի միմեանց,՝ որպէս խոնաւուտ բնութեանցն. յորմէ լինի եւ ոչ մի բնութիւն: Այլ զոր էրն ոչ ի բաց թողլով, եղեւ՝ զոր ոչն էր. եւ այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնարհութիւն. մնալով ի բարձրութեան՝ գտաւ նոյն ինքն ի խոնարհութեան: Ապա ուրեմն մի բնութիւն եւ մի դէմ Քրիստոսի, եթէ պարտ է համառօտագոյնս ասել, ոչ ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ միանձնականութեան. զի այս երկոսին ի միասին գրեթէ զրկեսցէ, զԱստուած ի մարդն լինելոյ եւ զմարդն յաստուածանալոյ.այլ է որպէս բազում անգամ ասացի, ըստ անճառ միավորութեան Բանին ընդ Իւրում մարմնի»[16]: Այս դրվագում Հայոց Եկեղեցու քրիստոսաբանությունն արտահայտված է սպառիչ հստակությամբ: Ինչպես տեսնում ենք, Սրբ Հովհան Օձնեցին չի

---

[15] **Նույն տեղում**, էջ 90:

[16] **Ընդդէմ երևութաանաց**, «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 50:

խոսում Քրիստոսի բնության պարզության կամ բարդության մասին: Ի տարբերություն Դամասկացու՝ նա ոչ միայն ձևականորեն, այլև ըստ էության կիրառում է անճառելի աստվածաբանության սկզբունքները՝ խուսափելով հաստատողական արտահայտություններից հավատի ճշմարտությունների մասին: Քրիստոսաբանության մեջ անճառելիության սկզբունքը պահանջում է հրաժարում վերացական դատողությունների միջոցով Աստծո Որդու մարդեղության խորհըրդի ըմբռնման փորձերից, քանզի մարդկային մտածողությունը, պայմանավորված լինելով զգայական փորձով, անզոր է ճանաչելու գերզգայական և զուտ հոգևոր Աստծուն: Քրիստոսի Անձի մեջ աստվածային անեղ բնությունը անճառելի միավորվել է մարդկային եղական բնության հետ: Ելնելով այս փաստից՝ Սրբ Հովհան Օձնեցին տալիս է Քրիստոսին իրարամերժ և տրամաբանորեն հակասական սահմանումներ՝ քաջ գիտակցելով, որ առանձին վերցրած, նրանք հավասարապես չեն կարող ստույգ սահմանել Աստծո Որդու բնությունը. «Իսկ եթէ իրաւապես եւ բարեպաշտաբար զերկոսին լսես, ոչ ինչ է արգել զմին ասելով յիշել եւ զառ ի յերկուցն՝ եւ դարձեալ՝ ոչ մոռանալով զյերկուցն, խոստովանել և զմին»[17]:

Հայոց Եկեղեցու քրիստոսաբանական հայեցակարգը հետևողական է և համոզիչ: Ըստ այս հայեցակարգի՝ Քրիստոս կատարյալ մարդկային բնություն ընդունած աստվածային Բանն է: Մարդեղությունից հետո աստվածային և մարդկային բնություններն ի Քրիստոս անճառելի և անշփոթ միություն են կազմել, ինչի հետևանքով հավատի այս մեծ խորհուրդը բացատրելու բոլոր փորձերը դատապարտված են ձախողման, քանի որ բանականությունն անզոր է հասկանալ գոյաբանական հակադրությունների անքակտելի

[17] **Նույն տեղում**:

միությունը, որոնցից յուրաքանչյուրը պահպանում է իր որակական որոշակիությունը: Բանը մարդացավ Սրբ Կույսից, ում բնությունը Սրբ Հոգին նախօրոք մաքրագործել էր ադամական մեղքից, որպեսզի Աստծո Որդին ազատ լինի նրա հետևանքներից: Բանի աստվածային բնությունն ի սկզբանե անխզելիորեն կապված էր Հիսուսի մարդկային բնության հետ, այնպես որ առաջացել է այն, ինչ ս.Կյուրեղ Ալեքսանդրացին անվանել է «մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ»:

MATEVOSYAN ARTHUR

## ON SOME FEATURES OF THE MIAPHYSITE AND DIAPHYSITE CHRISTOLOGICAL CONCEPTIONS

***Keywords:*** Jesus Christ, God, Holy Spirit, Chalkedonian, Church, Testament, Apolinar, Nestor, Trinity, Miaphisite, Diaphysite.

The problem of the relationship between divine and human natures in the person of Christ began to interest the Church as early as the 4th century, but Christological problems became particularly relevant in the next, 5th century due to the emergence of Nestorian and Arian heresies, which were rejected and condemned by the Church. The Council of Chalcedon had an essential role in the approval of Christological dogma and its decisions were not adopted by the majority of the Eastern Churches, and among them the Armenian Church. During the long struggle against Chalcedonian Christology, the Armenian Church developed its own Christological conception, which is distinguished by consistency and convincingness. According to this conception, Christ is the Logos, who adopted

the perfect human nature. After incarnation, the divine and human natures in Christ formed unspeakable and unmixed unity, as a result of which all attempts to explain this great mystery of faith are doomed to failure, because the mind is unable to understand the inseparable unity of ontological opposites, each of which retains its qualitative definition. The Logos became incarnate of St. Virgin, whose nature the Holy Spirit had previously purified from original sin, so that the Son of God would be free from its consequences. The divine nature of the Logos was initially inextricably linked with the human nature of Jesus, so that the fact that St. Cyril of Alexandria called "the one nature of God the Word incarnate."

# ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

# MODERN AND CONTEMPORARY HISTORY

SAFRASTYAN RUBEN

# DIE ZWEITE TANZIMAT-PHASE: KONZEPT DER "VERSCHMELZUNG UND ZUSAMMENFÜHRUNG"

***Schlüsselwort:*** Osmanisches Reiche, Tanzimat, Reform, Mehmed Emin Ali Pascha, Mehmed Fuat Pascha, "Fusion und Zusammenführung", Hatt-i Hümayun, Sultan, Europa, Muslim.

In der Geschichte des Osmanisches Reiches ist die Zeit zwischen Mitte der 50er und frühen 70er Jahren des XIX Jahrhunderts als die zweite Tanzimat-Phase bekannt. Die türkischen politischen Persönlichkeiten der damaligen Zeit, die Führer der Reformbewegung Mehmed Emin Ali Pascha und Mehmed Fuat Pascha führten eine Politik der Annäherung an den Westen, in der Hoffnung, damit so viele Regionen wie möglich unter der Herrschaft des Sultans zu erhalten.

Die größte Gefahr für die Integrität des Reiches war die nationale Befreiungsbewegung der unterdrückten christlichen Nationen. Ali Pascha und Fuat Pascha sahen dies ohne Zweifel ein und versuchten die bewaffneten Aufstände der Christen zu verhindern, folgend der Tradition dessen Gründer die Politiker der Anfangsphase der Proto-Tanzimat und Tanzimat waren. Daraus folgte, dass Ali und Fuat ideologische Nachfolger der türkischen Politiker der vorherigen Generation waren.

Auf die Formung ihres Weltbildes beeinflusste die vergleichsweise bessere Vertrautheit mit den europäischen Realitäten. Die Notwendigkeit der "Verschmelzung" von Muslimen und Nicht-Muslimen begründeten sie auf das Beispiel Europas. Ali schrieb, dass dort, "alle Menschen frei und gleich sind ...

Religion und Herkunft keine Rolle spielen, und jede Person jede Position einnehmen kann"[1].

Doch Ali und Fuat kopierten nicht nur ihren Vorgänger, sondern gingen sogar noch weiter und formulierten das Konzept der "Verschmelzung und Zusammenführung" aller Bewohner des Osmanischen Reiches, unabhängig von ihrer nationalen oder religiösen Zugehörigkeit, und machten es zum obersten Ziel ihrer Politik. Sie waren davon überzeugt, dass es der einzige Weg war, um die territoriale Integrität des Osmanischen Reiches zu erhalten. Im Mai 1867, erklärte dies Fuat Pascha klar und deutlich an den russischen Botschafter, N. P. Ignatjew, in Konstantinopel, der nach seinem Gespräch mit dem türkischen Politiker, nach Petersburg berichtete: "Er (d.h. Fuat) behauptet, dass die Rettung des Reiches in der Verschmelzung der muslimischen und christlichen Nationen liegt, und nicht in ihrer parallelen Koexistenz"[2].

Die türkischen Politiker diskutierten über die Notwendigkeit der "Zusammenführung" nicht nur mit den Vertretern der ausländischen Nationen. Am Ende seines Lebens hatte Fuat in seinem geheimen politischen Testament noch einmal den Sultan davor gewarnt: "Ohne die Zusammenführung scheint mir die weitere Existenz des Osmanischen Reiches nicht realistisch "[3].

---

[1] **Ali Pascha**, Memorandum. - [A. D. Mordtmann], Stambul und das moderne Türkenthum (Politische, soziale und biographische Bilder von einem Osmanen), B. 1, Leipzig, 1877, S. 84.

[2] **Ignatjew N.P. an Gortschakow A.M.**, Kostantinopel, 25. April/ 7 Mai, 1876. - Archiv der Außenpolitik des Russischen Reiches (AWPRI), Bestand Büro, 1867, Akte 31, Blatt 489.

[3] **Fuad Pasha**, Political testament. - J. L. Farley, Turks and Christians, London, 1876, p. 242.

Die Paschas bestanden darauf, dass die Zusammenführung alle Bereiche der gesellschaftlichen Beziehungen enthalten sollte, "außer rein religiösen Angelegenheiten"[4].Sie betonten auch, dass bei allen Änderungen, die vier Säulen, auf denen das Osmanische Reich basiert, unverändert bleiben sollten. Das waren: "Die muslimischen Millets, der türkische Staat, die osmanischen Sultane und Istanbul, als Hauptstadt"[5].

Ali Pascha hatte sehr oft die besondere Rolle des türkischen Volkes in der neu integrierten Gesellschaft betont. In einem Brief (1858) an den französischen Botschafter Thouvenel, in der Türkei, schrieb er: "Wenn es bei uns immer noch ein Volk gibt, das in der Lage ist, andere zu führen und zu dienen ... als Bindeglied für die Gesellschaft, dann ist es das osmanische Volk ist " (gemeint sind die Türken)[6]. In der geheimen Depesche an Cemil Pascha, der zu dieser Zeit in Paris war (1862), wiederholte er seinen Gedanken: "Ich denke ... nur die Türken können als Bindeglied dienen, oder ... wollen ihre Vormachtstellung gegenüber den anderen halten ... Das ist der einzige Weg, um das Reich vom endlosen Chaos und Bürgerkrieg zu retten "[7].Somit, sah Ali Pascha die Sicherung der dominierenden Position der Türken als der einzige Weg, um die Situation zu stabilisieren. Bei Fuat war die Absicht, an der türkischen Komponente in der Politik der "Zusammenführung" zu verlassen weniger offensichtlich. Obwohl dachte er auch, dass die Türken besser geeignet sind, um das Land zu re-

---

[4] **Ebd.,** p. 243.

[5] **Cevdet Paşa,** Tezakir, 1-12, Ankara, 1953, s. 85.

[6] **Thouvenel L.,** Trois années de la Question d'Orient, 1856-1859, Paris, 1897, p. 317.

[7] **Lewis B.,** Ali Pasha on nationalism. - Middle Eastern Studies, 1974, № 10, p. 71.

gieren[8]. Aus den oben genannten Tatsachen ist das letztendliche Ziel von Ali und Fuat, die Bewahrung und Festigung der dominierenden Position der Türken im zukünftigen, reformierten Reich, ersichtlich.

Die Paschas schlugen auch eine Reihe von Maßnahmen vor, die die "Verschmelzung" erleichtern würden. Sie nannten die Erziehung aller Völker des Reiches im Geiste der Einheit zur Treue zu den Behörden, als das wichtigste Mittel. "Der Staat kann die ideologischen Kontroversen unter seinen Untertanen vermeiden, wenn sie im gleichen Geist erzogen werden ", schrieb Ali Pascha[9]. Der erste Meilenstein auf diesem Weg war die Gründung von gemischten Bildungseinrichtungen der ersten beiden Ebenen, da Fuat markierte, dass "die Zusammenführung von der Schulbank beginnt"[10]. "Die Aufklärung im gemeinsamen Geiste" würde in Lyzeen wie die Galatasaray Lyzeum fortsetzen. In seinem politischen Testament, geschrieben in Türkisch, berufe sich Ali Pascha auf den Sultan, auch ein paar ähnliche Institutionen wie das, so viel wie möglich zu öffnen, denn das würde den Prozess der "Verschmelzung" beschleunigen[11]. Die einheitliche Bildung würde, seiner Meinung nach, "die Interessen der verschiedenen Völker des Reiches vereinen", würde sie loyal gegenüber der osmanischen Re-

---

[8] **Challemel-Lacourt P.,** Hommes d'état de la Turquie. Aali Pacha et Fuad Pacha. - Revue des deux mondes. 1868, XXXVIII année, 2 série, № 78, p. 922.

[9] Belgelerle Tanzimat: Osmanlı Sadrıazamlarından Ali ve Fuad Paşaların siyasi vaziyyetnameleri. Hazırlıyan: E. D. Akarlı, İstanbul, 1973, s. 47.

[10] **Ignatjew N.P. an Gortschakow A.M.,** Kostantinopel, 7/19 März, 1876. - AWPRI, Bestand Büro, 1867, Akte 31, Blatt 63.

[11] Ali Paşa, Vaziyyetname. - Belgelerle Tanzimat: Osmanlı Sadrıazamlarından Ali ve Fuad Paşaların siyasi vaziyyetnameleri. Hazırlıyan: E. D. Akarlı, İstanbul, 1973, s. 47.

gierung machen, und damit den Staat von Zerstückelung ersparen[12].

Eine weitere effektive Maßnahme für "Verschmelzung", war die Wehrpflicht der Christen. Einige westliche Diplomaten fanden, dass es am effektivsten für die "Verschmelzung" wäre. Der österreichische Botschafter in Konstantinopel Herr Prokesch schrieb: "Nichts würde einen solchen Einfluss auf die Realisierung der Verschmelzung der Rassen als Inkorporation des Militärsystems in das Leben, basierend auf die Genehmigung der Wehrpflicht aller Untertanen, haben"[13]. Unter den türkischen Politiker, die diese Ansicht unterstützten, war Fuat. Dieses Problem "erregt die Aufmerksamkeit in der Türkei", und wurde auf der Hohen Rat besprochen, dies teilte das Russische militärische Vertreter in Konstantinopel mit[14].Die meisten türkischen Minister strebten danach, dass die Türken die Reihen der Offiziere erobern[15]. Sofort wurde eine Sonderkommission für die umfassendere Analyse der Problematik entwickelt, jedoch ist keine endgültige Entscheidung zustande gekommen[16]. Diese Idee wurde weder von den Christen noch von den Muslimen gebilligt[17]. Am Ende seines Lebens wurde auch Fuat da-

---

[12] **Aali Pacha,** Testament politique. La Revue de Paris, 1910, T. 3, № 9, p. 106.

[13] Observations du Baron Prokesch sur le Mémoire du cabinet français. – Schopoff A. Les reformes et la protection des chretiens en Turque, 1673 - 1904, Paris, 1904, p. 89.

[14] Ein militärischer Agent in Konstantinopel über die angebliche Bildung von Militäreinheiten aus Christen, April 10/22 1861. - Militärische und historische Archive Russlands [RGWIA] 3.1. Sammlung von militärischen und wissenschaftlichen Archiven, 71 Türkei, Bestand 450, 1658-1917, Akte 66, Blatt 35.

[15] Ebd., Blatt 36.

[16] **Ignatjew N.P. an Gortschakow A.M.,** Konstantinopel, 21 März/2 April,1867. - AWPRI, Bestand Büro, 1867, Akte 31, Rückseite des Blattes 159.

[17] Ebd., Blatt 159.

von enttäuscht und in seinem politischen Testament überging er dies mit Schweigen.

Auf dem Weg zu der "zusammengeführten" Gesellschaft waren die nicht-muslimischen Millets ein ernsthaftes Hindernis. Während der ganzen ersten Hälfte des XIX Jahrhunderts fanden Prozesse in den großen griechischen und armenischen Millets statt, die die wachsenden nationalen Gefühle der Balkanländer und Armenier bewiesen. Gewöhnliche Mitglieder des Millets forderten Freiheit und Gleichheit mit den Muslimen. Die Bewegung der christlichen Nationen für die Autonomie verstärkte sich.

***Բանալի բառեր՝*** թաթարացում, թաթարներ, ադրբեջանականացում, Անդրկովկաս, Հայկական մարզ, Հայաստան, Արցախ, Վրաստան, Պարսկաստան, Ռուսաստան:

Ադրբեջանական ժողովրդի ձևավորումը առավել հետաքրքիր աշխարհաքաղաքական գործընթացներից մեկն է, որը սկսվել է Այսրկովկասը Ռուսական կայսրության մեջ ընդգրկելուց հետո և շարունակվել նաև խորհրդային ժամանակաշրջանում: Գործընթացը սկիզբ է առել «վերևից»՝ Ռուսաստանի իշխանությունների կողմից: Այն նաև մեծ տերությունների միջև աշխարհաքաղաքական պայքարի արդյունք էր ռազմավարական նշանակություն ունեցող այսրկովկասյան տարածաշրջանի համար:

Նոր ժողովրդի ձևավորումը ընթացել է մի քանի փուլով՝ թաթարացումից մինչև թյուրքացում և ադրբեջանականացում: Ադրբեջանցիների ազգային ինքնության «բարեփոխումները» աշխարհաքաղաքական վերափոխումների և Ռուսաստանի, այնուհետև խորհրդային իշխանությունների արձագանքն էր այդ փոփոխություններին:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ

# ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ (1919-1922 ԹԹ.)

***Բանալի բառեր՝*** Մուստաֆա Քեմալ, քեմալականություն, Անտանտ, Թուրքիա, քուրդ, Քրդստան, Արևմտյան Հայաստան, Էրզրում, Անկարա:

1919 թ. իրադարձությունները Օսմանյան կայսրությունում և նրա շուրջը զարգանում էին սրընթաց արագությամբ: 1919 թ. մարտի 16-ին Անտանտի երկրները ռազմակալեցին Ստամբուլը, մարտի 28-ին իտալացիները դեսանտ իջեցրին Անթալիայում, իսկ մայիսի 19-ին հույները ռազմական գործողություններ սկսեցին Թուրքիայի դեմ: Սկսվեց հույն-թուրքական պատերազմ (1919-1922 թթ.):

Անմիջապես թուրք միլլի-ազգայնականների ապագա պարագլուխ գեներալ Մուստաֆա Քեմալը իր համախոհների հետ որոշում է մեկնել արևելյան նահանգներ, որտեղ գոյություն ունեին առավել բարենպաստ ռազմաստրատեգիական և քաղաքական պայմաններ՝ կազմակերպելու դիմադրության շարժում Թուրքիայի անդամահատման ծրագրերի դեմ: Օգտվելով նրանից, որ Մուդրոսի զինադադարի պայմանները չէին նախատեսում համապատասխան մեխանիզմներ երկրի արևելյան շրջաններում գտնվող օսմանյան զորքերի զորացրման ու զինաթափման վերաբերյալ, և բացի այդ, նշված շրջաններում առկա էին զենքի ու զինամթերքի մեծ պաշարներ, Մուստաֆա Քեմալը արագորեն արևելյան վիլայեթներում (Արևմտյան Հայաստանում) կազմակերպեց իշխանության այլընտրանքային կենտրոն: Սուլթանական բանակի մնացուկներից, աշխարհազորային ջոկատներից և գյուղացիական զանգվածներից և այլն նա

ստեղծեց նոր բանակի կորիզ, որի մեջ մեծ թիվ էին կազմում նաև հետապնդումներից ազատ մնացած երիտթուրքական սպաները և շարքայինները: Մուստաֆա Քեմալը նաև կյանքի կոչեց «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանություն» անունով մի կազմակերպություն, որի շուրջը սկսեց համախմբել համակիրների՝ «Հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսի ներքո: Ազգայնական քեմալականների նախապես փոքրիկ խմբակը, հետզհետե ուժ հավաքելով, դառնում էր հզոր շարժում[1]:

Քեմալական շարժման հենց առաջին օրերից Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները հատուկ ուշադրություն էին դարձնում քրդական խնդրին նպատակ ունենալով քրդերի ռազմական ուժն օգտագործել իրենց մղած «անկախության պայքարում»: Բացի այդ, քրդերը հետաքրքրում էին քեմալականներին նաև այլ տեսանկյուններից: Այսպես, օրինակ, անգլիացի Առնոլդ Թոյնբին նշում էր, որ քեմալականները երազում էին ողջ Քրդստանը միավորել թուրքական իշխանության ներքո, քանի որ նրա տարաբաժանվածության մեջ նրանք Թուրքիայի համար տեսնում էին մշտական սպառնալիքի աղբյուր[2]:

Քեմալականները քաջ գիտակցում էին, որ վերջին հաշվով արևելյան վիլայեթներում մեծ զանգված կազմող քրդերից էր նշանակալից չափով կախված այն հարցը, թե արդյոք իրենց հաջողվելո՞ւ է այդ երկրամասը պահել Թուրքիայի կազմում, թե՞ ոչ: Ուստի նրանք հետևողականորեն ներշնչում էին քրդերին, որ որպես «նույն հողի ու ջրի» և «կրոնի եղբայրներ» միանան քեմալական շարժմանը և զենք

---

[1] Տե՛ս **Armstrong H.C.**, Grey Wolf. Mustafa Kemal: An intimate Study of a dictator, London, 1938.

[2] **Toynbee Arnold J.**, Angora and the British Empire in the East. The Contemporary Review, 1923, № 690, June, p. 686.

վերցնեն՝ թույլ չտալու երկրի մասնատումը Եռյակ համաձայնության պետությունների կողմից և արևելյան վիլայեթներում (Արևմտյան Հայաստանում) հայկական պետության ստեղծումը: Անձամբ Մուստաֆա Քեմալը կոչ էր անում քրդերին անձնվեր ու եռանդուն մասնակցություն բերել «օսմանյան հայրենիքի պաշտպանության սուրբ գործին»: Քեմալականների քարոզչությունը քրդերի շրջանում պանիսլամիզմի գաղափարների տարածման, հակաքրիստոնեական կրքերի ու կրոնական մոլեռանդության բորբոքման հետ միաժամանակ առիթը բաց չէր թողնում հիշեցնելու քրդերին, որ նրանք մասնակից են եղել հայկական ջարդերին և երկրի արևելքում մեծ պետությունների հովանու ներքո հայկական անկախ պետություն ստեղծվելու դեպքում պետք է լավ մտածեն, թե ինչ է սպասում իրենց: Դրա հետ միաժամանակ Էրզրումում քեմալականները տարածեցին թռուցիկներ, որտեղ ասվում էր. «Այս վիլայեթները (խոսքը հայկական վեց վիլայեթների մասին էր - Վ. Բ.) պատկանում են քրդերին և թուրքերին, որոնք «կրոնի և պատմական արմատներով եղբայրներ» են[3]: Պատահական չէ, որ քեմալական շարժման կարկառուն դեմքերից մեկը, հետագայում «Թուրքիայի երկրորդ մարդ» հորջորջված Իսմեթ Ինոնյուն քեմալականների ստեղծած Թուրքիայի Հանրապետությունը համարում էր «Հայրենիք քրդերի ու թուրքերի համար»[4]:

Պատահական չէ նաև, որ քեմալական շարժման առաջին օրերից սկսած՝ Մուստաֆա Քեմալը երբեմն ակնարկներով, իսկ հաճախ նաև ուղղակի ու անթաքույց քրդերին խոստանում էր ինքնավարություն «նոր պետության կազ-

---

[3] **Мгои Ш.Х.** Курдский альманах. Москва, 2009, стр. 19.

[4] **Ismet Cherif Vanly**, Le Kurdistan Irakien: entité nationale Étude de la Revolution de 1961, Neuchatel, 1970, p. 54.

մում»[5]: Այդ խոստումները և առհասարակ քեմալական քարոզչությունը պարարտ հող էին գտնում քրդերի շրջանում:

Քեմալական շարժման նկատմամբ իրենց դիրքորոշումը հստակեցնելու նպատակով քուրդ ազգայնական գործիչները, ազդեցիկ ցեղապետերը և առհասարակ քրդական քաղաքական կյանքին տոն տվող անձինք 1919 թ. հունիսին Էրզրումում գումարեցին ժողով, կամ ինչպես իրենք էին անվանում՝ համագումար, որի եզրափակիչ նիստում ընդունված բանաձևում անթաքույց համակրանք էր դրսևորվում Թուրքիայի «ազգային-ազատագրական շարժման» նկատմամբ: Բանաձևում հայտարարվում էր, որ քրդական ազգային շարժումն անվերապահորեն պաշտպանում է քեմալականներին, պայմանով, որ նրանք Քրդստանին տրամադրեն ինքնավարություն «նոր Թուրքիայի կազմում»[6]: Ի նշան քեմալականների հետ կատարյալ համերաշխության՝ ժողովի մասնակիցները միահամուռ որոշեցին իրենց եռանդուն մասնակցությունը բերել առաջիկայում Էրզրումում գումարվելիք «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության» համաժողովի աշխատանքներին: Սակայն Ստամբուլում գործող քուրդ ազգայնականների փոքրաթիվ, սակայն ազդեցիկ խմբավորումը, որը քրդերի անկախության հույսերը կապում էր Մեծ Բրիտանիայի հետ, մերժեց քեմալականների կողմից քրդերին առաջարկվող պայմանները, հետևաբար՝ նաև համագործակցության հրավերը:

---

[5] **Olson R.**, Kurds and Turks: Two Documents Concerning Kurdish Autonomy in 1922 and 1923, Journal of South Asian and Middle Eastern Studies, № 15 (Winter, 1991), pp. 20-31.

[6] Memorandum sur le situation des kurdes et leurs revendications, presenté à: Mr. Trygve Lee at aux etuts members de Lo. N. U. In.: Bulletin du Centre d'etutdes Kurdes, Paris, 1948, p. 2.

Ինչ վերաբերում է քրդական զանգվածներին, ապա նրանք անհաղորդ էին այդ բոլորին: Ներկայացնելով Թուրքիայի քրդաբնակ շրջանների բնակչության և ցեղերի տրամադրությունները՝ անգլիացի զինվորական Վ. Էլֆինստոնը գրում էր, որ նրանց հասարակական կարծիքը «անտարբերություն է դրսևորում քրդական անկախության կամ ինքնավարության վերաբերյալ խոսակցություններին, համաձայն լինելով մնալու թուրքական կառավարման ներքո»[7]:

Ընդհանուր առմամբ քրդերի դիրքորոշումը լիովին բավարարում էր Մուստաֆա Քեմալին: Շարժման սկզբնական փուլում, երբ դեռ ապագան մշուշապատ ու անորոշ էր, թուրք ազգայնականների հեռատես ու շրջահայաց առաջնորդին բնավ ձեռնտու չէր քրդերին վանել իրենցից: Ընդհակառակը, գործնական շահը պահանջում էր գեթ առժամանակ սիրաշահել նրանց, ներքաշել իրենց քաղաքականության ոլորտը և հնարավորինս օգտագործել քրդերի ռազմական ներուժը՝ պատերազմների ճակատներում հաղթանակի հասնելու համար:

Այդ առթիվ բրիտանացի ծովակալ Դե-Ռոբեքը Ստամբուլից Ֆորին օֆիսի ղեկավար լորդ Քերզընին հղած՝ 1919 թ. դեկտեմբերի 26-ի թվակիր հեռագրում հաղորդում էր, որ Քեմալ փաշան ձեռնամուխ է եղել «իսլամական ուժերի» («ղուվվայի իսլամիյե») ստեղծմանը, որոնց մեջ ընդգրկվելու են նաև քրդերը»[8]:

Այսպիսով, միառժամանակ չգնալով քուրդ ժողովրդի գոյության մերժման ու նրա քաղաքական իղձերը չճանաչելու ավանդական ճանապարհով, քեմալականներն ապահո-

---

[7] **Elphinston W.G.**, Kurds and the Kurdish Question, Journal of the Central Asian Society, vol. XXIV, January, 1948, pt. I, p. 43.

[8] **Documents on British Foreign Policy** (այսուհետ՝ DBFP), 1919-1939, First Series, vol. II, London, 1948, pp. 563-564.

վեցին քրդերի ռազմական ուժի օգտագործումը արևմուտքում հույների դեմ, իսկ արևելքում՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Առաջնորդվելով Մուստաֆա Քեմալի իջեցրած դիրեկտիվով՝ քեմալական շարժման գաղափարախոսները սկսեցին հետևողականորեն զարգացնել այն տեսակետը, որ «քրդերը Թուրքիայում թուրքերի պես իրավահավասար ժողովուրդ են», որ թուրքերի ու քրդերի միջև ազգային-էթնիկական ու մշակութային առումով էական տարբերություններ գոյություն չունեն, որ երկու ժողովուրդներն էլ դավանում են նույն կրոնը՝ իսլամը, ունեն համանման քաղաքական շահեր, «նույն հողի ու ջրի զավակներ են» և այլն[9]:

Իրականում ի սկզբանե Մուստաֆա Քեմալը կտրականապես դեմ էր անկախություն կամ ինքնավարություն շնորհելու Օսմանյան կայսրության կազմում գտնվող որևէ ժողովրդի: Շատ ժամանակ չպահանջվեց նրա այդ դիրքորոշման դրսևորման համար: 1919 թ. ամռանը նրա հրամանով քեմալական զորամասերը Դիարբեքիրում ջախջախեցին «Քրդստանի վերածնության ընկերության» տեղական բաժանմունքը: Փորձելով հիմնավորել իր այդ արարքը՝ ելույթներից մեկի ժամանակ Մուստաֆա Քեմալը հայտարարեց. «Քրդստանի վերածնության կազմակերպությունը», որը բաժանմունքներ ուներ Դիարբեքիրում, Բիթլիսում ու Խարբերդում, և որի ղեկավար կենտրոնը գտնվում էր Ստամբուլում, ձգտում էր ստեղծել քրդական պետություն օտարերկրյա հովանու ներքո»[10]: Միաժամանակ Մուստաֆա Քեմալը 1919 թ. հունիսի 19-ին Ամասիայից գաղտնագրված հեռագիր ուղարկեց «Քրդստանի վերածնության ընկերության»

---

[9] **DBFP**, vol. XIII, № 288, p. 301.

[10] **Мустафа Кемаль.** Путь новой Турции, 1919-1927. Том I, Москва, 1929, стр. 9.

ջախջախման կազմակերպիչ, Դիարբեքիրի վալիի տեղակալին հետևյալ բովանդակությամբ. «Ցանկացած ընկերություն կամ կազմակերպություն, որը փորձում է երկրում երկպառակություններ սերմանել, պետք է անհապաղ ցրվի... Նման միջոցառումների իրականացումը հայրենասիրական պարտք է: Ուստի ես կատարելապես հավանություն եմ տալիս ձեր իրականացրած քայլերին քրդական ակումբի նկատմամբ»[11]:

1919 թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը Էրզրումում տեղի ունեցավ «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության» համաժողովը, որը հայտնի է նաև քեմալականների Էրզրումի կոնգրես անունով: Այդ համաժողովի ընդունած բանաձևի առաջին կետում ասվում էր. «Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները, Տրապիզոնի վիլայեթը և Ջանիկի սանջաքը, Էրզրումի, Սըվասի (Սեբաստիայի - Վ. Բ.), Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդի - Վ. Բ.), Վանի, Բիթլիսի վիլայեթները, և այս վիլայեթների մեջ մտնող բոլոր անկախ սանջաքները չեն կարող ոչ մի ձևով, ոչ մի պատրվակով և ոչ մի պատճառաբանությամբ անջատվել մեկը մյուսից: Դրանք բոլորը միասին կազմում են մի ամբողջություն, որի բոլոր մասերը կատարյալ համերաշխության մեջ են իրար նկատմամբ՝ ինչպես ուրախության, այնպես էլ դժբախտության պահին, և իրենց ապագա ճակատագրի տեսակետից բոլորը ձգտում են միևնույն նպատակին»[12]:

Համաժողովի ընդունած բանաձևի երկրորդ հոդվածում ասվում էր. «Մեր տարածքի ամեն մի գրավում և ամեն կարգի միջամտություն մեր գործերին դիտելով որպես ձգտում՝ ուղղված հունական կամ հայկական համայնքի

---

[11] **Atatürk K.**, Nutuk, Cilt III, Istanbul, 1962, s. 901, 903-904.

[12] **Gologlu M.**, Erzurum Kongresi. Milli Mücadele tarihi, 1, Ankara, 1968.

ստեղծմանը, մենք առաջ ենք քաշում ինքնապաշտպանության ու փոխադարձ աջակցության սկզբունքը»: Այնուհետև նշվում էր. «Մենք երբեք թույլ չենք տա, որ հույներն ու հայերը մեր նկատմամբ գրավեն այնպիսի մի դիրք, որը կարող է սպառնալ մեր գոյությանը, մուսուլմանների իրավունքներին և օսմանյան ինքնապաշտպանությանը՝ ուղղակի կամ անուղղակի, քողարկված թե բացահայտ, կամ որևէ այլ հնարավոր ձևով: Ուստի մեր ազգը իրեն իրավասու և կարող է համարում պաշտպանվելու իր տրամադրության տակ գտնվելիք հնարավոր բոլոր միջոցներով՝ լինեն դրանք նյութական թե բարոյական, նպատակ ունենալով ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանխելու համար այն փորձերը, որ հույներն ու հայերը կարող են ձեռնարկել մեր հայրենիքին վնասելու նպատակով: Նման պարագայում մենք Անտանտի մեծ տերությունների ամեն մի միջամտություն կդիտենք որպես օժանդակություն այն պլանների ու ծրագրերի իրականացմանը, որոնք մենք մերժում ենք»:

Թուրքիայի բոլոր ոչ թուրք մուսուլման ժողովուրդներին՝ քրդերին, չերքեզներին, լազերին և այլն իրենց շուրջը համախմբելու ու նրանց օտարերկրյա պետությունների, ինչպես նաև երկրի քրիստոնյա բնակչության դեմ ուղղելու նպատակով եզրափակիչ փաստաթղթում ասվում էր, որ վերոհիշյալ տարածքներում ապրող բոլոր մուսուլմանները, ունենալով հանդերձ էթնիկական ու սոցիալական առանձնահատկություններ, իրենց համարում են «միևնույն ծնողներից ծնված եղբայրներ»[13]:

Թեև Էրզրումի համաժողովի փաստաթղթերում չէր շոշափվում քրդերի ինքնավարության հարցը, սակայն համաժողովին մասնակցած քուրդ պատվիրակները քվեարկե-

[13] **Мустафа Кемаль**. Նշվ. աշխ., էջ 381: Տե՛ս նաև **Pernot Maurice**, La Question Turquie, Paris, 1923, pp. 282-295.

ցին նրա ընդունած որոշումների օգտին: Ավելին, մութքի ցեղի առաջնորդ հաջի Մուսա բեյը ընտրվեց «ներկայացուցչական կոմիտեի անդամ»[14]:

Այսպիսով, Էրզրումի համաժողովում քրդական հարցի հետ կապված քեմալականները ձեռք բերեցին երկու խոշոր հաջողություն: Նախ՝ նրա որոշումներում ու եզրափակիչ մանիֆեստում նրանց հաջողվեց խուսափել քրդերի իրավունքների վերաբերյալ որևէ կոնկրետ որոշում արձանագրելուց, և ապա նրանք կարողացան այնպիսի որոշումներ ընդունել, որոնք պարտավորեցնում էին երկրի բոլոր մուսուլմաններին, այդ թվում նաև քրդերին, պայքարելու Արևմտյան Հայաստանը և Թուրքական Քրդստանը թուրքերի տիրապետությունից դուրս բերելու դեմ[15]:

1919 թ. օգոստոսին Մուստաֆա Քեմալը մի շարք ազդեցիկ քրդական ցեղերի առաջնորդների ուղարկեց Էրզրումի համաժողովի որոշումները, ինչպես նաև անձնական ուղերձներ, որոնցում կոչ էր անում պայքարել հայերի, ինչպես նաև «այլ թշնամիների սադրանքների դեմ»[16]: Այդ նույն ոգով հեռագրական ուղերձներ ուղարկվեցին քրդական այնպիսի ազդեցիկ առաջնորդներին, ինչպիսիք էին Աբդուլբակի էֆենդի Քյուֆրևի զադեն Բիթլիսից, Օմեր-աղան Դերշևից, Ռասուլ-աղան Մուշասից, օսմանյան խորհրդարանի նախկին անդամ Սաադուլլա-էֆենդին, շեյխ Մահմուդ-էֆենդին, շեյխ Զիաէդդին էֆենդին Նուրշինից, Ջեմիլ Չատո բեյը Գարզանից և այլն[17]: Այդ կոչերում ու ուղերձներում քեմալականներն իրենց ներկայացնում էին որպես խալիֆայու-

---

[14] **Мустафа Кемаль.** Նշվ. աշխ., էջ 65-68:

[15] **Гасратян М.А.** Турецкое законодательство и курды между двумя мировыми войнами. Курдский альманах, 1, Москва, 2001, стр. 58.

[16] **Atatürk K.**, Nutuk, Cilt II, Istanbul, 1962, s. 940.

[17] Курдское движение в новое и новейшее время. Москва, 1987, стр. 89.

թյան ու սուլթանության նվիրյալ պաշտպաններ, որպեսզի քրդերին գրավեն իրենց կողմը:

Քրդական առաջնորդների մեծ մասը արձագանքեց Մուստաֆա Քեմալի կոչերին: Ավելին, երկրի արևելքում հայկական պետության ստեղծման վտանգի վերաբերյալ քեմալականների կատարած ներշնչումները «զարկ տվեցին քրդական ազգայնականությանը, նպաստելով քրդերի մերձեցմանը Մուստաֆա Քեմալի շարժման հետ»[18]: Սակայն քիչ չէին նաև քրդական այն հավաքականությունները, որոնք հավանություն չտվեցին Էրզրումի համաժողովի որոշումներին: Դրանք այն ցեղապետ-աշիրեթապետերն էին և նրանց ենթակա ցեղերը, որոնք կողմնորոշվում էին դեպի սուլթանը՝ նրան ճանաչելով որպես մուսուլմանների հոգևոր առաջնորդ՝ խալիֆա: Հենց դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ 1919 թ. սեպտեմբերի 4-ից 12-ը Սըվասում (Սեբաստիա) քեմալականների գումարած «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների» համաժողովին մասնակցեցին ավելի փոքր թվով քրդական առաջնորդներ[19]: Իսկ 1920 թ. հունվարի 28-ին՝ «Ազգային ուխտի» հռչակումից հետո, որը բացառում էր արևելյան վիլայեթների փաստական կամ իրավաբանական բաժանումն ու մասնատումը[20], քրդերի ավելի խոշոր զանգվածներ հասկացան, որ քեմալականների կողմից մերժվում են երկրի ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև քրդերի ինքնավարության կամ անկախության իրա-

---

[18] **Bozarslan H.**, Kurdish Nationalism in Turkey: From Tacit Contract to Rebellion (1919-1925), in Abbas Vali (ed.), Essays on the Origins of Kurdish Nationalism, Costa Mesa, CA: Mazda, 2003, p. 165.

[19] **Aşkun V.C.**, Sivas Kongresi, Instanbul, 1963, s. 149. Տե՛ս նաև **Gologlu M.,** Sivas Kongresi, Milli Mücadele tarihi, 2, Ankara, 1969, s. 1969.

[20] **Karal E.Z.**, Türkiye Cumhuriyeti Tarihi (1918-1960), Istanbul, 1963, s. 52.

վունքները[21]: Առավել ևս, որ Մուստաֆա Քեմալն իր ելույթներում Թուրքիայում բնակվող ոչ թուրք ժողովուրդների անկախության ձգտումներն անվանում էր «արշավանք մեր մեծ պետության դեմ»: Բնականաբար քրդերի վերելք ապրող դժգոհության տրտունջները լուրջ անհանգստություն էին պատճառելու Մուստաֆա Քեմալին: Վերջինս առանց հապաղելու սկսեց հրահանգներ հղել իր տեղական կառույցներին՝ բոլոր միջոցներն օգտագործել իրենցից քրդերին չվանելու և նրանց հետ համաձայնության գալու համար: Այդ հրահանգներում շեշտը դրվում էր գլխավորապես երկու սկզբունքների վրա: Առաջին՝ ուժեղացնել քրդերի հետ «կրոնի և ազգի միասնության» գաղափարի քարոզչությունը, և երկրորդ՝ լայնորեն շրջանառության մեջ դնել «նոր Թուրքիայում քրդերի իրավահավասար վիճակի» մասին դրույթը[22]:

Դիարբեքիրի վալիին հասցեագրած հրահանգ-նամակում Քեմալը խորհուրդ էր տալիս չխստացնել հետապնդումները քեմալականների նկատմամբ ընդդիմադիր կեցվածք որդեգրած «Քրդստանի վերածնության կազմակերպության» անդամների նկատմամբ, այլ ընդհակառակը, աշխատել ամեն կերպ գրավել նրանց իրենց կողմը և համախմբվելով նրանց հետ՝ հանդես գալ Անտանտի պետությունների դեմ՝ արևելյան վիլայեթներում կյանքի կոչված «Թուրք ժողովրդի իրավունքների պաշտպանության» և «Ընդդեմ անեքսիայի» կազմակերպության շրջանակներում[23]:

---

[21] **Beşikçi I.**, Kürdistan üzerinde emperyalist bölüşüm mücadelesi: 1915-1925, cilt 1, Ankara, 1992, s. 396-397.

[22] **Лазарев М.С., Мхои Ш.Х., Васильев Е.И., Гасратян М.К., Жигалина О.И.** История Курдистана. Москва, 1999, стр. 246.

[23] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 203, 204:

Միաժամանակ քեմալականները հաստատուն առաջ էին մղում այն գաղափարը, որ թուրքական պետության ինքնիշխանությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ տարածվելու դեպքում, որտեղ «բնակչությունը մեծ մասամբ թուրքեր են և քրդեր», վերջիններս բնավ չեն տուժելու, քանի որ թուրքերի և քրդերի միջև էական տարբերություններ գոյություն չունեն[24]:

Միանգամայն ակնհայտ էր, որ քանի դեռ չէր ամրապնդվել քեմալականների իշխանությունը, նրանց բնավ ձեռնտու չէր ընթանալ քուրդ ժողովրդի իրավունքների մերժման ճանապարհով:

Լայնորեն կիրառության մեջ դնելով ամբոխավարական-պոպուլիստական սկզբունքները՝ քեմալականները համոզում էին քրդերին, որ իրենք խալիֆայության ու սուլթանության ջերմ կողմնակիցներ ու ջատագովներ են, թեև իրականում իրենց քաղաքականության ծրագրային հիմքում դրված էր լաիցիզմի (պետության աշխարհիկացման) սկզբունքը, որը ենթադրում էր խալիֆայության և սուլթանության վերացում: Սակայն քրդերին իրենց կողմը գրավելու թիվ առաջին լծակը, անշուշտ, Հայկական հարցն էր: Քեմալականներն աշխատում էին քրդերին համախմբել հակահայկական պլատֆորմի շուրջ՝ նրանց առաջարկելով թուրքերի հետ մտնել դաշինքի մեջ ընդդեմ Հայկական հարցի: Քրդերին ներշնչվում էր այն գաղափարը, որ թուրք-քրդական դաշինքի հիմք պետք է հանդիսանա հայերի անկախության ձգտումների և արևելյան նահանգներում անկախ պետականություն ստեղծելու նրանց ջանքերի չեզոքացումը: Այդ դաշինքի գլխավոր նպատակներն էին հռչակվում երկրի տարածքային ամբողջականության պահպանումը և «թուրքական ու քրդական մեծամասնության» շահերի ապահովու-

---

[24] **DBFB**, vol. XVII, No 288, p. 301.

մը[25]: Քրդական ազդեցիկ առաջնորդներից մեկի՝ Շիրնաքցի Աբդուրրահման աղայի անունով ուղարկված ուղերձում Մուստաֆա Քեմալը գրում էր. «Ամբողջ աշխարհին է հայտնի Ձեր նվիրվածությունը խալիֆայությանը ու սուլթանությանը: Ոչ պակաս ակներև է նաև, որ դուք երբեք չեք համաձայնվի այն բանի հետ, որ Ձեր հայրենիքի սուրբ հողը ոտնահարվի հայերի կողմից... Խնդրում եմ անհապաղ ձեռնամուխ լինել ազգային ուժերի կազմակերպմանը և եռանդուն կերպով վերջ տալ մեր հակառակորդների դավաճանական գործողություններին: Հավատալով Ձեր հայրենասիրությանը՝ մնում եմ սպասող Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքներին»[26]:

Իսկ մութքի ցեղի առաջնորդ Հաջի Մուսա բեյին ուղղված 1919 թ. օգոստոսի 10-ի թվակիր ուղերձում Մուստաֆա Քեմալը գրում էր. «Գովեստով ու երախտագիտությամբ մենք մշտապես հիշում ենք այն արժեքավոր օգնության մասին, որ դուք բազմիցս ցուցաբերել եք բանակին մեր կողմից Բիթլիսը վերստին հետ վերցնելու, ինչպես նաև Ձեր եռանդը Մութքի (Մոթկանի - Վ. Բ.) շրջանը թշնամուց պաշտպանելիս... Մեր թշնամիները այժմ ձգտում են մասնատել մեր երկիրը և ստրկացնել մեր ազգին, որը դարեր շարունակ այնքան արյուն է թափել հանուն իսլամի, զրկել նրան ինքնիշխան իրավունքներից ու անկախությունից: Նրանք ձգտում են այն բանին, որպեսզի մեր նախնիներից ժառանգած մեր մայր հայրենիքի տարածքում ստեղծեն Հայաստան»[27]:

Նման քայլերով քեմալականներին հաջողվեց աստիճանաբար «մարել» քրդական հարցը և գեթ առժամանակ

---

[25] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 99, 100:

[26] **Atatürk K.**, Nutuk, Cilt III, Istanbul, 1962, s. 940.

[27] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 231-238:

քրդերին լծել իրենց քաղաքականության սայլին: 1919 թ. հունիսի 19-ին Մուստաֆա Քեմալը խորին գոհունակությամբ իր համախոհներին գրում էր. «Անգլիական քարոզչությամբ ծնունդ առած շարժումները, օրինակ, այժմ ծավալվող շարժումը հանուն քրդական անկախության, երբ բարձրացել է կայսրության մասնատման հարցը, փառք աստծո, շրջվեցին մեր օգտին: Շնորհիվ այդ շարժման մասնակիցների հետ գրագրության, վերջիններս ընդգրկվեցին ընդհանուր գործի մեջ և մեզ հետ համախմբվեցին խալիֆայության և թագի շուրջը: Մեր միջև հաստատվեց կատարյալ համաձայնություն»[28]:

Քրդական առաջնորդներից շատերն արձագանքեցին քեմալականների առաջնորդի կոչերին և ուղերձներին: Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից Անկարա էին ուղարկվում հեռագրեր ու նամակներ, որոնցում հավաստիացվում էր, որ քրդերը հավատարիմ են խալիֆայության ու սուլթանության, ինչպես նաև թուրք և քուրդ ժողովուրդների բարեկամությանը[29]:

Սակայն ոչ բոլոր քրդական առաջնորդներն ու ազգայնական գործիչներն էին պատրաստակամություն հայտնում համագործակցելու քեմալականների հետ: Նրանցից շատերը կասկածանքով ու անվստահությամբ էին վերաբերվում Մուստաֆա Քեմալի քաղաքականությանն ու նրա տված շռայլ խոստումներին: Օրինակ, Ստամբուլում գործող քուրդ ազգայնականների այն մասը, որը համախմբված էր ազգայնական ուղղվածության «Քրդստան թաալի ջամիաթի» կազմակերպության շուրջը և ուներ բրիտանական կողմնորոշում, 1919 թ. հոկտեմբերի 9-ին գումարած արտակարգ նիստում ընդունեց որոշում, որը նպատակ ուներ հավաս-

---

[28] **Aşkun V.C.**, նշվ. աշխ., էջ 73:

[29] **Gologlu M.**, Uçüncü Meşrutiyet, Ankara, 1970, s. 81.

տիացնելու անգլիացիներին, որ իրենք ընդհանուր ոչինչ չունեն «Անատոլիական շարժման», այսինքն՝ քեմալականների հետ: Որոշման մեջ շեշտվում էր, որ «Անգլիան քրդերի միակ բարեկամն է, և որ քրդերը որոշել են Անգլիայից բացի չփնտրել այլ պաշտպաններ»[30]:

Դժվար չէ նկատել, որ քրդական իրականության մեջ կրկին իրեն զգալ էին տալիս երկփեղկվածությունը, պառակտվածությունը, քուրդ ժողովրդի ապագայի նկատմամբ տեսակետների խառնաշփոթը, քրդական առաջնորդների քաղաքական հասունության ոչ բավարար մակարդակը և այլն: Նախկինի նման քրդերի մոտ դեռևս բացակայում էր ժամանակակից տիպի քաղաքական կուսակցության գոյությունը, որն ի վիճակի լիներ համախմբելու այդ ժողովրդի մի ազդու զանգվածի՝ ինչ-որ միասնական քաղաքական գաղափարի շուրջը: Ճիշտ է, թեև արդեն առկա էր քուրդ մտավորականության մի շերտ, սակայն այն նույնպես հավաքական կամք չէր ներկայացնում: Հատկապես գյուղական շրջաններում, որտեղ բնակվում էր քուրդ ժողովրդի մեծամասնությունը, այդ մտավորականությունը ազդեցություն չուներ: Իսկ ավատապետերն ու ցեղապետերը մտավորականությանը վերաբերվում էին կասկածանքով ու անվստահությամբ, իբրև «անկրոն ու հեղափոխական գաղափարներ կրող խավի»[31]:

Կ. Պոլսում հաստատված քրդերի մեծագույն մասը ըմբոստության մեջ մեղադրված քրդական աշիրեթապետերի ժառանգորդներն էին, որոնք «պատվավոր աքսորյալի» վիճակում էին գտնվում օսմանների մայրաքաղաքում: Նրանք համարյա բոլորը սովորել էին այսպես կոչված «աշիրեթ մեքթեբլերիներ»-ում («Ցեղերի դպրոցներ» կամ ցեղերի

---

[30] **McDowall D.**, A Modern History of the Kurds, London, 2013, p. 129.

[31] **Kinnane D.,** The Kurds and Kurdistan, London-New York, 1964, p. 25.

համար նախատեսված դպրոցներ) կամ Օսմանյան կայսրության ռազմական ուսումնարաններում, որոնք, 1870 թվականից սկսած, իրենց դռները բաց էին արել երիտասարդ քրդերի առջև[32]: Քրդական այդ վերնախավը բազմաթիվ թելերով կապված էր թուրքական պետականության հետ և որպես կանոն իրեն հեռու էր պահում քաղաքական խնդիրներից և կտրված էր իր ժողովրդից: Քրդական մի առանձին խմբավորում էին կազմում այսպես կոչված «ինքնավարականները» շեյխ Աբդուլ Ղադերի գլխավորությամբ, որոնք իրենց համարում էին ազգայնականներ: Նրանք հետապնդում էին Օսմանյան կայսրության կազմում Քրդստանի ինքնավարության գաղափարը: Օսմանյան շրջանակներում շեյխը հայտնի էր որպես «խորապես կրոնական մի մարդ», որը հարգում էր սուլթանին որպես «համայն մուսուլմանների խալիֆի»[33]:

«Ինքնավարականների» այդ խմբի գնահատականը տվել է Ամին Ալի Բադրխանի որդիներից մեկը. «Նրանց մեկ ոտքը քրդական ճամբարի մեջ էր, իսկ մյուսը՝ օսմանյան և իսլամական... նրանք ուզում էին նախարար դառնալ»[34]: Այս խմբավորումը գործում էր վերին աստիճանի զգույշ՝ ամեն առիթով թուրքական իշխանություններին հավաստիացնելով իրենց հավատարմության մասին հանդեպ սուլթան-խալիֆը: Նրանք միաժամանակ թուրք պաշտոնատար անձանց փորձում էին համոզել, որ Օսմանյան կայսրության կազմում ինքնավար Քրդստանի ստեղծումը լավագույն միջոցն է՝

---

[32] **Nezan Kendal**, The Kurds in the Ottoman Empire, In: A People without a Country: Kurds and Kurdistan, ed. Gerard Chaliand, London, 1980, p. 34.

[33] **Kutschera Ch.**, Le mouvement national Kurde, Paris, 1971, p. 32.

[34] **Նույն տեղում**:

նվազեցնելու օսմանյան տարածքային կորուստները հօգուտ հայերի[35]:

Իրենց ազգայնականներ համարող մեկ այլ խմբավորում, որին անվանում էին «անկախականներ», Ամին Ալի Բադրխանի գլխավորությամբ ցանկանում էր անջատվել Թուրքիայից և ստեղծել քրդական անկախ պետություն: Ի դեպ, Բադրխանների ազդեցիկ տոհմի անդամների մեծամասնությունը երիտթուրքական հեղաշրջումից հետո կամ բանտարկված էր կամ աքսորված, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավված էր կառավարության կողմից: Տոհմի գլխավորին՝ Ամին Ալի Բադրխանին, երիտթուրքերը հեռակա դատապարտել էին մահվան:

Քրդական ազգայնական շարժման վերոհիշյալ երկու ուղղությունների միջև առկա էին սուր տարաձայնություններ, և միանգամայն պարզ դարձավ, որ նրանց հարաբերությունները անկամրջելի են, և բացառվում է նրանց քաղաքական համագործակցությունը: Քեմալական շարժման շրջանում իրենց «ազգայնականներ» հորջորջած այդ երկու թևերի հեռացումը միմյանցից այլևս դարձել էր անշրջելի:

Վերլուծության ենթարկելով քրդական հասարակության կառուցվածքն ու քաղաքական հոսանքների բազմազանության հարցը՝ Առնոլդ Թոյնբին նկատում էր, որ քրդական ազգային զգացումը իրեն կարող է դրսևորել թուրքերին, արաբներին, անգլիացիներին կամ որևէ այլ օտար տարրի դեմ հակադրվելու ձևով, սակայն այն կատարելապես բացակայում է, երբ խոսքը մեկ ընդհանուր քրդական համադաշնության մասին է: Ա. Թոյնբիի կարծիքով քրդերի մեծամասնության քաղաքական հորիզոնը դեռևս սահմանափակվում է ցեղերի ու նրանց հակամարտության շրջա-

---

[35] **Ованнисян Р.** Международные отношения Республики Армения 1918-1920гг. Ереван, 2007, стр. 350.

նակներում: «Բավականին կենսունակ լինելով հանդերձ, - գրում է նա, - քրդերը ամբողջությամբ մնացին անհատական, բայց ոչ համապետական հոգեբանությամբ օժտված ժողովուրդ»[36]:

Հայրենասիրական մղումներով տարված քրդական հասարակության այն մասը, որի քաղաքական բաղձանքն էր ազատ և անկախ Քրդստանի ստեղծումը, և որը չէր ընդունել Էրզրումի և Սըվասի համաժողովների որոշումը, հրաժարվեց համագործակցել քեմալականների հետ: Այդ նույն դիրքորոշումը որդեգրել էին նաև քուրդ «ազգայնական-անկախականները» բադրխանների գլխավորությամբ: Նշված խմբավորումների հետևորդները մերթ մեկ, մերթ մյուս վայրերում քեմալականների դեմ բարձրացնում էին զինված ընդվզումներ, իսկ երբեմն նաև խոշորամասշտաբ ապստամբություններ: Այսպես, օրինակ, դեռևս Սըվասի համաժողովի գումարման օրերին քեմալական հետախուզությունը լուրեր էր ստացել, որ Մալաթիայի շրջանում քրդերը, որոնց թվում էին նաև «Քրդստանի վերածնության ընկերության» մեծ թվով ակտիվ անդամներ, ինչպես նաև Բադրխանների տոհմի ներկայացուցիչներ՝ Քյամուրան ալի-բեյը, նրա եղբայր Ջելյադեդ-բեյը, Դիարբեքիրից Ջեմիլ Փաշազադե Էքրեմ-բեյը, Մալաթիայի մութեսարիֆ Խալիլ Ռահմի-բեյ Բադրխանը, պատրաստվում են ապստամբություն բարձրացնել «անկախ Քրդստան» ստեղծելու նպատակով[37]: Մալաթիայից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Շիրո կոչված վայրում տեղի ունեցած քրդական ղեկավարների համաժողովում Խալիլ Ռահմի-բեյը քրդերի «իրավունքների պաշտպանության կոմիտեի» անունից հրապարակում է

---

[36] **Toynbee A.J.**, Survey of International Affairs, vol. I, London, 1927, p. 479-480.

[37] **Kemali A.**, Erzincan: Tarihı, Cografı, Içtimaı, Etnografı, Idarı, Ihsaı Tetkikat Tecrübesi, Erzincan, 1932, s. 951.

«Անկախ Քրդստանի» հռչակման հիմնական սկզբունքները: Այդ փաստաթուղթը շրջաբերական նամակի ձևով ուղարկվեց մի շարք քրդական ազդեցիկ առաջնորդների, որտեղ կոչ էր արվում բարձրացնել ապստամբության դրոշը՝ Մուստաֆա Քեմալի «արկածախնդրությանը վերջ տալու համար»: Այսպիսով, քրդերն իրենց առջև դնում էին նաև համապետական նշանակություն ունեցող նպատակներ:

Շիրոյի համաժողովում Խալիլ Ռահմի-բեյ Բադրխանը քրդական շեյխերի կողմից հայտարարվեց «Անկախ Քրդըստանի» կառավարիչ: Այդ շարժման մասին Մուստաֆա Քեմալը տեղեկացել էր դեռևս 1919 թ. հուլիսի սկզբին: Առանց հապաղելու նա կարգադրել էր Դիարբեքիրում տեղակայված բանակային 13-րդ կորպուսի հրամանատարին, ինչպես նաև Ջանիկի մյութեսարիֆին ուշիուշով հետևել և իրեն հաղորդել տեղեկություններ քրդական առաջնորդների վարքագծի վերաբերյալ:

Հիշյալ շարժումը Մուստաֆա Քեմալը համարում էր անգլիական սադրանք, քանի որ տեղեկություն ուներ, որ բրիտանական հետախույզ մայոր Նոյելը սերտ շփումների մեջ է «խռովարարների հետ»[38]: Շարժումը հենց սաղմում ոչնչացնելու համար քեմալականներն անհապաղ ձեռնարկեցին կտրուկ միջոցառումներ: Մասնավորապես 1919 թ. սեպտեմբերի 10-ին 15-րդ գնդի հրամանատար Իլյաս-բեյին դիրեկտիվ իջեցվեց «ամենաարմատական ձևով և բոլոր անհրաժեշտ միջոցներով» ճզմել խռովությունը և «փադիշահի ու բանակի դեմ» բոլոր ապստամբներին, որոնք սպառնում են Թուրքիայի ազգային գոյությանը, անխնա կոտորել[39]: Մուստաֆա Քեմալի հրամանով Էլյազիգից, Սեվերիքից և

---

[38] Տե՛ս **Diary of Major E. M. Noel** on special duty in Kurdistan from 14 June to 21 September, 1919, Basra, 1919.

[39] **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 255, 256:

Սըվասից ուղարկվեցին նաև լրացուցիչ ուժեր՝ պատժիչ գործողությունն արագ իրականացնելու համար:

Մինչև որ զորքերը կհասնեին Մալաթիա, շարժման ղեկավարները դիմեցին Հալեպում նստող բրիտանական «Ինտելիջենս սերվիս» գաղտնի ծառայության գնդապետ Բելլին, օգնության խ: Սակայն վերջինս համոզեց քրդերին ձեռնպահ մնալ ելույթ ունենալուց՝ միաժամանակ նրանց վստահեցնելով, որ դաշնակիցները կլուծեն քրդական հարցը[40]:

Այսպիսով, ապստամբությունը չսկսված մարեց: Մալաթիայում կենտրոնացած ապստամբական ուժերը ցրվեցին: Ապստամբների աչքի ընկնող ղեկավարներից Էյյազիգի վալի Ղալիբ-բեյը փախուստի դիմեց Հալեպ: Քեմալականները Մալաթիայից վտարեցին մայոր Նոյելին:

Անկասկած ձախողման գլխավոր պատճառն այն էր, որ քրդական ցեղերի մեծ մասը հրաժարվեց քեմալականների դեմ ելույթ ունենալուց: Ուշագրավ է նշել, որ 1928 թ. ԱՄՆ-ում հրատարակած գրքույկում ("The Case of Kurdistan against Turkey") ասվում է, որ եթե այդ ժամանակ քրդերը հարավից, իսկ հայերը հյուսիսից զենքի դիմեին, ապա 1919 թ. ամռանը սեփական ուժերով կարող էին լուծել «իրենց հարցերը»:

Ցանկանալով պարզել քրդական ձախողված ապըստամբության դրդապատճառները՝ Մուստաֆա Քեմալը կարգադրում է Սըվասի նահանգապետ Ռեշիդ փաշային, որ նա ձերբակալի և իր մոտ բերի ապստամբության գլխավոր կազմակերպիչներ Քյամուրան Ալի և Ջելադեթ-բեյ Բադրխաններին, Ջեմիլ Փաշազադե Էքրեմ-բեյին և մյուսներին: Սակայն նրանցից միայն քոչգիրի ցեղի առաջնորդ, Ումրա-

---

[40] **Blau G.**, Le problème Kurde, Bruxelles, 1963, p. 147; **Badr Khan**, The Case of Kurdistan against Turkey, New York, 1928, p. 37.

նիե գավառի գավառապետ Ալիշան-բեյին հաջողվեց տանել Քեմալի մոտ: Հարցաքննության ժամանակ Ալիշան-բեյը հայտարարում է, որ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի սկզբունքների համաձայն, արևելյան նահանգները տրամադրվելու են Հայաստանին: Որ դրանով իսկ ոտնահարվում են քրդերի շահերը: Ուստի իրենց նպատակն է եղել քրդական մեծամասնություն կազմող վիլայեթներում ստեղծել ինքնավար Քրդստան օսմանյան սուլթանի հովանավորության ներքո: Հարցաքննությունն անձամբ իրականացրած Մուստաֆա Քեմալը հայտարարում է, որ Վիլսոնի սկզբունքները ոչ մի ուժ չունեն, և ինքը առաջարկում է քրդական առաջնորդներին համագործակցել քեմալականների հետ, ավելացնելով, որ Էրզրումի համաժողովում քրդերը հավաստիացրել են իրեն, որ պատրաստ են աջակցելու «հայրենիքի փրկության» համար մարտնչող թուրք ազգայնականներին[41]:

Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնաժողովի ամերիկյան սեկցիայի անդամներ Հենրի Քինգը և Չարլզ Քրեյնը, որոնք 1919 թ. հունիսի 10-ից մինչև հուլիսի 29-ը Օսմանյան կայսրության տարածքում անց էին կացրել մանրամասն քննախույզ՝ ի թիվս այլ խնդիրների պարզելու համար հայկական և քրդական հարցերին վերաբերող մանրամասներ, իրենց զեկուցագրում նշում էին, որ հայտնի թուրք լրագրող, «Վաքըթ» թերթի հրատարակիչ-խմբագիր Ահմեդ Էմինը (Յալման) փորձում էր համոզել իրենց, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը մեծ սխալ գործած կլինի, եթե հայերին տրամադրի այն տարածքները, որտեղ թուրքերը և քրդերը մեծամասնություն են կազմում: Նա հայտնում է, որ այդ տարածքներում քրդերը պետք է նա-

[41] **Dersimi M.N.**, Kürdistan Tarihinde Dersim, Halep, 2000, s. 122-129.

խապատրաստվեն՝ ինքնավարություն ստանալու համար[42]:

Քինգ-Քրեյնի հանձնաժողովի անդամներն իրենց շրջագայության ժամանակ հանդիպումներ են ունեցել նաև մի շարք քուրդ գործիչների հետ, որոնք իրենց անվանել են «Քրդական դեմոկրատական կուսակցության» անդամներ: Այդ գործիչներից Նեջմուդդին-բեյը, Հուսեյին-բեյը, Ազիզ Բաբան-բեյը և ուրիշներ հայտնում են, որ իրենք կողմնակից են բրիտանական մանդատի ներքո ձևավորելու պետություն այնպիսի շրջաններում, որտեղ իրենց կարծիքով քրդերը կազմում են «նշանակալից մեծամասնություն»: Որպես այդպիսի շրջաններ նրանք հիշատակում են Խարբերդի, Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի, Բայազետի և Մոսուլի շրջանները՝ ելքով դեպի Միջերկրական ծով: Նրանք նաև շեշտում են, որ իրենք դեմ են թուրքերի ու արաբների հետ ամեն տեսակի քաղաքական կապեր ունենալուն: Ինչ վերաբերում է ապագա հայկական պետությանը, ապա իրենք պատրաստ են ճանաչելու այն, «եթե իհարկե այդ պետությունը գտնվի այն տարածքներից դուրս, որոնց նկատմամբ իրենք ունեն հավակնություններ»: Նրանք առաջարկում են նաև կատարել բնակչության փոխանակություն, այսինքն՝ ապագա քրդական պետության տարածքից հայերը պետք է տեղափոխվեն ապագա Հայաստանի տարածք և, հակառակը, Հայաստանի տարածքից քուրդ բնակչությունը պետք է տեղափոխվի քրդերի պետություն:

Ինչ վերաբերում է ասորիների՝ առանձին «Ազգային տուն» ունենալու հավակնություններին, ապա Քինգի և Քրեյնի հաղորդմամբ քուրդ գործիչները կտրուկ առարկում էին

---

[42] **Howard H.N.**, King-Krane Commision: An American inquiry in the Middle East, Beirut, 1963, pp. 161, 166, 168.

դրան՝ պատճառաբանելով, որ ասորիները ոչ մի վայրում մեծամասնություն չեն կազմում[43]:

Մուստաֆա Քեմալը վճռականորեն պայքարում էր ոչ միայն այն քուրդ գործիչների դեմ, որոնք փայփայում էին անկախ քրդական պետություն ստեղծելու գաղափարներ, այլև նրանց դեմ, որոնք չէին մերժում արևելյան վիլայեթներում հայկական պետություն ստեղծելու գաղափարը: Այսպես, 1919 թ. նոյեմբերի 17-ին նա հանդիմանական ոգով նամակ է ուղարկում քուրդ գործիչ, օսմանյան սենատի անդամ Մահմուդ Չյուրուք Սուլու փաշային, որտեղ նրան հիշեցնելով, որ «Լե Բոսֆոր» ֆրանսալեզու թերթին տված հարցազրույցում նա հայտարարել էր. «Թեև մենք չենք ճանաչում հայերի կողմից առաջադրվող հսկայական տարածքային պահանջների հիմնավորվածությունը, սակայն կգնայինք նրանց հետ սահմանների որոշ ճշտման», Քեմալը, առանց իր զայրույթը թաքցնելու գրում էր. «Մենք կարծում ենք, որ նման կարգի հայտարարությունը, որը պարունակում է Հայաստանի նկատմամբ տարածքային զիջումների խոստում և արված է պետական գործչի, խաղաղության պայմանագրի գծով հանձնաժողովի անդամի կողմից, անկասկած առաջ կբերի մեծ զայրույթ Արևելյան Անատոլիայի բնակչության շրջանում: Էրզրումի և Սըվասի կոնգրեսներում ժողովուրդը որոշել է Հայաստանին չզիջել թուրքական հողի և ոչ մի թիզ և ամբողջ աշխարհին հայտարարել է, որ եթե նույնիսկ կառավարությունը հայտնվի այնպիսի ողբերգական վիճակում, որ ստիպված լինի իր վրա վերցնել նման պարտականություններ, թուրք ժողովուրդը իր սեփական ձեռքը կվերցնի իր օրինական իրավունքների պաշտպանությունը: Այդ ազգային որոշումը առաջին հերթին պետք է հայտնի լիներ խաղաղության բանակցությունը-

[43] **Howard H.N.**, նշվ. աշխ., էջ 172:

ների գծով նախապատրաստական հանձնաժողովի անդամներին»[44]:

Այսպիսով, քեմալական շարժման սկզբնական էտապում առանձին աննշան դեպքերից բացի տեղի չունեցան քրդերի քիչ թե շատ լուրջ հակաքեմալական շարժումներ: Դա անշուշտ վկայում է այն մասին, որ տվյալ ժամանակաշրջանում քեմալականների և քրդերի շահերը հիմնականում համընկնում էին, և հենց այդ պատճառով թուրք ազգայնականների դեմ չստեղծվեց ներքին քաղաքական ճակատ: Ընդհակառակը, Հայկական հարցի կապակցությամբ շահերի միասնությունը բերեց նրան, որ քուրդ բնակչության զգալի մասը ներգրավվեց Հայաստանի, ինչպես նաև Հունաստանի դեմ զինված պայքարի մեջ: Քրդերն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Կիլիկիայում ֆրանսիացիների և հայերի դեմ մղվող պայքարին: Արձագանքելով քեմալականների կոչերին՝ քրդերը հատկապես «աչքի ընկան» Ուրֆայի և Մարաշի շրջաններում՝ կազմակերպելով հայ բնակչության զանգվածային ջարդեր:

1920 թ. սկզբներին Կողբի, Կաղզվանի, Արարատի, Օլթիի քրդերը նույնպես վտանգավոր ուժ էին Հայաստանի Հանրապետության համար: Նրանք կարող էին հայկական ուժերը ջլատել կամ թիկունքից վտանգել, եթե այդ ուժերը փորձեին մտնել Ալաշկերտ և Բասեն՝ «զենքի ուժով տեր հանդիսանալու համար հայրենի հողին»[45]: Այս մտահոգություններից դրդված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, 1920 թ. հունվարից սկսած, մեծ ուշադրություն դարձրեց Հայաստանի սահմանների մեջ ամփոփված քուրդ բնակչության վրա, նրանց եթե ոչ Հայաստանի բա-

---

[44] **Dersimi M.N.**, նշվ. աշխ., էջ 122-129:

[45] **Սասունի Կ.**, Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ դարեն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, 1969, էջ 230:

րեկամ դարձնելու, այլ գեթ նրանց լոյալությունը ապահովելու համար:

Հայաստանի կառավարության որոշմամբ և ներքին գործոց նախարարության հրահանգով Կարո Սասունին 1920 թ. մարտից մինչև ապրիլի վերջը շրջագայել է քրդաբնակ շրջաններում և Կարսի նահանգապետ Ղորղանյանի հետ միասին տեսակցություններ է ունեցել քուրդ և կովկասյան թաթարների ներկայացուցիչների հետ ազգամիջյան համերաշխության քարոզներով: Այդ նույն ժամանակ Կարո Սասունին առանձին տեսակցություններ է ունեցել քրդական ղեկավարների հետ՝ աշխատելով հասկացնել նրանց քուրդ-հայկական համագործակցության անհրաժեշտությունը: Սակայն բացի եզդիներից, մոտ 60 հազար քրդեր գրավել են վերապահ դիրք: Թեև խոսքով նրանք միշտ իրենց ներկայացնում էին Հայաստանի քաղաքացի, բայց գործով «հակված էին թուրքին կողմը»[46]: «Քյուրտերը սպառազեն մնացին մեր սահմաններուն վրա,- գրում է Կարո Սասունին, - և հայ բանակը ստիպվեցավ մեկ աչքը պահել թրքական կանոնավոր զորքերուն ու թաթար ազգաբնակչության վրա, իսկ մյուս աչքով հսկել սահմաններեն ներս և սահմանակից զինված քրտության վրա»[47]:

1920 թ. սեպտեմբերին թուրք-հայկական պատերազմը սկսվելուց հետո քրդերի մի մասը, միանալով Քյազըմ Կարաբեքիր փաշայի բանակին, կռվեց Հայաստանի Հանրապետության դեմ: Հատկապես իրենց հակահայկական գործելակերպի ակտիվությամբ աչքի ընկան Օլթիի և Կողբի քրդերը, ինչպես նաև Մանազկերտ-Արճեշի հայդերանլը աշիրեթը Քյոռ Հուսեյին փաշայի գլխավորությամբ: Սրանք մասնակցեցին նաև Կարսի և Ալեքսանդրապոլի կռիվներին:

---

[46] **Նույն տեղում**:

[47] **Նույն տեղում**:

Մինչդեռ 1920 թ. աշնանը Թուրքիայում քրդական հարցը տալիս էր նոր առկայծումներ: 1920 թ. հոկտեմբերին ջիբրան ցեղի աշիրեթապետ, թուրքական բանակի գնդապետ Խալիդ-բեյ Ջիբրանլին Էրզրումում կազմակերպեց «Ջեմիյեթի իսթիքլյալի Քուրդիստան» («Քրդստանի անկախության կոմիտե») անունով մի կազմակերպություն, որի ծրագիրը նախատեսում էր քրդերի ազատագրումը թուրքական լծից և անկախության ձեռքբերումը[48]: Մի քանի ամսվա ընթացքում կոմիտեն իր ընդհատակյա մասնաճյուղերը բաց արեց քրդաբնակ տարբեր վայրերում, կապ հաստատեց քուրդ ցեղապետերի, ուլեմների, շեյխերի, թուրքական վարժարանների քուրդ աշակերտների, տեղական պաշտոնյաների և բանակի քուրդ սպաների հետ[49]: Միաժամանակ Խալիդ-բեյի կողմնակիցները զինված ապստամբության պատրաստություններ էին տեսնում Դերսիմ-Քոչգիրի շրջանում:

1921 թ. գարնանը սկսվեց ապստամբական շարժում, որը կարճ ժամանակում տարածվեց նաև քրդաբնակ այլ շրջաններում՝ ընդգրկելով 15 հազար քառակուսի կիլոմետր տարածք[50]: Անկարայի կառավարությունը նախ իրեն կողմնակից առանձին քուրդ առաջնորդների միջոցով աշխատեց պառակտել շարժումը և ոչ առանց հաջողության: Այնուհետև ապստամբական օջախներում կուտակելով մեծ ուժեր՝ 1921 թ. մարտի 15-ին Սըվաս, Էյազիգ և Էրզինջան վիլայեթներում հայտարարեց պաշարողական դրություն: Քեմալական իշխանություններն ապստամբներից պահանջեցին անհապաղ զենքը ցած դնել և հանձնվել: Ապստամբության ղեկավարները պատասխանեցին, որ «իրենք գիտեն, որ թուր-

---

[48] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 243:

[49] **Firat M.S.**, Doğu illeri ve Varto tarihi, Ankara, 1961, s. 117-118.

[50] **Dersimi M.N.**, նշվ. աշխ., էջ 130:

քական կառավարությունը նպատակ ունի ոչնչացնելու քրդերին, ինչպես որ ոչնչացրին հայերին, ուստի իրենք շարունակելու են պայքարը մինչև վերջ՝ հանուն ազգային իրավունքների»[51]:

Ապստամբությունը ծավալվելով ընդունեց այնպիսի հուժկու բնույթ, որ Անկարայի կառավարությունը նույնիսկ ստիպված եղավ հունական ճակատից հանել զորքերի մի մասը և ուղարկել ապստամբների դեմ: Ինչպես միշտ, ապստամբության ճնշումն ուղեկցվեց թուրք զինվորների գործած անլուր գազանություններով:

1921 թ. Մուստաֆա Քեմալը և նրա կառավարությունը լծվել էին եռանդուն գործունեության՝ հույս ունենալով նավթով հարուստ Մոսուլի վիլայեթը պոկել բրիտանական վերահսկողությունից ու միացնել «նոր Թուրքիային»: Այդ կարևոր գործը գլուխ բերելու հանձնարարությունը Մուստաֆա Քեմալը դրել էր իր մերձավորագույն զինակիցներից մեկի՝ գեներալ Օզդեմիր փաշայի վրա, որը քանիցս ընդունակություն էր դրսևորել նաև դիվանագիտության բնագավառում՝ գտնելով ծագած հարցերի ոչ սովորական լուծումներ: Թուրքերին և քրդերին անվանելով «մեկ միասնական կրոնի զավակներ»՝ գեներալը կոչ էր անում նրանց համախմբվել Անկարայի կառավարության շուրջը և սեփական արյունը չխնայել «հանուն հավատի»՝ ընդդեմ իսլամի ոխերիմ թշնամիների և առաջին հերթին անգլիացիների[52]: Միաժամանակ նա հաջողությամբ շրջանառության մեջ էր դնում քեմալականների քաղաքական զինանոցի կարևորագույն զենքը՝ «հակաիմպերիալիստական» կարգախոսները: Ընդ որում քրդական այն բոլոր առաջնորդները, որոնք հրաժարվում

---

[51] **Նույն տեղում**, էջ 146:

[52] **Edmonds C.J.**, Kurds, Turks and Arabs: politics. Travel and Research in North-Eastern Iraq, 1919-1925, London, 1957, pp. 245-246.

էին գործիք դառնալուց գեներալի ձեռքերում, պիտակավորվում էին իբրև «իմպերիալիզմի գործակալներ», «կրոնական մոլեռանդներ», «հետադիմականներ» և այլն:

Մոսուլի խնդիրը հօգուտ Թուրքիայի լուծելու համար քեմալական իշխանությունները փորձում էին օգտվել նաև բոլշևիկյան Ռուսաստանի աջակցությունից՝ որպես խայծ օգտագործելով «հակաիմպերիալիստական» և «հակաբրիտանական» կարգախոսները: Այսպես, 1921 թ. օգոստոսի 4-ին արտաքին գործերի գծով քեմալականների կոմիսար Յուսուֆ Քեմալ-բեյը Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինին հասցեագրված հուշագրում փորձում էր համոզել նրան, որ Մոսուլի նավթը ստանալու, ինչպես նաև Հնդկաստանում իրենց գաղութային տիրապետությունը հավերժացնելու նպատակով անգլիացիները ձեռնամուխ են եղել այնպիսի քայլերի իրականացման, որոնք անմիջականորեն դիպչում են Ռուսաստանի շահերին: «Այդ նպատակով, - գրում էր Յուսուֆ Քեմալը, - անգլիացիները պլանավորել են Միջագետքի և Սև ծովի միջև ստեղծել մեկ կամ մի քանի պետություններ, որոնք պետք է գտնվեն բրիտանական հովանու ներքո: Քանի որ Հայաստանի մասին, որը նախատեսվում էր այդ նպատակի համար, ներկայումս խոսք անգամ լինել չի կարող, ուստի Անգլիան աշխատում է այդ նույն ծրագրի համար օգտագործել, ի միջի այլոց ապարդյուն կերպով, սրիկաների կողմից ղեկավարվող քրդական բանդաները»[53]: Խոսքն անշուշտ Թուրքիայի տարածքում Անգլիայի հովանու ներքո քրդական պետություն ստեղծելու հարցին էր վերաբերում:

Դժվար է հավատալ, որ Մոսկվան չէր կռահում քեմալականների այս «հեղափոխական-հակաիմպերիալիստական» ճամարտակությունների թաքնված իմաստը: Սակայն

---

[53] **Документы внешней политики СССР.** Том 4, Москва, 1960, стр. 406.

առաջնորդվելով զուտ օգտապաշտական հաշվարկներով՝ խորհրդային ղեկավարները ոչ միայն ձևացնում էին, թե կատարելապես ընդունում էին դրանք, այլև տուրք էին տալիս Անկարայի շովինիստական նկրտումներին:

Ի շահ Մոսուլի խնդրի լուծման՝ քեմալականները ճարպկորեն սկսեցին օգտագործել «անկախ Քրդստանի» խաղաքարտը: Մասնավորապես Իրաքի քրդերին իրենց կողմը գրավելու նպատակով քեմալականները նրանց ազդեցիկ առաջնորդների հետ ստորագրեցին պայմանագիր, որով խոստանում էին նպաստել Իրաքյան Քրդստանի անկախության «սուրբ գործին»:

Այսպիսով, Անկարան խոստանում էր ստեղծել «անկախ Քրդստան», սակայն Իրաքի հաշվին[54]: Ոգևորվելով այդ խոստումներով՝ քրդերը սկսեցին համագործակցել թուրքական հրամանատարության հետ ընդդեմ անգլիացիների: Օրինակ, 1922 թ. թուրքական զորքերը Փիշդար շրջանի քրդերի հետ հարձակում ձավալեցին Ռաֆիայի վրա, որտեղից դուրս մղեցին անգլիացիներին[55]:

Բուն Թուրքիայում քրդերին իրենց հետ ամուր կապերով կապելու նպատակով Մուստաֆա Քեմալի նախաձեռնությամբ քեմալական իշխանությունները ձեռնամուխ եղան քրդական ինքնավարության վերաբերյալ օրինագծի մշակմանը, որով Թուրքիայի քրդերին խոստանում էին ինքնավար գոյության իրավունք: Այդ միջոցառման նպատակն էր նախ ձեռք բերել քրդերի աջակցությունը և ապա միջազգային հանրությանը համոզել, որ Թուրքիայի նոր իշխանությունները մտադիր են բավարարություն տալ քրդերի ինքնավարության ձգտումներին:

---

[54] **Гасратян М.А.** Курды Турции в новейшее время, Ереван, 1990, стр. 45.

[55] **Edmonds C. J.**, նշվ. աշխ., էջ 246:

1920-ական թվականների սկզբին քեմալականների սևեռուն ուշադրության կենտրոնում էր գտնվում նաև Իրանական Քրդստանը: Այստեղ որպես պատասխան ինքնագլխության ձգտող ցեղերի հնազանդեցման իրանական կառավարության հետևողական քաղաքականության, 1922 թ. կեսերին բռնկվեց մի հուժկու անջատողական շարժում շեքքաք ցեղի առաջնորդ Իսմայիլ աղա Սըմքոյի գլխավորությամբ: Ապստամբներն առաջ քաշեցին Իրանի տարածքում անկախ Քրդստանի ստեղծման պահանջ[56]: Իրանական Քրդստանի ազատագրմանը ձգտող քրդական ապստամբներն իրենց ներշնչումներն ստանում էին թուրքերից և բոլշևիկներից:

Օգտագործելով «երկակի ստանդարտի» քաղաքականություն և Իրաքի ու Իրանի քրդերի նկատմամբ ընդունելով «անկախության ջատագովի» կեցվածք՝ միևնույն ժամանակ քեմալականները Թուրքիայի քրդերի նկատմամբ իրականացնում էին թուրքական ավանդական «արյան ու երկաթի» քաղաքականություն: Քեմալականները ծրագրեր էին փայփայում ազգային-էթնիկական առումով Թուրքիան վերածելու միատարր պետության: Նրանք պատրաստվում էին շարունակել իթթիհադականների կողմից սկսված Արևմտյան Հայաստանը «խորթ տարրերից» սրբել-մաքրելու քաղաքականությունը՝ կազմելու համար էթնիկապես միապաղաղ Թուրքիա: Հետևաբար՝ քրդերի անկախության կամ ինքնավարության ձգտումները, հանդիպելով թուրք ազգայնականների կտրուկ դիմադրությանը, փշուր-փշուր էին լինելու:

Ներկայացնելով քրդական հարցում Մուստաֆա Քեմալի քաղաքականության շրջադարձը դեպի «ծանր ձեռքի» մարտավարությունը՝ քուրդ ազգային գործիչ Քյամուրան Բադրխանը նշում էր, որ երբ քրդերը նրան հիշեցրին իր՝

---

[56] **Entessar N.**, Kurdish Ethnonationalism, London, 1992, p. 12.

ժամանակին իրենց տված առատ խոստումների մասին, նա որպես պատասխան քրդերին ցույց տվեց թնդանոթներ ու սվին, հրամայեց փակել քրդական դպրոցները, ձերբակալել ազդեցիկ ու հայրենասեր գործիչներին և նրանց հանձնել տխրահռչակ «անկախության դատարանների» դատաստանին[57]:

In 2011, U.S. Secretary of State Hillary Clinton rolled out the plan called the New Silk Road Initiative (NSRI) as a way to build long-term stability in Afghanistan.[103] The NSRI was fo-

---

[100] **Tao Wang, Yampolsky R.**, op. cit., p. 1.

[101] Marantidou **V., Ralph A. Cossa,** op. cit., p. 2.

[102] **Toktomushev K.**, The Silk Road Economic Belt's Impacts on Central Asia, China and US Focus, China United States Exchange Foundation, 08.05.2015. http://www.chinausfocus.com/finance-economy/the-silk-road-economic-belts-impacts-on-central-asia/

[103] **Joshua Kucera**, Uzbekistan Starts Building Railroad to Mazar-e-Sharif, Eurasianet.org, 29.05.2010. http://www.eurasianet.org/node/61183
In the U.S. vision, Hillary Clinton said: "Turkmen gas fields could help meet both Pakistan's and India's growing energy needs and provide significant transit revenues for both Afghanistan and Pakistan. Tajik cotton could be turned into

cused on Afghanistan as a main hub for economic integration and transportation; as well to provide the much-needed support to Afghanistan after US troops' leave the region in 2014.[104] The USA and its western allies hope to bolster peace and stability in the region through supporting trade links and helping open new markets connecting Afghanistan to CA, Pakistan, and India and beyond.[105] Thus an important objective of the NSRI was to provide economic boost for Afghanistan's neighbors, including Central Asian republics. The NSRI designed to promote economic growth throughout the region as well as integration into the world economy by introducing modernized infrastructure and effective cross-border trade.[106] Although possessing great economic potential and vast natural resources, CA remains one of the least integrated regions in the global economy.

---

Indian linens. Furniture and fruit from Afghanistan could find its way to the markets of Astana or Mumbai and beyond."

[104] **Fedorenko V.**, The New Silk Road Initiatives in Central Asia, Rethink Paper 10, Rethink Institute, Washington DC, August 2013, p. 4-5. http://www.rethinkinstitute.org/wp-content/uploads/2013/11/Fedorenko-The-New-Silk-Road.pdf

[105] **Zhang Hongzhou**, Building the Silk Road Economic Belt: Problems and Priorities in Central Asia, Rajaratnam School of International Studies (RSIS), Nanyang Technological University, Policy Report, May 2015, p. 9. http://www.rsis.edu.sg/wp-content/uploads/2015/05/PR150518_Building-the-Economic-Silk-Road-Belt.pdf Several projects within the U.S.-led New Silk Road (NSRI) Initiative have found monetary and strategic backing. The Central Asia-South Asia electricity transmission project (CASA-1000), to build trans-continental power grid lines, received US $15 million from the U.S., a Turkmenistan-Afghanistan-Pakistan-India (TAPI) gas pipeline could receive support from both the ADB and the WB. Besides the NSRI, in February 2015, the U.S. also launched the USAID Strategy for 2015–2019 to help CA countries by significantly increasing cross-border trade and employment opportunities for the poor.

[106] **Fedorenko V.,** op. cit., p. 4-5.

However, Kazakhstan and the other CA countries did not entirely support the NSRI - the USA Republican administration's reissued concept of Greater Central Asia (GCA) - due to the fact that it was associated with the geopolitical rivalry between the USA and Russia in the region. Even back in April 2006, when Kazakh Foreign Minister supported the GCA concept, he made an important reservation arguing that GCA could be seen primarily as a civilizational and economical concept, but never in the context of military doctrine.[107] Later perhaps believing that NSRI does not have obvious capacity to get implemented, the government of Kazakhstan decided to give preference to the Chinese SREB, while not denying the possible participation in NSRI.[108]

Some Russian experts suggest that NSRI is yielding to the Chinese SREB, because it has been engaged the highly ideological and geopolitical considerations, not the economy. The main goal of the USA and the West in general does not seem to tilt towards the economic revival of the old trade route and help the economic recovery of the CA, but rather to deter these countries away from their economic and political ties to Russia. On the contrary, China made neither ideology nor geopolitics a priority, at least when announced its OBOR initiative as China strictly speaks about and bets only on the economic benefits.[109]

---

[107] **Муминов А.**, Геополитическая «рыбалка» КНР и США в Центральной Азии… Аждар Куртов - Казахстан соблазнился блеском китайского золота, RussiansKz.Info, 18.01.2014. http://www.russianskz.info/politics/5270-geopoliticheskaya-rybalka-knr-i-ssha-v-centralnoy-azii-adzhar-kurtov-kazahstan-soblaznilsya-bleskom-kitayskogo-zolota.html

[108] **Ibid.**, p. 1; Астана балансирует на шелковых нитях Китая и США, Stan Radar, 17.01.2014. http://www.stanradar.com/news/full/7184-astana-balansiruet-na-shelkovyh-nitjah-kitaja-i-ssha.html

[109] Астана балансирует на шелковых нитях Китая и США, …, стр. 1.

Some Chinese observers have pointed out that Washington via the NSRI was seeking to unify the CA and South Asia, the Transcaucasia and even Mongolia and Chinese Xinjiang. Moreover, the same program under the name of "Central Asian Grand Plan" has been an important part of the USA strategy of "returning" or "rebalancing" the Asia Pacific region (APR). They believe that the USA aims to control Afghanistan, but avoids investing the money, hoping that the funds will be provided by neighboring states of Afghanistan."[110] India, Pakistan and other countries have already demonstrated activeness on this regard.[111]

Some Chinese experts assure that NSRI mainly aims to expand the USA presence in the region under the pretext of promoting security and true purpose of the White House project was and is a strategic encirclement and containment of its greatest enemy - China.

## The Chinese OBOR is not excluded the American initiative of NSRI

As Forbes' contributor commented that while several USA presidential aspirants were looking inward and attacking USA participation in the North American Free Trade Agreement (NAFTA) and Transpacific Partnership (TPP) [or rolling out the plan of NSRI], China is using its economic power to build OBOR, strengthening and solidifying its links with the

---

[110] **Сергеев М.** Пекин дипломатично подвинул путинский проект Евразийского союза. Независимая газета, 14.10.2013.
http://www.ng.ru/economics/2013-10-14/1_pekin.html

[111] Какие различия существуют в стратегиях Китая, США и России в Центральной Азии? Жэньминь Жибао, 10.10.2013.
http://russian.people.com.cn/95181/8420655.html

world.[112] It is no coincidence that some American experts are complaining that China, by virtue of its vibrant economy and insatiable economic demand, is stealing America's idea for the "New Silk Road" and essentially "eating their [American] lunch."[113] They are calling Washington to take the initiative in its own hands and work out long-term strategy for the CA, because if they do not, then they will either be replaced by Beijing or Moscow.[114] The USA is often criticized for a distinct lack of strategy in its relations with CA. They found that unlike Beijing's economic expansion or Moscow's military ties, Washington's Central Asian policy often comes across as an afterthought.[115] According to observers, a new element of Washington's approach is an explicit USA attempt to praise China's growing presence in CA, while condemning that of Russia. The presumption behind the rhetorical framing seems to be that Beijing can help check Moscow's resurging influence in the region.[116]

---

[112] **Harold L. (Hal) Sirkin,** China Plans a New 'Silk Road' As Americans Pull Back, Forbes, 03.152016. https://www.forbes.com/sites/haroldsirkin/2016/05/03/china-plans-a-new-silk-road-as-americans-pull-back/#14feead94a59

[113] **Dena Sholk,** Chinese Role in Central Asia Must not be Ignored by West, Universal Newswires, 14.03.2013. http://www.universalnewswires.com/centralasia/kyrgyzstan/energy/viewstory.aspx?id=13799

[114] **Муминов А.**, указ. соч., стр. 1; Астана балансирует ..., стр. 1.

[115] **Casey M.**, What Is the US Policy for Central Asia? The Diplomat, 04.04.2015. http://thediplomat.com/2015/04/what-is-the-us-policy-for-central-asia/?utm_campaign=trueAnthem:+Trending+Content&utm_content=5521338404d30149980000001&utm_medium=trueAnthem&utm_source=facebook

[116] **Weitz R.**, For U.S., Dividing China, Russia in Central Asia Easier Said Than Done, World Politics Review, 07.04.2015. http://www.worldpoliticsreview.com/articles/15465/for-u-s-dividing-china-russia-in-central-asia-easier-said-than-done

Former USA President Obama's goal of rebalancing USA foreign policy toward Asia is seen partly as an effort to contain China through USA allies such as Japan, South Korea and the Philippines - something that Beijing is quietly countering with its moves in CA.[117] Facing greater competition from the USA in East Asia, Beijing is shifting attention westward to take advantage of what it perceives as a vacuum in CA.[118] Nevertheless, China's Silk Road strategy is never going to replace the economic importance of its ties to the more-developed countries of the Asia-Pacific region.[119] China's Pan-Asian strategic concept aims to integrate CA and western China economically with further connection of these regions into a unified communications network with inland and coastal areas of China.[120] Beijing characterizes its initiatives as an effort to encourage integration and economic growth in Eurasia, rather than an attempt to expand its own political influence in the region. In this context, Chinese government officials and scholars publically contrast their plans with the post-World War II American Marshall Plan, claiming that OBOR lacks the latter's "hegemonic" characteristics.[121]

---

[117] **Denyer S.**, China bypasses American 'New Silk Road' with Two if its Own, 14.10.2013. https://www.washingtonpost.com/world/asia_pacific/china-bypasses-american-new-silk-road-with-two-if-its-own/2013/10/14/49f9f60c-3284-11e3-ad00-ec4c6b31cbed_story.html?utm_term=.6138afd53337

[118] **Marantidou V., Ralph A. Cossa,** op. cit., p. 1.

[119] **Denyer S.,** op. cit., p. 1.

[120] **Лаумулин М.** Центральная Азия в зарубежной политологии и мировой геополитике, Центральная Азия в XXI столетии, том V: КИСИ при Президенте РК, Алматы, 2009, стр. 161. http://www.kisi.kz/img/docs/4587.pdf

[121] **Zimmerman T.**, The New Silk Roads: China, the U.S., and the Future of Central Asia, Center on International Cooperation, New York University, October 2015, p. 19.
http://cic.nyu.edu/sites/default/files/zimmerman_new_silk_road_final_2.pdf

The Chinese OBOR, however, is not exclusive in the same manner as America's NSRI plan is, since Chinese inclusive development is designed to be formed on the basis of the differences, competition and cooperation."[122] Accordingly, it is important for the USA to engage with China on OBOR, but if it is to be effective, Washington needs to be conscious that Beijing still perceives its activities in the region as intended to contain China. US initiatives in CA, which are frequently conceived with little consideration given the Sino-U.S. bilateral relationship, are often perceived in Beijing as part of a broader U.S. strategy aimed at hindering China's economic and military rise.[123] However, the general harmony and occasional mutual support that China and Russia offer each other in CA will make it difficult for Washington to exploit their modest divisions.[124]

Yet there were limits to China's influence and control over economic and political developments in the region. China's rising influence in the region was still far from making CA its own "backyard." The influence of Moscow and, to a lesser extent, Washington on regional affairs should not be overlooked.[125] If in the 19th century, CA was the arena of the "Great Game" in which Tsarist Russia and the British Empire competed for strategic primacy,[126] today, the development of the Eurasian land mass, as described by China as part of the One Belt

---

[122] **Арутюнян А.**, указ. соч., стр. 1.

[123] **Zimmerman T.**, op. cit., p. 19.

[124] **Weitz R.**, op. cit.

[125] **Zhang Hongzhou**, op. cit., p. 1.

[126] **Ramakant Dwivedi**, China's Central Asia Policy in Recent Times, China and Eurasia Forum Quarterly, Vol. 4, No. 4, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2006, p. 2.
http://spol.unica.it/didattica/bonnis/Storia%20della%20Cina%20Contemporanea/China%27s%20Central%20Asia%20Policy-Dwivedi.pdf

initiative, could also be described as a similar venture. With the exception of a now retired Great Britain from these adventures, the major players mainly remain the same but this time led by China.[127] The 21st Century version of the Great Game is on.

## Conclusion

A few years ago, a trio of competing multilateral infrastructure development projects sought to advance economic interconnectedness in CA, Washington proposed a "New Silk Road Initiative" to connect Central Asian states amongst themselves and with Afghanistan. Moscow, meanwhile, launched the Eurasian Union, which was to serve, as Vladimir Putin said, as the foundation of a new "epoch" for the post-Soviet states. And China, in 2013, announced plans for its SREB, expanding railways and, most especially, energy pipeline networks in the region.

Chinese analysts pointed out that compared with the Russian EAU and American NSRI, Chinese SREB is a multi-vector project that extends to the East, West, North and South and connects the Central, East, South and West Asia in different ways of economic cooperation. SREB reflects an inclusive development of China, and China's policy of "general development of western regions" is an important step to integrate the Chinese and CA's economies. Increasing Chinese economic engagement offers CA countries an opportunity to diversify their economic relations, and stability has been a key concern for the Chinese government in its relations with CA.

---

[127] **Devonshire-Ellis C.**, China's Silk Road Economic Belt, China Briefing, Issue 158, Dezan Shira & Associates, September 2015, p. 4. http://www.leadingedgealliance.com/dev/uploads/CB%202015%2009%20China's%20Silk %20Road%20Economic%20Belt.pdf

Both initiatives, Russian-led EAU and USA's New Silk Road Initiative, are discussed within China's policy circles and China views the Russia-led EEU as far less of a threat. While China and Russia have clear economic incentives to cooperate in this region in the short term, they will need to overcome a number of hurdles to set their partnership on a path that can be sustained further into the future. It will be a victory for China's Good Neighbor Policy as Beijing prioritizes constructive relations with Moscow and its Eurasian neighbors.

While China has gone to great lengths to frame its initiatives in cooperative non-exclusionary terms and to emphasize its openness to a wide range of stakeholders, it also clearly intends to further establish itself as a central actor in regional affairs. China's return to CA as an economic force satisfies both premises, signaling that China has fully regained its old status as the world's premier economic power under its new leadership.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ

## ՉԻՆԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՈՒՂԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

***Բանալի բառեր՝*** Չինաստան, Պեկին, Տիբեթ, Կենտրոնական Ասիա, ԽՍՀՄ, «Մեկ գոտի, մեկ ուղի», «Արևմտյան Եվրոպա-Արևմտյան Չինաստան», գործընկերություն, տնտեսություն:

Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ուղի» նախագծում հատուկ տեղ է հատկացվում Միջին Ասիայի երկրներին՝ իբրև պատմական «Մետաքսի ճանապարհի» ցամաքային կարևորագույն հատվածի ու տարանցիկ գոտու: Ժամանակակից «Մետաքսի ճանապարհի» չինական «Մեկ գոտի, մեկ

ուղի» նախաձեռնության երկու կարևոր միջանցքները ևս անցնում են Միջին Ասիայի պետությունների տարածքով: Այդ երկրները՝ իբրև Չինաստանի կայուն ռազմավարական թիկունք, Պեկինի գլոբալ ռազմավարության և աշխարհաքաղաքականության կարևոր մաս են կազմում չինական ներդրումների ծավալման, տնտեսական համագործակցության ընդլայնման, առևտրային երթուղիների և ենթակառուցվածքային նախագծերի շինարարության, ածխաջրածնային ռեսուրսներով չինական պահանջարկի բավարարման, տարածաշրջանային անվտանգության խնդիրների ապահովման և այլ ուղղություններով:

# ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

# SOURCE STUDY AND PHILOLOGY

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ

# ԲՋՆԻԻ ԱՄՐՈՑԻՑ XII ԴԱՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Նվիրում եմ Հայկ Հակոբյանի*
*լուսավոր հիշատակին*

***Բանալի բառեր՝*** Բջնի, պարսկերեն, արձանագրություն, Ներքին Թալին/Դաշտադեմ, Հայկ Հակոբյան, իսֆահսալար, Մուհամմադ Թուսի, Հայաստան, Իրան, 1175-1183:

2007 թվականին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ հնագետ Հայկ Հակոբյանի մասնակցությամբ, Բջնիի ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերել էր արաբատառ վիմագիր մի արձանագրություն:

Հ. Հակոբյանի հաղորդմամբ արձանագրությունը պարունակող քարը գտնվել էր ամրոցի մաքրման աշխատանքների ընթացքում՝ միջնաբերդի պեղումների ժամանակ[1]: Արձանագրություն պարունակող քարը այժմ խնամքով պահպանվում է Բջնիի բնակիչներից մեկի տանը: Այն ձևով գրեթե քառակուսի մի քար է: Խոնավության պայմաններում կրակալման հետևանքով քարի մակերեսը և արձանագրությունը սպիտակել են, սակայն տեղ-տեղ երևացող դարչնագույն բացվածքները հուշում են, որ այն տուֆ է: Քարն ունի հետևյալ չափերը՝ 56 սմ (բարձրություն) 45 սմ (լայնություն), և 16 սմ (խորություն):

[1] Հայկ Պիոնի Հակոբյանի անժամանակ մահվան պատճառով հնարավոր չեղավ պարզել արձանագրության հայտնաբերման մանրամասները, իսկ պեղումների մասին հոդվածը դեռևս տպագրության ընթացքում է:

Արձանագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն եղել է ավելի ընդարձակ արաբատառ արձանագրության մաս: Ավա՛ղ, արձանագրության թե՛ վերին, թե՛ ստորին և թե՛ աջ և ձախ հատվածները կորել են:

Արձանագրությունը քանդակված է ռելիեֆային մեծ տառերով, գրատեսակը՝ նասխ, բաղկացած է 5 տողից.

1) ...[كم] ? .....
2) ...سلار محمد طوسي [هفه ا ]...
3) ...[م] سلا ا ندری ... (?)
4)... [كند رحمت] خدا بر همه ...
5) ... [ئه] ما خمس و عين...

Թարգմանությունը հայերեն.

1). . . [քմ]...?
2) ...իսֆահ[սալար] Մուհամմադ Թուսի
3) [...]? իսլամի. . .
4) ...Աստվածն օրհնի բոլորին
5) ... [տարի] հինգ հարյուր և . . . ասուն[2]

Արձանագրության առաջին տողը վնասված է վերին մասում և անընթեռնելի է: Միայն նշմարվում է բառավերջի «հա»-յի կամ «յա» և «քա» «միմ» տառակապակցությունը, ընդ որում «միմը» դեռևս շարունակվում է բացակայող հատվածում:

---

[2] Արձանագրության վերաբերյալ խորհրդակցել ենք բրիտանացի արևելագետ Մանիժեհ Բայանի-Վուլպերտի հետ: Շնորհակալություն ենք հայտնում նաև Հուսիկ Մելքոնյանին, Իգիթ Ղարիբյանին և Արտակ Գնունուն՝ արձանագրության հայտնաբերման հետ կապված տեղեկություններ տրամադրելու համար:

Կարևոր է 2-րդ տողի *իսֆահսալար* կամ պարսկերեն արտասանությամբ *էսֆահսալար* տիտղոսի հաղորդումը, ինչպես նաև անձի անվան՝ Մուհամմադի (Մոհամմադի) և նրա *նիսբայի*՝ անձի որտեղից լինելու, կոնկրետ այս դեպքում՝ Իրանի Թուս քաղաքից ծագելու հանգամանքի հաղորդումը:



Իսֆահսալար/իսփահսալար տիտղոսը, որը տարածված է եղել իրանական քաղաքական-ռազմական և մշակութային ազդեցություն կրող հարստությունների շրջանում, սովորաբար տրվել է զորքի հրամանատարներին[3]: Այս տիտղոսը գործածվել է X դարի վերջերից, հատկապես իրանական հարստությունների աշխուժացման դարաշրջանում, այն կրել են նաև սելջուկյան բազմաթիվ ամիրաներ: Իսֆահ-

[3] **Bosworth C.E., Digby S.**, Ispahsālār, Sipahsālār. The Encyclopedia of Islam, New Edition, Volume IV: Iran–Kha. Leiden and New York: BRILL, 1997, pp. 208–210.

սալարի հետ մեկտեղ օգտագործվել են նաև հաջիբ ալ-հուջջաբ (حاجب الحجاب), հաջիբ ալ-քաբիր (حاجب الكبير) կամ սահիբ ալ-ջայշ (صاحب الجيش) տիտղոսները[4]: Նույն տիտղոսը՝ սպասալար կամ ամիրսպասալար տարբերակով, տարածված է եղել նաև Օրբելյանների և Զաքարյանների շրջանում: Այսպես, օրինակ, Օրբելյաններն էին «սպասալար ամենայն զօրացն և հրամանատար ամենայն աշխարհին Վրաց» մինչև XII դարի վերջը[5]:

Արձանագրության չորրորդ տողից է միայն պարզ դառնում, որ այն գրված է պարսկերենով, քանի որ բոլոր տողերը կարող են թե՛ արաբերեն և թե՛ պարսկերեն լինել, իսկ չորրորդը, որում հաղորդվում է տարեթիվը, ինչպես բոլոր մուսուլմանական արձանագրություններում, սովորաբար արաբերենով է:

Արձանագրության վերջին՝ հինգերորդ տողը տեղեկություն է տալիս դրա տարեթվի վերաբերյալ: Քանի որ աջից եկող առաջին և կամ առաջին և երկրորդ թվականները բացակայում են. դրանք մնացել են ձախ կողմի կոտրված հատվածում, և այն պատճառով, որ արաբերենում տասնավորը հարյուրականի առջև է դրվում, արձանագրության թվագրումը կարող ենք տալ միայն մոտավոր:

Արձանագրությունը որոշակի պատկանում է հիջրայի տոմարի հինգ հարյուրերորդ՝ համապատասխանաբար Գրիգորյան օրացույցի՝ XII դարին: Ինչ վերաբերում է տասնամյակին, ապա տեսականորեն այն կարող է թվագրվել XII դարի քառասուններով, յոթանասուններով և կամ իններորդներով: Բանն այն է, որ պահպանված

---

[4] **Նույն տեղում**:

[5] **Գրիգորյան Գ.Մ.**, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Երևան, 1981, էջ 17: Տե՛ս նաև Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսականիս ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 277:

ين... վերջավորությունը կարող է պատկանել միայն քառասուն اربعين յոթանասուն سبعين կամ իննսուն تسعين թվականներին: Քառասունի դեպքում արձանագրությունը կարելի է թվագրել մոտավորապես 1146 – 1154, յոթանասունի դեպքում՝ 1175-1183, իսկ իննսունականների դեպքում՝ 1194-1203 թվականներով: Սակայն, եթե քանդակված լիներ քառասուն اربعين , ապա ين... -ից աջ վերևում պետք է մնար «ալիֆի» վերին հատվածը, որը չկա: Մեր կարծիքով իննսունի՝ تسعين և յոթանասունի՝ سبعين միջև նախընտրելի է յոթանասունը՝ سبعين քանի որ ين...-ից վերևում դրված է «բա»-ի կետիկը, չնայած որ պետք է դրված է լիներ «բա»-ի տակ, սակայն, հավանաբար, ներքևում տեղ չլինելու պատճառով դրվել է վերևում:

Այսպիսով, մենք հակված ենք արձանագրությունը թվագրելու 1175-1183 թվականների միջև ընկած ժամանակահատվածով:

Բջնին Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի կարևոր հենակետերից էր: Այն բազմիցս ենթարկվել է մուսուլմանական ուժերի հարձակումներին և հանդիսացել ռազմական գործողությունների թատերաբեմ: Այսպես, օրինակ, այդ բերդաքաղաքի մոտ՝ Հրազդան գետի ափին, Բագրատունի Գագիկ Բ թագավորի օրոք (1041-1045 թթ.) Վասակ Պահլավունու որդի Գրիգորի գլխավորությամբ հայոց զորքը հաղթում է Իրանի ներխուժած մուսուլմանական հրոսակներին[6]:

1072 թ. Բջնին անցավ սելջուկ թուրքերի տիրապետության տակ, սակայն 1201 թ. հայ-վրացական զորքերը ա-

---

[6] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 96-97: **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 211:

զատագրեցին բերդաքաղաքը, ինչի շնորհիվ այն անցավ Զաքարյաններին: Հայտնաբերված արձանագրությունը Բջնիում XII դարում մուսուլմանական իշխանությունների կողմից տարածքի գրավման և նրանց ներկայության վկայությունն է :

Ինչ վերաբերում է իսֆահսալար Մուհամմադ/Մոհամմադ Թուսիին, ապա նա հավանաբար եղել է Բջնիի բերդաքաղաքի մուսուլմանական կայազորի կառավարիչը, ում հրահանգով հենց քանդակվել է այս արձանագրությունը: Չնայած այն հանգամանքին, որ արձանագրություն պարունակող քարը, ըստ Հ. Հակոբյանի նախնական տվյալի, հայտնաբերվել է միջնաբերդի ջրհորի կամ ջրատար մի փոսի մեջ, այն պետք է դրված լիներ միջնաբերդի կամ բերդի պատերի մեջ: Քարը հետագայում տեղափոխվել է, ջարդվել երկու կողմերից և օգտագործվել շինարարական նպատակներով:

Բջնիի արձանագրությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված արաբատառ միջնադարյան ոչ տապանագրային բովանդակությամբ նմուշներից է: Այն, որ քարը տապանաքար չէ, վկայում են մուսուլմանական գերեզմանային կոթողների վրա՝ հանգուցյալի անունից անմիջապես առաջ դրվող՝ المرحوم المغفَر «ներված, թողություն ստացած» արտահայտությունների բացակայությունը, քանդակված գրերի չափազանց մեծ լինելը գերեզմանային կոթողի համար, ինչպես նաև գրերի ուղղահայաց դասավորությունը քարի նկատմամբ: Արաբատառ վիմագրերը մեր երկրում մուսուլմանական պետությունների երկարատև տիրապետության հետքերից են, որոնց, սակայն, ճնշող մեծամասնությունը ուշմիջնադարյան տապանաքարեր են:

Որպես շինարարական բնույթի վիմագիր՝ կարող ենք նշել Արագածոտնի Ներքին Թալինի/Դաշտադեմի միջնաբերդի պատին արված Շադդադյանների արձանագրությունը[7], որը թվագրվում է հիջրայի 570 կամ 1174 թվականով, մոտավորապես նույն ժամանակաշրջանով, ինչ Բջնիի արձանագրությունը:

Բջնիի նորահայտ արաբատառ արձանագրությունը վկայում է XII դարում Բջնի բնակավայրի կարևորության մասին: Այն տեղեկություն է հաղորդում, որ XII դարի վերջին տասնամյակներում Բջնի բերդաքաղաքը հենակետ էր այնտեղ հաստատված մուսուլմանական ամիրաների համար:

---

[7] **Хачатрян А.А.**, Нижнеталинская арабская надпись 570/1174 года, ИФЖ, № 4, 1979, стр. 188-198; **Նույնի,** Корпус арабских надписей Армении VIII-XVI вв, Выпуск I, Ереван, 1987, стр. 46.

MIKAYELYAN TIGRAN

# THE NEWLY DISCOVERED PERSIAN INSCRIPTION OF THE XII CENTURY IN THE FORTRESS OF BJNI

***Keywords:*** Bjni, Persian, inscription, Nerkin Talin/Dashtadem, Hayk Hakobyan, Isfahsalar, Muhammad Tusi, Armenia, Iran, 1175-1183.

In 2007 during its excavations within the citadel of Bjni fortress the expedition of the Institute of Archaeology and Ethnology of the National Academy of Sciences of Armenia discovered a stone with an inscription in Arabic characters.

We have read this Persian inscription in five lines sculpted on a stone fragment showing missing parts from all sides. The first line is damaged and is unreadable, the second line mentions the name of some Isfahsalar Muhammad/Mohammad Tusi ...سلار محمد طوسي [اسفه].... The third line is also unclear, except for the guessable word 'Islam'. The fourth line reads 'May the God bless all' in Persian. The fifth line communicates the date, which is ... [ئه] خمس ما و عين... The date is incomplete, however it is definitely the 500th year of Hijra or the XII century AD. To define the decade we need to offer numbers ending with عين.. These are forty اربعين seventy سبعين or ninety تسعين .

From these figures we prefer seventy سبعين because of a few considerations: if it is forty اربعين horizontal line of alif would be visible even if it is damaged; there is a dot over عين... even though 'ba's dot has been put over and not under the letter. سبعين or ninety also has no dots. So by choosing seventy, we can date the inscription to the period of 1175-1183. We can't offer a more precise date as the first number before seventy is lost.

We also believe that this inscription is not an epitaph as there are no Islamic formulas for the deceased put right before the name; also the sculpted characters are too big for a gravestone and in addition they are positioned perpendicularly to the stone unlike Armenia's Muslim gravestones. Therefore, this must be a fragment of an inscription commemorating some construction or maybe a repair or strengthening of the Bjni fortress or citadel executed by the order of Isfahsalar Muhammad Tusi.

Unfortunately the inscription does not communicate the dynasty to which it belongs. However, there is another Arabic inscription of 1174 by Shaddadids carved on a citadel of Nerkin Talin/Dashtadem (Aragatsotn region of Armenia).

The newly discovered Persian inscription is evidence that Muslim military had some presence during the last decades of the XII century in the Armenian fortress of Bjni.

ԿՈՋՄՈՅԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ

# ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

***Բանալի բառեր՝*** Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսի, «Շահնամե», Իրան, Հայաստան, ժառանգություն, Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ:

Յուրաքանչյուր գրականության ազգային դիմագիծ առավել ցայտուն է դրսևորվում, երբ այն ուսումնասիրվում է իր ընթացքի մեջ, հարևան ժողովուրդների հետ էթնոմշակութային, պատմական և տարածաշրջանային ընդհանրությունների, փոխազդեցությունների խորքի վրա՝ ընդգծելով զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Հայ-իրանական գրական կապերի և առնչությունների հետազոտության ուսանելի հոդվածաշար է մեզ թողել ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը՝ «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամե-յում» ու հայ մատենագրության մեջ»[1], որի տեսական եզրահանգումները որոշիչ դեր ունեցան հայ-իրանական գրամշակութային կապերի դասակարգման մեթոդաբանության բնագավառում և մի նոր աստիճանի բարձրացրին հայ համեմատական գրականագիտությունը: Ֆիրդուսու դարը և «Շահնամեի» ստեղծման ազգապահպան-քաղաքական պահի կարևորությունը հիմնավորելուց հետո հեղինակը ներկա-

[1] **Մելիք-Ոհանջանյան Կ.**, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամե»-յում ու հայ մատենագրության մեջ, Ֆիրդուսի, Յերևան, 1934:

յացրել է հայ-պարսկական գրական-մշակութային փոխազդեցությունները լուսաբանող մի քանի կարևոր խնդիր.

Ֆիրդուսու «Շահնամեի» պահլավի գրավոր աղբյուրները հայ մատենագրության մեջ.

Ֆիրդուսու դյուցազներգած Իրանի առասպելական և վիպական մոտիվները Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմություններում.

Իրանի վիպական մոտիվների սակավության պատճառները հայ մատենագրության մեջ և «Շահ-նամե»-ի վիպական մոտիվները հայ գյուղացու հոգևոր աշխարհում:

Հեղինակը Ֆիրդուսու «Շահնամեի» ստեղծման հիմք հանդիսացող երեք հայտնի փահլավական աղբյուրների («Խվաթայնամե», «Քարնամաքե Արդաշիրե Բաբեգան», «Յադգարե Զարերան») մոտիվները համեմատել է Հայաստան մուտք գործած՝ Խորենացու, Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմություններում տեղ գտած դրանց արձագանքների հետ: Պատմահամեմատական մեթոդով էմպիրիկ փաստական հարուստ նյութի հիման վրա (նաև հակադրվելով արևմտյան հետազոտողներին, ովքեր կարծես ժխտում են համեմատական գրականագիտության պատմական կատեգորիա լինելու հանգամանքը) Կ. Մելիք-Օհանջանյանն ապացուցում է, որ ո՛չ Խորենացին, ո՛չ Ագաթանգեղոսը և ո՛չ էլ Բուզանդը ուղղակիորեն ծանոթ չեն եղել պարսից գրավոր փահլավական աղբյուրներին, այլ իրենց տեղեկությունները քաղել են Հայաստանում տարածված դրանց պատումներից:

Ի՞նչ են հետապնդում այս եզրահանգումները: Մի՞թե Կ. Մելիք-Օհանջանյանի նպատակն է հերքել Իրանի առասպելական աշխարհի գոյությունը հայոց մեջ: Անշուշտ, ո՛չ: Նրա նպատակն է՝ նախ ապացուցել, որ «մեր մատենագիրների պատմություններում պատմական ճանաչված որոշ

իրադարձություններ վիպական կամ առասպելական են» և երկրորդ, վիպական մոտիվը, ժամանակի ընթացքում մի երկրից և մի ժողովրդից անցնելով մի այլ երկիր (միգրացիոնիզմ - Ա.Կ.), նոր միջավայրում տարափոխվում է (լատ. transformatio)՝ հարմարվելով այնտեղ գոյություն ունեցող սոցիալ-հասարակական միջավայրին, նոր հայրենիքում միաձուլվում է տեղական մոտիվների հետ, հղկվում է իշխող գաղափարախոսության ոգով, նոր պատկերներով հարստանում, մի խոսքով՝ նոր բովանդակություն և ձև է ստանում: Այսպիսով, «հյուր» մոտիվը այդ ճանապարհով ազգայնանում է (арменизация): Ավելին, Կ. Մելիք-Օհանջանյանն իր գերմանացի ուսուցչի՝ մեծանուն հայագետ Յ. Մարկվարտի ուշադրությունն է հրավիրել հայոց մեջ «ուրույն մշակության ենթարկված» պարսից առասպելական թեմաների և մոտիվների շրջանառման վրա:

Այս կարևոր եզրահանգումն ենք համարում այն առաջադիմականը, որը մինչև օրս արդիական է պահել Կ. Մելիք-Օհանջանյանի նշված հետազոտությունը: Եթե ելնենք վերջին տասնամյակներում գրականագիտության մեջ շրջանառվող այն տեսությունից, որ «գրական առնչություններ» կոչվածը մի գրականության ներթափանցումն է այլ գրական-մշակութային աշխարհ, և այդ ներթափանցումն ունի մի քանի ձև, ապա Կ. Մելիք-Օհանջանյանի վերոհիշյալ դրույթը ժամանակակից եզրույթով կանվանեինք գրական կապերի բարձրագույն ձև՝ սինթեզ:

Դեռևս 1930-ականներին Կ. Մելիք-Օհանջանյանը հաստատել է այսօր արդիական և սկզբունքային այն թեզը, որ ազդեցությունը պասիվ յուրացում չէ, այլ տվյալ ժողովրդի ստեղծագործ մտքի, արժեքային չափանիշների և էսթետիկական գիտակցության մեջ զտված, էթնո-մշակութային

կերտվածքի առանձնահատկություններին հարմարված, նոր որակ:

Պատմահամեմատական մեթոդով հայագետի կատարած վերլուծության արդյունքը եղավ տեսական բնույթ կրող նրա մեկ այլ եզրահանգում. իրանական վիշապաշխարհի պատվաստումը ավատատիրական Հայաստանի, իսկ հետագայում առհասարակ նահապետական կենցաղ և տնտեսություն վարող հայ գյուղացու կյանքում մենք համարում ենք ոչ պատահական: Դեռ ավելին, բնական և սպասելի: Այս վիպական մոտիվները պետք է արձագանք տային երկու երկրներում էլ, որովհետև հարևան ժողովուրդներն իրենց պատմական կյանքում ապրել են քաղաքական և կուլտուրական նույնատիպ գործընթաց, ականատես եղել այնպիսի իրադարձությունների, որոնք իրենց կնիքն են դրել յուրաքանչյուր երկրի և ժողովրդի հետագա հազարամյա կյանքի պատմության վրա (քրիստոնեություն, զրադաշտականություն): Այստեղից պարզ է դառնում, որ դրանք երկու ժողովուրդների վիպական ստեղծագործության մեջ հանդես պետք է բերեին թե՛ վիպական, թե՛ կառուցվածքային, թե՛ մանրամասնությունների ակնբախ նմանություններ, և այդ ամենը իհարկե Իրանում զրադաշտականության, իսկ Հայաստանում՝ քրիստոնեության լուսաբանմամբ[2]:

Եթե վերանանք կոնկրետ էմպիրիկ նյութից, ապա վերջին եզրակացությունը՝ որպես տեսական մեթոդաբանական ուղեցույց, կինչի այսպես. նույնատիպ հասարակարգային ենթահողը և սոցիալ-պատմական պայմանները ստեղծում են նույնատիպ երևույթներ տարբեր ժողովուրդների մոտ: Այս դրույթը խորհրդային գրականագիտության մեջ ավելի ուշ Ա. Վեսելովսկու աշակերտ, ակադեմիկոս Վ. Ժիր-

---

[2] Համմտ. **Մելիք-Ոհանջանյան**, նշվ. աշխ., էջ 71:

մունսկու և նրա հետևորդների կողմից հաստատվեց որպես միջազգային կապերի պատմատիպաբանական ձև:

Կ. Մելիք-Օհանջանյանն իր աշխատության մեջ բանասիրական ճշգրիտ համեմատությունն ուղեկցում է երկու ժողովուրդների կոնկրետ սոցիալ-պատմական պայմանների լուսաբանմամբ՝ յուրաքանչյուր ընդհանրություն վերլուծելով և տեսականորեն փաստարկելով դրանց ընդհանրությունների և փոխառությունների պատմական նախադրյալները: Այսպիսով, հայ-իրանական առնչությունների ուսումնասիրության մեթոդը, կրելով որակական փոփոխություն, փաստագրման բնույթից բարձրացավ գիտական-վերլուծականի, հաստատեց արդի այն թեզը, որ «միջգրական առնչություն» կոչվող երևույթը պատմական կատեգորիա է: Խորհրդային համեմատական գրականագիտության մեծագույն ջատագովներից մեկը՝ Վ. Ժիրմունսկին, գրում է, որ գրականության և բանահյուսության պատմահամեմատական ուսումնասիրությունը տառապել է, իսկ արտասահմանում մինչև օրս տառապում է էական մեթոդաբանական թերությամբ: Այն հակված է սյուժեների ամեն մի նմանություն՝ իրական կամ մտացածին, դիտել որպես այսպես կոչված «ազդեցության» և «փոխազդեցության» արդյունք[3]:

Հայտնի է, որ պարսիկների հետ մերձեցման շրջանները բազմաթիվ են հայոց պատմության մեջ, և որ ամեն մի մերձեցում իր հետ բերել է ազդեցությունների նոր հոսք: Այնուհանդերձ, Կ. Մելիք-Օհանջանյանը փաստում է, որ Իրանի վիպական մոտիվները հայ մատենագրության մեջ սակավ են:

Սա տեսական հարցադրում է, եթե նկատի ունենանք, որ այդ միտումները շարունակվել են մինչև ուշ միջնադար:

---

[3] Հմմտ. **Жирмунский В.М.** Сравнительное литературоведение, Восток Запад, Ленинград, 1979, стр. 375.

Երբ Եվրոպան ձգտում էր դեպի Արևելք, դեպի իրեն օտար քաղաքակրթություն, հայտնաբերում էր նորը, զարմանահրաշը, վերագտնում էր իրեն նոր որակով (Գյոթե, Մոնտեսքյո, Պուշկին ևն), մենք՝ հայերս, որ այդ երկու մշակութային աշխարհների խաչմերուկում էինք, որի համար օտար չէր ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, մեր ձեռագրերում միայն հատուկենտ բեկորներ ենք պահպանել և նպատակաուղղված և լուրջ ուշադրության արժանացրել, օրինակ, պարսից դասականների պոեզիան, հիմնականում 19-20-րդ դդ.:

Քննելով իրանական առասպելական աշխարհի սյուժեների և մոտիվների սակավ մուտքի պատճառները հայոց մեջ՝ Կ. Մելիք-Օհանջանյանը շեշտում է այդ երևույթի քաղաքական և կրոնական բնույթը: Հիմնական պատճառները երկուսն են՝ հայ Արշակունիների տոհմակից պարթևների հարստության կործանումը և Հայաստանում քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն: «Առկա են մեր մատենագիրների կծու հեգնանքը, խարազանող և ոչնչացնող քննադատությունը պարսից Զրադաշտի վարդապետության վերաբերյալ (Եզնիկ, Եղիշե), անարգական և արհամարհական վերաբերմունքն այն ամենին, ինչ կապ ունի Իրանի կուլտուրային, նիստ ու կացին, կենցաղին, աշխարհայեցողությանը, մտքի ու ապրումի, զրույցի ու առասպելի հետ»[4]:

Փաստորեն մեր մատենագիրները չեն թաքցրել, որ հնարավորինս խոչընդոտել են այն ամենի մուտքը Հայոց աշխարհ, ինչը կապ ունի և հիշեցնում է Իրանի կուլտուրան: Շարունակելով Կ. Մելիք-Օհանջանյանի հարցադրումը՝ մենք գալիս ենք այն եզրակացության, որ հետագայում՝ հոգևոր սոցիալական ինստիտուտի թուլացումից հետո, հայոց մեջ աշխարհիկ մտքի վերելքի շրջանում շարունակվող խորթու-

[4] **Մելիք-Ոհանջանյան**, նշվ. աշխ., էջ 111:

թյունն ու զուսպ անդրադարձը իրանական սկզբին, մեր մատենագիրների կողմից ձևավորված հայ ժողովրդի քաղաքական և էսթետիկական գիտակցության արդյունքն էին, որ ժառանգականության և ավանդույթի ուժ էին ստացել: Նույնիսկ 13 դար անց, Խորենացուն նմանակելով, Խաչատուր Ջուղայեցին գրում է. «...ծանեա զստապաճոյճ առասպելաբանութիւնս պարսից, քանզի զբովանդակ գրեալքն ի յայնմ մատեան էին շաղակրատ առասպելք, ստայօդ և ցոփաբան բաջաղանք»[5]:

Հայ-պարսկական հարաբերությունները երկարուձիգ դարերի կտրվածքով բազմերանգ են եղել, այնուհանդերձ անվիճելի է այն թեզը, որ եթե չվերահսկվեին դրանք սոցիալական ինստիտուտների կողմից, և չարգելվեր մահմեդական աշխարհիկ ոգու մուտքը հայոց երկիր, իրանական ոգին հայ մշակույթում առավել ընդգծված կլիներ:

Այսօր, հենվելով բազմահմուտ հետազոտող Կ. Մելիք-Օհանջանյանի, նրա նախորդների և հետևորդների կողմից հայ-իրանական կապերի և առնչությունների հավաքման, փաստագրման, դասակարգման և իր ժամանակի համար նորույթ հանդիսացող եզրահանգումների վրա, մենք հնարավորություն ունենք համակարգելու այդ առնչությունները և ըստ ամենայնի, ժամանակակից մեթոդաբանությամբ և եզրույթներով տարբերակելու գենետիկականը, պատմատիպաբանականը և սինթեզը՝ որպես կապերի բարձրագույն ձև:

---

[5] **Խաչատուր Ջուղայեցիոյ**, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 22:

KOZMOYAN ARMANUSH

# THE CLASSIFICATION OF ARMENIAN-IRANIAN LITERARY RELATIONS IN K. MELIK-OHANJANYAN'S SCIENTIFIC HERITAGE

***Keywords:*** K. Melik-Ohanjanyan, Firdowsi, "Shahnameh", Iran, Armenia, Heritage, Movses Khorenatsi, Agathangelos, Faustus of Byzantium.

In his work, Academician K. Melik-Ohanjanyan classifies the Armenian-Iranian medieval literary connections. The methodological and innovative nature of his work demonstrates that he is one of the first to prove that the mutual influences of motives and images are socially and historically determined. Based on the empirical material of samples of Persian and Armenian medevial literature he demonstrates both genetic and typological community; moreover, these relations sometimes have synthesis character in the long historic timespan.

## «ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ


1. Արևելագիտական ժողովածու, Հատ. I, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու, Հատ. II, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. III, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 227 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. IV, Իրան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 405 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. V, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 449 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VI, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 434 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VII, Քրդագիտություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 383 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VIII, Իրան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 404 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. IX, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 397 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. X, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 329 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XI, Իրան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 345 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XII, Թուրքիա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 276 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIII, Քրդագիտություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 285 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIV, Արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության ժամանակակից պրոբլեմներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 315 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 341 էջ:
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVI, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 270 էջ:
17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVII, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 240 էջ:

18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XVIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 1999, 236 էջ:
19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XIX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2000, 218 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2001, 349 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXI, Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, 405 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2003, 332 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIV, Եր., «Զանգակ-97» հրատ., 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXV, Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, 476 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVI, Եր., «Ասողիկ» հրատ., 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVII, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2009, 272 էջ:
28. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXVIII, Եր., «Զանգակ-97» հրատ., 2011, 352 էջ:
29. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXIX, Եր., «Զանգակ-97» հրատ., 2014, 352 էջ:
30. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXX, Եր., «Գիտություն» հրատ., 2016, 276 էջ:
31. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. XXXI, Եր., «Գիտություն» հրատ., 2018, 248 էջ:

# ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

# THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

# СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

## XXXII/1

Համակարգչային էջադրումը Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 955
Ստորագրված է տպագրության՝ 2.07.2019թ.:
Չափսը՝ 60 x 84 1/16, 21.5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 250 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: